



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 100 2017 ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Մհեր Հակոբյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան Հայաստանի Հանրապետության ատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրոյթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 18.07.2017թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,25 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՆ Է

Դատախազության աշխատողի օրվան նվիրված հանդիսավոր նիստ	3
ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ելույթը.....	3
ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի շնորհավորական ելույթը	7

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ, ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԽՐԱՆՈՒՍԱՆՔՆԵՐ

ՀՀ Նախագահի հրամանագրերով	11
Շնորհավորական ուղերձներ՝ «Օրինականություն» հանդեսի լույսընծայման 20-ամյակի և հորեյանական 100-րդ համարի կապակցությամբ	13
ՀՀ գլխավոր դատախազի ուղերձը	13
Երևանի պետական համալսարանի ռեկտորի ուղերձը	14
ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտորի ուղերձը	15
Հայ-ռուսական համալսարանի ռեկտորի ուղերձը	15
ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի ուղերձը	16
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի ուղերձը	17

ԿՈՒԵԳԻԱՅԻ ԸՆԴԱՑՆՎԱԾ ՆԻՍՏ

ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել կոլեգիայի ընդլայնված նիստ	17
---	----

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պետրոս Մարտիրոսյան Քրեական պատժի նպատակների հիմնարար տեսությունները.....	22
Գրիգոր Ամիրջյան, Գոռ Ալոյան Որոշ նկատառումներ պատիժը ծանրացնող և մեղմացնող հանգամանքների կիրառման վերաբերյալ	30

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռաֆիկ Խանդանյան Դատական վերահսկողությունը իրավունքի գերակայության սկզբունքի համատեքստում.....	37
---	----

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արմենուհի Չիֆլիկյան Զրպարտությունը՝ ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի	43
---	----

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Տիգրան Նաղդալյան ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների վերահսկողական լիազորությունների կատարելագործման հիմնախնդիրները	50
Լիլիթ Մելիքսեթյան Հանրաքվեի սոցիալական ու իրավական բաղադրիչները իրավական մշակույթի պատմության համատեքստում	55

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	61
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	68
--	----

ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱՆ ԵՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ

ՀՀ դատախազության 99-րդ տարեդարձի և դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ հուլիսի 3-ին ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել հանդիսավոր նիստ, որին մասնակցել և շնորհավորական ելույթ է ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:



ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹԸ

«Հարգելի դատախազներ,
Շնորհավորում եմ ձեզ և դատախազության բոլոր աշխատակիցներին մասնագիտական տոնի կապակցությամբ: Ցանկանում եմ, որ ձեր աշխատանքում լինեք հաջողակ և գնա-



հատված: Շարունակեք անձնվիրաբար ծառայել ձեր գործին:

Ձեր գործունեությունն անչափ կարևոր է

պետության և հասարակության համար և նույնչափ պատասխանատու է, քանի որ ձեր որոշումները կարող են մարդու ճակատագիրը փոխել՝ բառիս ամենաուղղակի իմաստով:

Շնորհավորում եմ նաև ձեր ընտանիքի անդամներին: Առանց ձեր ընտանիքների անդամների ամենօրյա աջակցության՝ ձեր հաջողությունները չեն լինի այնպիսին, ինչպիսին կարող են լինել նրանց օժանդակության պայմաններում:

Վեցերորդ գումարման Ազգային ժողովին հասցեագրած իմ ուղերձում ես առաջարկել էի բանաձև, որով պետք է առաջնորդվի բարեխիղճ կոչվելու հավակնող՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր պաշտոնյա, հատկապես՝ իրավապահ համակարգը ներկայացնող պաշտոնյան: Նաև ներկայացրել էի իրավապահ համակարգի նոր ընկալման մասին իմ պատկերացումը:

Ինձ համար իրավապահ համակարգն իրավապաշտպան բնույթ ունի: Բովանդակային առումով ես դրանք հոմանիշներ եմ համարում:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

Եթե ուզում ենք մոտ ապագայում Հայաստանում թեթևացնել իրավունքները պաշտպանողի հոգսերը, ապա մեր ջանքերը պետք է ուղղենք մեկ նպատակի՝ իրավունքը պահպանողի գործունեության մեջ որակական նոր մակարդակի բարձրացնել անձի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը: Դրա գրավականն ուժեղ և պատասխանատվությունից չխուսափող, իրավունքի գերակայության սկզբունքի ներքո աշխատող կուռ և գործակցող իրավապահ համակարգն է:

Այդ համակարգի հենասյուներից մեկը, անշուշտ, դատախազությունն է՝ պատմականորեն ինքնատիպ իր կարգավիճակով: Եվ այդ ինքնատիպությունն առավել հստակ ընդգծվում է սահմանադրական նոր կարգավորումներով. իշխանության եռաթև համակարգից դուրս, բայց միաժամանակ իշխանության բոլոր ճյուղերի հետ առնչվող միասնական կառույց՝ միայն իրեն հատուկ լիազորություններով և ազդեցության ոլորտներով:

Հարգելի գործընկերներ,

Սահմանադրությունը ձեզ վստահել է արդարադատության իրականացմանն անմիջականորեն մասնակցելու, տարբեր մարմինների գործունեությունը հսկելու, որոշակի ոլորտներում պետական կառույցների համար զսպիչ և հակակշիռ լինելու պատասխանատվությունը: Հատկապես մեծ է ձեր դերակատարումը քրեական արդարադատության ոլորտում. մինչդեռ տական վարույթի օրինականության, դատարանում ներկայացվող մեղադրանքի հիմնավորվածության, իսկ երբեմն նաև կայացվող դատական ակտերի արդարացիության վերաբերյալ հանրության մեջ ձևավորվող պատկերացումները պայմանավորված են նաև ձեր գործողություններով: Դա տրամաբանական է: Եթե մեծ է պատասխանատվությունը, ապա մեծ է նաև դրանից ածանցվող հնարավորությունը, իսկ որքան մեծ է հնարավորությունը, նույնքան մեծ են նման հնարավորությունից օգտվողին ներկայացվող պահանջները:

Այս առումով կուզենայի հատուկ ուշադրություն դարձնել ձեր գործառույթների հետ անմիջականորեն կապված մի քանի խնդրահարույց երևույթների վրա, որոնց մի մասն իրավական գործընթացների շրջանակներում քննարկման առարկա են դառնում նույնիսկ

միջազգային դատական ատյաններում: Վստահեմ՝ հասկանում եք, որ նկատի ունեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Խոսքս նախ և առաջ վերաբերում է կալանքների հիմնավորվածությանը:

Կասկածից վեր է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը պետք է հիմնավորված լինի: Սակայն դրա կարևորագույն նախադրյալներից մեկը համապատասխան որակյալ միջնորդության առկայությունն է: Այստեղ է, որ դատախազությունը յուրօրինակ միջանկյալ օղակ պետք է լինի նախաքննական մարմնի և դատարանի միջև՝ երկու հիմնական խնդիր լուծելու միտումով. արգելափակել ակնհայտ անհիմն, իսկ երբեմն՝ միայն օրենքի պարզունակ վերարտադրություն պարունակող միջնորդությունների ներկայացումը դատարան, և միաժամանակ՝ բարձրացնել այն միջնորդությունների որակը, որոնց բավարարման համար իրականում կան թե՛ օբյեկտիվ անհրաժեշտություն և թե՛ բավարար հիմքեր:

Հասկանալի է, որ ես նկատի չունեմ բավարարման քանակը. երբ մեր դատավորները խոսում են այն մասին, որ դատարանները բավարարում են միջնորդությունների 90 տոկոսից ավելին, և դա շատ է, ո՛չ, խոսքը դրա մասին չէ: Կարող է լինել 100 տոկոս բավարարում դատարանի կողմից և չլինել հիմնավորված, և կարող է դատարանի կողմից լինել 100 տոկոս բավարարում ու ամբողջովին հիմնավորված, ինչը, կարծում եմ, կլինի ամենաիրագրելիքը:

Մեր պետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու տեսանկյունից մտահոգիչ է նաև դատարաններում արդար դատաքննության ոչ բոլոր բաղադրիչների լիարժեք պահպանումը: Մասնավորապես՝ դա վերաբերում է մեղադրանքի կողմի առանցքային վկաների՝ հակընդդեմ հարցումն ապահովելուն:

Կարծում եմ՝ դատախազներն այստեղ ևս անելիք ունեն: Այս ճակատում կատարված պատասխանատու և բարեխիղճ աշխատանքը ոչ միայն երաշխավորում է անձի հիմնարար իրավունքների իրացումը, այլև ապահովում է յուրաքանչյուր քրեական գործի քննության և հանգուցալուծման արդարացիությունը:

Քրեական գործերի քննության տևականության կամ ձգձգումների տեսանկյունից շա-

րունակում է արդիական մնալ հետախուզվող անձանց հայտնաբերման խնդիրը: Համոզված եմ, որ իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում դատախազությունը պետք է առավել մեծ ուշադրություն դարձնի նմանատիպ գործերին: Քննությունից թաքնվող մեղադրյալների հայտնաբերման հարցում պետք է սերտ և ավելի արդյունավետ համագործակցել քննչական մարմինների և հատկապես ոստիկանության հետ:

Հարգելի գործընկերներ,

Այս ամենով հանդերձ այսօր կարող ենք փաստել, որ մեր դատախազության գործունեության մեջ զգալի առաջընթաց կա: Գնալով՝ դատախազները դառնում են էլ ավելի պատրաստված և էլ ավելի պատասխանատու: Դատախազների նման բարեխիղճ աշխատանքը տալիս է իր դրական արդյունքը: Համոզված եմ, որ դա նկատում են ինչպես ձեզ հետ աշխատող պաշտոնատար անձինք, այնպես էլ մեր հանրությունը: Դա նկատելի է նաև դատախազության տարեկան հաղորդումներում:

Միաժամանակ՝ տարեկան հաղորդումներում տեսնում եմ որոշ խնդիրների մասին մտահոգություններ: Բնական է, որ պետական մյուս մարմինների աշխատանքն էլ իր դրական կամ բացասական ազդեցությունն է թողնում դատախազության գործունեության արդյունքների վրա: Սակայն դուք չեք կարող պասիվ դիտորդներ լինել և սահմանափակվել՝ այս կամ այն բնագավառում առկա խնդիրներն արձանագրելով:

Խնդիրների մասին բարձրաձայնելը բավարար չէ: Դա խնդրի լուծում չէ: Խնդրի վերհանումը պետք է մշտապես ուղեկցվի՝ լուծելու միջոցներ ձեռնարկելով:

Այս պարզ կանոնը միշտ պետք է կիրառվի ձեր առօրյա աշխատանքում: Եթե ղեկավարին պաշտոնյան ներկայացնում է խնդիրը և չի տալիս դրա հնարավոր լուծումը, ավելի լավ կլինի՝ լուծման տարբերակները, իսկ լուծումների մասին մտածում է միայն ղեկավարը, ապա նշանակում է, որ նրանք երկուսն էլ արդյունավետ չեն օգտագործում իրենց ժամանակն ու հնարավորությունները:

Դա անթույլատրելի աշխատառճ է: Մենք նման գործելակերպով առաջնորդվելու ավելորդ ժամանակ չունենք: Կարծում եմ, որ օրենսդրական լիազորությունների շրջանակներում

դուք ունեք բավարար գործիքակազմ թե՛ բացահայտված խնդիրները լուծելու, թե՛ դրանց լուծման համար անհրաժեշտ առաջարկություններ ներկայացնելու համար:

Հակառակ գործելակերպը բերում է անտարբերության. անտարբերություն, որը պարտ հող է ստեղծում չարաշահումների, կոռուպցիոն երևույթների և, ի վերջո՝ անարդարության համար: Ես արդեն առիթ եմ ունեցել ասելու, որ անարդարությունը մեր թիվ մեկ թշնամին է, և մենք պատերազմ ենք հայտարարել անարդարությանը: Այդ պատերազմում մենք պարտավոր ենք հաղթել՝ չեզոքացնելով անտարբերության ամեն մի դրսևորում, վերացնելով կոռուպցիոն ցանկացած երևույթ:

Դուք ընկալելի, վստահելի և հուսալի իրավապահ համակարգ ունենալու գլխավոր պատասխանատուներից եք: Ենթադրվում է, որ ձեր մասնագիտական որակները և արժեքային համակարգն ունակ են երաշխավորելու դա: Իսկ եթե ձեր մեջ կան մարդիկ, որոնց որակներն ու արժեքները տարբերվող են, ապա կամ նրանք պետք է հեռանան, կամ ինքներդ պետք է վճռականորեն հեռացնեք նրանց: Երրորդ տարբերակը նույնպես կա, սակայն հեռանկարային չէ և ցավոտ է, ընդ որում՝ ոչ միայն կամ ոչ այնքան նման «անհատների», որքան տվյալ համակարգի համար:

Անարդար դատախազը վնասաբեր է թե՛ դատախազության, թե՛ այն կառույցի համար, որը դատախազությանը վերապահված լիազորությունների ուժով նրա ազդեցության գոտում է: Այս իմաստով՝ անարդարության դեմ դատախազության պայքարը երկճակատ է: Եվ դժվար է ասել, թե՛ որ ճակատում դատախազի անհաջողությունն ավելի վնասաբեր կլինի: Ուստի միշտ պետք է զգոն լինեք: Ձեր զգոնության թուլացումը թուլացնելու է իրավապաշտպան ողջ համակարգը:

Հարգելի գործընկերներ,

Մեր երկիրը մտել է բեկումնային մի նոր ժամանակաշրջան: Միասին կառուցելու ենք պետական կառավարման նոր կարգը: Ապրիլյան ընտրություններից առաջ մենք խնդիր էինք դրել ցույց տալ ինքներս մեզ, ինչու ոչ՝ նաև միջազգային կառույցներին, որ վճռական ենք կազմակերպելու լավագույն չափանիշներին համապատասխանող ընտրություններ:

Արդեն կարելի է փաստել, որ դա մեզ հաջողվեց: Անշուշտ, կգտնվեն մարդիկ, որ այլ կարծիք կունենան, բայց որևէ մեկը չի կարող հերքել, որ այդ ընտրությունները վկայեցին Հայաստանում առնվազն ժողովրդավարության և պետականաշինության առաջընթացի փաստի մասին: Դրանք նաև վկայեցին, որ պետությունն ի վիճակի է արձագանքելու նման գործընթացներին ուղեկցող ցանկացած իրավախախտման:

Այստեղ պետք է ընդգծեմ դատախազության կարևոր դերակատարումը: Դատախազության ակտիվ մասնակցությամբ իրավապահ համակարգը ցույց տվեց, որ ունակ է առկա ռեսուրսների ճիշտ կիրառմամբ քննարկելու ենթադրյալ ընտրախախտումների վերաբերյալ բոլոր ահազանգերը: Ձեզ հաջողվեց պատասխանատվությամբ համակարգել իրավապահ մարմինների առջև դրված խնդիրների լուծման գործընթացը, հավուր պատշաճի վերլուծել առկա տեղեկատվությունը և ժամանակին արձագանքել յուրաքանչյուր ահազանգի՝ նույնիսկ, եթե վերջինս առերևույթ որևէ իրավախախտման լուրջ նշաններ չէր պարունակում:

Անկասկած՝ սա ձեռքբերում է, բայց դատախազությունը դեռ շատ անելիքներ ունի: Ումանք կարող են մտածել, որ փոփոխված Սահմանադրությամբ դատախազության դերը չի փոխվում, սակայն ես այլ կարծիք ունեմ:

Վստահ եմ, որ կառավարման նոր համակարգի և պետական իշխանության մարմինների նոր հարաբերակցության պայմաններում փոխվում է նաև դատախազության դերակատարումը, որն ավելի մեծ կամ փոքր չէ, ավելի ուժեղ կամ թույլ չէ, այլ պարզապես յուրահատուկ է: Եվ հենց այդ յուրահատկությունը պահպանելով՝ դուք պետք է հավատ ու վստահություն ներշնչեք նաև մյուսներին:

Սահմանադրությունը ձեզ տվել է անհրաժեշտ և բավարար բոլոր գործիքները՝ էլ ավելի բարձրացնելու դատախազության ու դատախազի նկատմամբ հանրային վստահությունը: Կարծում եմ, որ Սահմանադրության փոփոխությունների ներքո մշակվող Դատախազության մասին նոր օրենքը լրացուցիչ երաշխիքներ կտա ձեր առաքելությունն առավել արդյունավետ իրականացնելու համար: Նաև կարծում եմ, որ ձեր հաջողություններն ու անհաջողությունները մեծապես պայմանավորվելու են ոչ

այնքան տվյալ օրենքի լուծումներով, որքան ձեր առաքելության հանդեպ դրսևորած մոտեցմամբ և ձեր աշխատանքի որակով:

Գիտեմ, որ քիչ խնդիրներ չունեք: Միաժամանակ՝ ուզում եմ իմանաք, որ պետությունն աջակցելու է ձեզ այդ խնդիրների լուծման գործում, փորձելու է ընկալելի և տեսանելի դարձնել դատախազի սոցիալական դերը: Այդ նպատակին հասնելու համար պետք է վստահ լինենք, որ դատախազությունում իշխում են բարեխղճությունը, ազնվությունը և պրոֆեսիոնալիզմը:

Առանցքային այս որակներն ակնկալելու համար, բնականաբար, պետք է ապահովված լինեն դատախազի սոցիալական երաշխիքները: Կարծում եմ՝ վերջերս ընդունված օրենքով մեզ հաջողվեց լուծել դատախազներից շատերին մտահոգող կենսաթոշակների հարցը, ինչը որոշակիորեն թեթևացնում է համակարգում առկա սոցիալական խնդիրները: Դա նաև մասամբ լուծում է կադրային խնդիրը: Փորձառու և արդար կադրերը մեզ համար չափազանց թանկ են:

Անշուշտ, մենք չենք բավարարվելու ձեռքբերումներով և փորձելու ենք լավագույնս լուծել երկրի կայունության և անվտանգության համար անհրաժեշտ նաև մյուս խնդիրները: Ես վստահ եմ, որ 2018 թվականի պետական բյուջեի հաստատումով դուք տեսնելու եք նաև վերաբերմունքի որոշակի փոփոխություն դեպի դրականը:

Հարգելի գործընկերներ,

Կրկին շնորհավորում եմ բոլորիդ Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ: Շնորհավորում եմ նաև ձեր այն գործընկերներին, ովքեր արժանացել են պետության բարձր պարգևների և բարձրագույն դասային աստիճանների: Վստահ եմ, որ արժանավորները մշտապես գնահատված են լինելու մեր պետության կողմից:

Առողջություն և հաջողություն եմ մաղթում ձեզ: Շնորհակալ եմ կատարած աշխատանքի համար, առավել շնորհակալ եմ այն աշխատանքի համար, որ ապագայում կատարելու եք: Ես ուղղակի խնդրում եմ՝ սատարեք Հայաստանի Հանրապետության կառավարությանը, սատարեք ինձ՝ մեր երկրից արմատախիլ անելու բոլոր հոռի երևույթները, որոնք պատժելի են օրենսդրությամբ», – ասել է Հանրապետության Նախագահը:



ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹԸ

«Հայաստանի Հանրապետության դատախազությունը պետական մարմինների համակարգում իր ուրույն տեղով մշտապես կարևոր ներդրում է ունեցել պետական-իրավական համակարգի կայուն և բնականոն գործունեության ապահովման, զարգացման և կատարելագործման մեջ: Դատախազության՝ որպես պետական մարմնի ձևավորման հիմքը կառավարման մարմինների նկատմամբ վերահսկողությունը և հանցավորության դեմ պայքարն ու ժողովրդի անհրաժեշտությունն էր, և այդ հայեցակարգային տրամաբանությանը համապատասխան՝ Հայաստանի դատախազությունն իր գործունեության բոլոր փուլերում հանդիսացել է երկրում օրինականության և իրավակարգի ապահովման պատասխանատուն:

Հայաստանի անկախացումից հետո սկիզբ առած իրավական բարեփոխումները հիմք դրեցին դատախազության համակարգի կազմակերպական և ֆունկցիոնալ զարգացման նոր ընթացքին՝ ապահովելով սահուն անցում դեպի գործունեության ուղղությունների նոր շրջանակ և դրանց արդյունքների վերաբերյալ նոր որակական պահանջներ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ձևակերպեց դատախազության նոր կարգավիճակը, վերաիմաստավորեց Հայաստանի Հանրապետության դատախազության՝ որպես իրավապահ մարմնի դերը՝ նրա գործունեությունն ուղղելով հատկապես

պես հանցավորության դեմ նորովի պայքարին ու քրեադատավարական գործունեությանը: Դատախազության մասին Հայաստանի Հանրապետության երկու օրենքն իրենց գործողության մեկական տասնամյակում, ժամանակին համահունչ, ապահովել են դատախազության առջև դրված խնդիրների իրականացումը՝ միաժամանակ փորձառական առիթ ստեղծելով համակարգի գործունեության իրավական հիմքերի հետագա զարգացման համար:

Իրողություն դարձած սահմանադրական բարեփոխումները, ի դեմս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխությունների, դատախազության համակարգի հետագա զարգացման և գործունեության շարունակական կատարելագործման պայմաններ են ձևավորել: Դրանք ի վերջո պետական իշխանության իրականացման՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի համատեքստում հստակեցրել են Հայաստանի Հանրապետության դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակը:

Շարունակվող իրավական բարեփոխումների շրջանակում ընդունվելիք «Դատախազության մասին» նոր օրենքը, դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխան, վստահաբար անհրաժեշտ գործիքակազմ է ապահովելու մեր հանրության

պահանջներով, Ձեր հոչակած հրամայականներով դատախազության ստանձնած խնդիրները լուծելու համար:

1. Այդ խնդիրներից առաջինը քրեադատավարական գործունեության միասնականության, կանխատեսելիության և որոշակիության ապահովումն է: Մարդու իրավունքներն ու օրինական շահերը շոշափող այդ գործունեության շնորհիվ կայացվող որոշումների տարբերակվածությունն ու մարդուն իր վարքագծի անթույլատրելիությունը որջամտորեն գիտակցելու հնարավորություն չտվող դրանց անկանխատեսելիությունն անհամատեղելի են օրենքի առջև ընդհանուր հավասարության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների հետ, որոնք հանգեցնում են այդ գործունեության անարդարացիության մասին հասարակական ընկալման: Դատախազությունը, հսկողություն իրականացնելով պետական տարբեր գերատեսչություններում գործող մինչդատական վարույթ իրականացնող մարմինների գործունեության նկատմամբ, իր լիազորությունների ծավալով, դրանք իրականացնելու շնորհիվ անհրաժեշտ ամբողջական տեղեկատվություն տիրապետելու և դրանց համադրված վերլուծություն կատարելու հնարավորությամբ, անհրաժեշտաբար հանձնառու է նաև քրեական արդարադատության ոլորտում իրավական խնդիրների լուծման միասնականության և կանխատեսելիության ապահովման գործում:

Այսօր ակտիվորեն իրականացվում են այդ ուղղությամբ վճռական քայլեր, ոլորտի առանձին պատասխանատուների դիրքորոշումների համակողմանի վերլուծության և քննարկումների արդյունքով մշակվում են գործնական վիճելի հարցերի միասնական լուծումներ՝ իրավունքի զարգացման ընդհանուր միտումների, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականներում և բանաձևերում առաջադրված լուծումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ ինչպես Հայաստանին վերաբերող, այնպես էլ այլ գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ այդպիսով էապես նպաստելով նաև այդ դիրքորոշումների և մոտեցումների գործնականում արագ տարածմանն ու անմիջական կիրառությանը:

2. Դատախազության գործունեության գլխավոր առաջնահերթություններից մյուսը եղել և մնում է կոռուպցիայի դեմ պայքարը: Այն, որ կոռուպցիան անհամատեղելի է բոլոր ոլորտներում պետական գործունեության հիմքը կազմող այնպիսի բարձրագույն արժեքների հետ, ինչպիսիք են անաչառությունը, արդարությունը, իրավահավասարությունը և իրավունքների պաշտպանության երաշխավորումը, այն, որ կոռուպցիան, ծավալներից կամ պետական ու ոչ պետական տարբեր ոլորտներում տեղակայումից անկախ, ստվերում է պետության կայուն զարգացմանն ուղղված բարեխիղճ աշխատանքը, առաջացնում անվստահություն պետական բոլոր կառույցների նկատմամբ և անարդարության խոր հասարակական ընկալում, բավարար հրամայական են այդ չարիքի դեմ պայքարը բացարձակացնելու համար:

Հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները ենթադրում են այդ երևույթի դեմ համակարգված և մասնագիտացված պայքար, և դատախազությունն իրավապահ գործունեության ոլորտում իր բացառիկ լիազորություններով առաջինն է կրում այդ պայքարի հիմնական ծանրությունը:

Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում տարեցտարի ավելացող հաջողությունները թեև տեսանելի են, սակայն անելիքներ դեռ շատ կան: Ընդ որում՝ այդ պայքարում դատախազության որդեգրած մոտեցումներն առաջին հերթին ուղղված են բացառելու կոռուպցիոն երևույթները դատախազական գործունեության կամ դրան հարող ոլորտներում:

Քաջ գիտակցում ենք, որ այդ երևույթի դեմ արդյունավետ, արդարացի և հանրության կողմից ընկալելի պայքարի առաջամարտիկը կոչվելու առաջին գրավականը յուրաքանչյուր դատախազի վարքագծի, գործունեության հանրագումարում դատախազական համակարգի հստակ և շիտակ բարոյական նկարագրի երաշխավորումն է, որն ապահովում է այդ պայքարի նախ բարոյական, ապա իրավական հիմքն ու ուղղվածությունը: Յուրաքանչյուրիս պարտքն է արդարացնել և ամրապնդել դատախազության ստանձնած դերն այդ պայքարում, կասկածի տակ չընել մեր և մեր գործընկերների հեղինակությունը՝ առաջնորդվելով այն

գիտակցմամբ, որ հանցավորության դեմ պայքարի, այդ թվում՝ քրեադատավարական գործունեության ոլորտում կոռուպցիոն երևույթները էապես վնասում են մարդու իրավունքներին, հասարակության և պետության շահերին, չեզոքացնում են տարիների կատարված աշխատանքն ու հեղինակազրկում ողջ իրավապահ համակարգը:

3. Դատախազության գործունեության մեջ հաջորդ առաջնահերթությունը հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձ-

րացումն է: Հանցավորության համընդհանուր որակական և քանակական փոփոխությունները, որոնք արտահայտվում են առանձին հանցատեսակների քանակական աճով, կազմակերպվածության աստիճանի բարձրացմամբ, հանցավոր գործունեության եղանակների և միջոցների կատարելագործմամբ՝ մեր ամենօրյա հետևողական աշխատանքի ու ստեղծագործական մոտեցումների հրամայականն են կանխորոշում: Առանձին հանցատեսակների նաև անդրազգային տարածումը լուրջ սպառնալիք է ցան-



կացած պետության անվտանգությանը: Հանցավորության գրեթե բոլոր տեսակների կրիմինոլոգիական և քրեաիրավական ուսումնասիրությունները վկայում են, որ դրանց դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված որակական փոփոխություններն անվիճելի անհրաժեշտություն են: Հանցավորության դեմ պայքարը պետք է բավարարի դրա արդյունավետության համար էական նշանակություն ունեցող համակարգվածության պահանջը՝ հիմնված լինելով հանցավորության վիճակի, կառուցվածքի և շարժընթացի վերաբերյալ տվյալների անհրաժեշտ վերլուծությունների վրա:

Իր կարևորությամբ նշվածի հետ զուգահեռաբար ընդգծման է արժանի քրեական գործերի արդարացի քննության պահանջի անվերապահ ապահովման խնդիրը: Այս գործառույթի հետևողական իրացումը պետք է ապահովի քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ և ողջամիտ

հավասարակշռումը՝ իր հիմքում ունենալով այն գիտակցումը, որ հանցավորության՝ որպես անձի, հասարակության և պետության նկատմամբ ոսնձգող երևույթի դեմ պայքարը պետք է կառուցված լինի օրինականության սկզբունքի վրա:

Ընդ որում՝ այս առումով դատախազության առաքելությունն առանձնահատուկ է, որն արտահայտվում է, մի կողմից, հանցագործության լիարժեք բացահայտման, մեղավոր բոլոր անձանց մերկացման, նրանց արդարացի պատասխանատվության ապահովման, մյուս կողմից՝ քրեական վարույթում ներգրավված յուրաքանչյուր մասնավոր շահ հետապնդող անձի դատավարական իրավունքների երաշխավորման միաժամանակյա պատասխանատվությամբ:

4. Ինչպես ցանկացած ժողովրդավարական պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթ խնդիր է նաև հանրությանն օբյեկտիվ, լիարժեք տեղեկատվության ապահովումը մեր գործունեու-

թյանն առնչվող հարցերով: Այլ խոսքով՝ օրենքով թույլատրելի հրապարակայնության ապահովմամբ հանրությանը հասանելի ենք դարձնելու քրեական հետապնդման ոլորտում կատարվող աշխատանքը: Բաց շփումների շնորհիվ ապահովվելու ենք բարդ, դժվարին, պատասխանատու, երբեմն անմիջական վտանգներով ուղեկցվող իր գործը հանցանքի նկատմամբ աներեր անհանդուրժողականությամբ շարունակելու՝ դատախազի, նաև քրեական հետապնդման մյուս մարմինների մեր գործընկերների պատրաստակամության՝ հանրության լայն զանգվածների կողմից ընկալումը, դրանց նկատմամբ հանրային վստահության և հոգատարության բարձր մակարդակը:

Դատախազության գործունեության արդյունավետության կապակցությամբ բարձր ակնկալիքները և հասարակության արդարացի պահանջկոտությունը պայմանավորված են դատա-

խազության առջև դրված խնդիրներով և դրանք լուծելու համար նրա սահմանադրաիրավական կարգավիճակով: Այդ կարգավիճակի գործնական իրացումն ուղղված է լինելու բացառապես օրինականության ամրապնդմանը, մարդու իրավունքների, հասարակության և պետության շահերի պաշտպանությանը, հասարակական վստահության ամրապնդմանը:

Կրկին շնորհավորելով իմ բոլոր գործընկերներին՝ մաղթում եմ քաջառողջություն, ընտանեկան խաղաղություն ու երջանկություն, բեղմնավոր, արդյունավետ և հպարտության ապրումներով աշխատանք՝ ի նպաստ մեր պետության ու ժողովրդի:

Միաժամանակ ցանկանում եմ վստահեցնել, որ դատախազական համակարգը վճռական է և ջանք չի խնայի մեր առջև դրված պատասխանատու խնդիրները պատվով կատարելու համար»:

«Հ գլխավոր դատախազը դատախազության հիմնադրման 99-րդ տարեդարձի և Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ Պետրիկ Թորոսյանի հուշաքարի մոտ ծաղկեպսակ է տեղադրել:



**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐՈՎ
ՊԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ԵՎ
ՇՆՈՐՀՎԵԼ ԵՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ
Հ.Զ. ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ո ռ ո շ ու մ ե մ.

Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Հայկ Զիվանի ԱՍԼԱՆՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. հունիսի 29
Երևան
ՆՀ-501-Ա



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ
Ս.Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ո ռ ո շ ու մ ե մ.

Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Սիսակ Ժորժիկի ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. հունիսի 29
Երևան
ՆՀ-499-Ա

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ
Գ.Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՄԵԴԱԼՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ո ր ո շ ու մ ե մ.

Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Գևորգ Սուրենի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ պարգևատրել Մխիթար Գոշի մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. հունիսի 29
Երևան
ՆՀ-502-Ա



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ
Ա.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՄԵԴԱԼՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ո ր ո շ ու մ ե մ.

Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Արտակ Գազիկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ պարգևատրել Մխիթար Գոշի մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. հունիսի 29
Երևան
ՆՀ-500-Ա

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

Նիստի ընթացքում ՀՀ ԱԺ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ ԱԱԾ տնօրենի, ՀՀ ոստիկանության պետի, ԱԻ նախարարի, ՀՔԾ պետի, ՀՀ ՔԿ նախագահի կողմից Դատախազության 99-րդ տարեդարձի և Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազին և համակարգի մի խումբ աշխատակիցների շնորհվել են գերապետական մեդալներ, պարգևներ և հուշանվերներ:

ՀՀ գլխավոր դատախազն իր հերթին պարգևներ և շնորհակալագրեր է հանձնել դատախազության համակարգի աշխատակիցներին:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ` «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՂԵՍԻ ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԵՎ ՀՈՔԵԼՅԱՆԱԿԱՆ 100-ՐԴ ՀԱՄԱՐԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ



ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ Ա. ԴՎԱԹՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

ԱՐԹՈՒՐ ԴՎԱԹՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու, արդարադատության առաջին դասի խորհրդական

«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի լույսընծայման 20-րդ տարին թևակոխելու և հոբելյանական 100-րդ համարի լույսընծայման կապակցությամբ ի սրտե ցանկանում եմ իմ և ՀՀ դատախազության կոլեգիայի անդամների անունից շնորհավորանքի խոսքեր հղել «Օրինականություն» հանդեսի խմբագրական խորհրդի անդամներին:

Այս քսան տարիների ընթացքում դուք ջանք չեք խնայել՝ հասարակությանը հաղորդակից դարձնելու հայ իրավական մտքի ձեռքբերումներին: Հանդեսի խորը տեսական և փորձագիտական վերլուծությունները, եզրակացությունները, կանխատեսումները և գործնական առաջարկությունները նպաստում են իրավագիտության մեջ բարձր չափանիշների ձևավորմանը: Ձեզ հաջողվել է ապահովել հին և նոր սերունդների գիտական հետաքրքրությունների հավասարակշռվածությունը՝ դրանով իսկ ձևավորելով հանդեսի նկատմամբ հետաքրքրություն ինչպես տեսաբանների, այնպես էլ իրավակիրառողների և պարզապես ընթերցողների շրջանում:

Համոզված եմ, որ «Օրինականությունը» ծառայում է հանցավորության դեմ պայքարում ծագող նոր հիմնախնդիրների և մարտահրավերների գործում տեսական և գործնական արդի լուծումներ առաջարկելու նպատակին: Հանդեսում հրապարակելով բարձրորակ հոդվածներ՝ ոչ միայն ընթերցողին եք փոխանցում

տարբեր ոլորտներում իրավագիտական մտքի նվաճումները, այլև դրանով ձևավորում եք նոր իրավական մշակույթ, ինչին, անկասկած, նպաստում է այն փաստը, որ խմբագրական խորհրդի կազմում մշտապես ընդգրկված են եղել, այսօր էլ շարունակում են լինել հանրապետության անվանի իրավագետներ և փորձառու մասնագետներ: Ձեր արհեստավարժության ու անաչառ գնահատման շնորհիվ՝ հանդեսում ներկայացվում են գիտական բարձր արժեք ունեցող աշխատանքներ, ինչն «Օրինականության» բարձր վարկանիշի առհավատչյան է:

Վերհիշելով հանդեսի անցած 20-ամյա ուղին՝ իմ հարգանքի տուրքն եմ ուզում մատուցել հանդեսի հիմնադիր, երջանկահիշատակ նախկին ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանին, նախկին գլխավոր խմբագիրներին: Անցնող տարիների ընթացքում «Օրինականություն» հանդեսը, նվաճելով առաջատար դիրքեր, ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից 1999 թվականից ընդգրկվել է թեկնածուական, իսկ 2012 թվականից՝ դոկտորական ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Ցանկանում եմ հանդեսին նոր գաղափարներ, հետաքրքիր, արհեստավարժ հեղինակների հարահոսություն և շնորհակալ ընթերցողներ:

Հարգանքով՝ Ձեր հավատարիմ ընթերցող, ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյան:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԻՐԵՆՅ՝ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐՆ ԵՆ ՀՂԵԼ ՆԱԵՎ.



ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հարգարժան պարոն Դավթյան, Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ռեկտորատի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ, ՀՀ դատախազության ողջ անձնակազմին և «Օրինականություն» հանդեսի խմբագրակազմին՝ հանդեսի հիմնադրման 20-ամյակի և հոբելյանական 100-րդ համարի լույսընծայման կապակցությամբ:

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսն անցել է կայացման բարդ ու երկար ճանապարհ և այսօր ընթերցողին է ներկայանում մեր հանրապետության իրավական համակարգի տարբեր ոլորտներում առկա իրավական հիմնախնդիրները, դրանց կարգավորման տեսական ու գործնական առաջարկությունները գիտականորեն մշակող ու ձևակերպող արժեքավոր հոդվածներով: Այս հանգամանքը խիստ կարևոր է մեր երկրի՝ կատարելագործման փուլում գտնվող իրավակարգին ուղղված քաղաքականության գիտատեսական հիմքերն ապահովելու առումով:

Հայաստանում այսօր լույս են տեսնում բազմաթիվ գիտական պարբերականներ, որոնց մի զգալի մասը հաճախ կապ չունի գիտության հետ: Այս տեսանկյունից «Օրինականություն» հանդեսը՝ տպագրվող հոդվածների գիտական բարձր որակով, խմբագրակազմի անդամների բարձր հեղինակությամբ ու տպագրվող մասնագետների ճանաչվածությամբ, իրավագիտության ոլորտի նշանոտ սահմանող և ճաշակ թելադրող հրատարակություններից է: Հանդեսի այս նշանակալի տարեդարձի առթիվ ցանկանում եմ գոհունակություն հայտնել առ այն, որ տպագրվող հեղինակների շարքում շատ հաճախ ենք հանդիպում Երևանի պետական համալսարանի դասախոսներին ու ասպիրանտներին: Ցանկանում եմ նաև շնորհակալության խոսք ու զգացում ուղղել բոլոր այն անհատներին, ովքեր մեծ ավանդ են ունեցել և շարունակում են ունենալ հանդեսի ստեղծման, կայացման ու աշխատանքների հաջող ընթացքի մեջ՝ առաջին հերթին հիշատակելով լուսահոգի Հենրիկ Խաչատրյանի բարի անունը:



ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, հրավաքանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հարգելի պարոն Դավթյան, Արդարադատության ակադեմիայի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ «Օրինականություն» հանդեսի 100-րդ հոբելյանական համարի լույսընծայման կապակցությամբ: Խորհրդանշական է, որ այդ համարը հրատարակվում է հանդեսի հիմնադրման 20-ամյակի տարում՝ դառնալով նրա տարեգրության մի յուրօրինակ ու գեղեցիկ էջ:

Հանրահայտ է հանդեսի դերը մեր երկրում օրինականության և արդարության սկզբունքների կենսագործման ու ամրապնդման, համակարգում առկա հիմնախնդիրների բացահայտման և դրանց հաղթահարման ուղիների որոնումների գործում՝ դառնալով մասնագիտա-

կան քննարկումների հարթակ, հրապարակային խոսքի ամբիոն: Իր գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներով հանդեսը դարձել է Արդարադատության ակադեմիայի արդյունավետ գործընկերը:

Համոզված եմ, որ իր սկզբունքայնությամբ և մասնագիտական պատվախնդրությամբ հանդեսն այսուհետ ևս կնպաստի մեր հրավակարգի առջև ծառայած բարդ հիմնախնդիրների լուծմանը, մեր գործընկերային հարաբերությունների խորացմանը:

Հանդեսի ողջ խմբագրակազմին մաղթում եմ նոր ձեռքբերումներ, առողջություն և երջանկություն:



ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Ինֆորմատիկա և միջազգային ակադեմիայի իսկական անդամ, ՀՀ նախկին վարչապետ

Սիրելի բարեկամներ, Իմ և մեր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անունից սիրով շնորհավորում եմ «Օրինականություն» ամսագրի հրապարակման 20-ամյակի և հոբելյանական 100-րդ համարի լույսընծայման կապակցությամբ:

Մեր երկրի և պետության հաջող ընթացքը

մեծապես պայմանավորված է իրավունքի գերակայությամբ և օրինականության հաստատմամբ:

Հանրային կյանքի բոլոր ոլորտներում օրենքի նկատմամբ մինչև անգամ պաշտամունքի աստիճանի դրսևորում է հարկավոր իրեն պատասխանատու քաղաքացի համարող յու-

րաքանցյուր անձի կողմից: Նույնը՝ իրավաբանական անձերի համատեքստում: Միայն նման դրսևորման պարագայում է հնարավոր երջանիկ հասարակության կերտումը:

Պետք է փաստենք սակայն, որ մեզ այնքան էլ հեշտ չի տրվում նման՝ առաջին հայացքից պարզ և ընկալելի վերափոխումը. այնուամենայնիվ, մեզանում առկա բազմաթիվ բարքեր սերվել են ոչ այնքան վաղ ժամանակներից, երբ օրենքի շրջանցումը, օրենքի նկատմամբ կամայական վերաբերմունքը գրեթե նույնականացված էին առաքինության հետ:

Բայց անհրաժեշտ է փոխվել, ամենուրեք քարոզել օրենքի նկատմամբ պատկառանքը, օրինականությունն անշեղորեն դարձնել մեր գոյության ամենակարևոր կանոններից մեկը: Միայն այդ դեպքում մենք կկերտենք իսկապես Արդար հասարակարգ: Իսկ Արդարության պահանջն այսօր, երևի թե, առաջնայիններից է:

Անցնող տարիների ընթացքում «Օրինա-

կանություն» հանդեսի վաստակած վարկանիշի արտացոլումն է ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար գիտական պարբերականների ցանկում ընդգրկումը:

Հանդեսում տպագրվող խոր իրավատեսագիտական փորձագիտական վերլուծությունները, գործնական առաջարկությունները նպաստում են իրավագիտության մեջ բարձր չափանիշների ձևավորմանը: Մեր համալսարանի մասնագետները սիրով իրենց մասնակցությունն են բերում հանդեսի հրապարակումներում, ակտիվ և արդյունավետ համագործակցություն են ծավալել խմբագրության հետ:

Հաջողություն եմ մաղթում «Օրինականությանն» իր վեհ ու շնորհակալ գործում:

ԲԱՐԻՆ ԸՆԴ ՁԵԶ



ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն: Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հարգելի պարոն Ա. Դավթյան,

Սրտանց շնորհավորում ենք ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի՝ «Օրինականության» 20-ամյակի և հանդեսի «100»-րդ համարի կապակցությամբ, մաղթում Ձեզ և հանդեսի խմբագրական խորհրդին հետագա բեղմնավոր և արգասաբեր աշխատանք՝ ի նպաստ օրինականության պահպանման և իրավակարգի ամրապնդման: Իր 20-ամյա գործունեության ըն-

թացքում հանդեսում տպագրվել են նաև ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների գիտական հոդվածները, որոնք որոշակիորեն նպաստել են ոչ միայն օրենսդրության կատարելագործմանը և իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, այլև զգալի ներդրում են ունեցել իրավական մտքի սահմանադրականության զարգացման հարցերում:



ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Խաչատուր Արուլյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Հարգելի պարոն Դավթյան,

Շնորհավորում եմ Ձեզ ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի հոբելյանական 100-րդ համարի լույսընծայման և գոյության 20-րդ տարին թևակոխելու կապակցությամբ:

Հայ տպագիր մամուլի պատմության մեջ յուրաքանչյուր պարբերական յուրովի է կերտում իր էջը՝ դառնալով ժամանակի տարեգիրը: Յուրաքանչյուրն ունի ուրույն առաքելություն, ասելիք ու ոճ:

Հավատարիմ իր առաքելությանը՝ ավելի քան երկու տասնամյակ հանդեսը պահպանել է իր նկարագիրն ու ոճը, իրավական ու լրագրո-

ղական էթիկայի սկզբունքներով առաջնորդվելով՝ գիտական և ուսումնամեթոդական կարևոր տեղեկատվություն, օրենքի ու օրինականության պահպանի հստակ դիրքորոշում ունեցող հրապարակումներ հասցրել ընթերցողին:

Ի սրտե համամիտ եմ Ձեր հոբելյանական զգացողություններին ու տրամադրությանը և մաղթում եմ, որ «Օրինականություն» հանդեսն անաչառ տեղեկատվության և չպարտադրված խոսքի ուժով շարունակի նպաստել երկրի դատախազական համակարգի, հասարակական-իրավական գործընթացների զարգացմանը՝ դառնալով օրինականության ու արդարության լավագույն պատվարը:

ՀՀ ՎԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԿՈՒՆԳԻԱՅԻ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ

ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել կոլեգիայի ընդլայնված նիստ, որը վարել է ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը:



Նիստին մասնակցել են ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը, ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, Հատուկ քննչական ծառայության, Քննչական կոմիտեի, Պետական եկամուտների կոմիտեի, ՄԻՊ ներկայացուցիչները:

Ձեկույցներով հանդես են եկել ՀՀ գլխավոր դատախազության հարկապես կարևոր գործերով քննության վարչության պետ Վ. Մուրադյանը և ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և փնտրեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Տ. Ամբարյանը:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետ Վ. Մուրադյանը ներկայացրել է 2014-2015թթ. ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերի առիթով քննված քրեական գործերով նախաքննության վիճակը: Վ. Մուրադյանի տեղեկացմամբ՝ 2014թ. ընթացքում քաղաքացիներին ոստիկանության և այլ մարմինների բաժիններում ապօրինի պահելու, նրանց փաստացի ազատությունից զրկելու, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է 78 քրեական գործ, որոնցից 1 քրեական գործ՝ 3 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 44 քրեական գործի վարույթը կարճվել է, որոնցից 2-ը՝ հանցագործության դեպքի, իսկ մնացած 42-ը՝ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով: Հանցագործության դեպքի բացակայության հիմքով վարույթը կարճված քրեական գործերով սուտ մատնություն կատարելու դեպքերի առիթով հարուցվել է 2 քրեական գործ: 2 քրեական գործ՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով կասեցվել է, 6-ը միացվել է այլ քրեական գործերի, 4-ը քննչական ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին, իսկ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց նկատմամբ կայացվել են քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներ, 21-ը փոխանցվել է 2015 թվական:

2014թ. ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ենթադրաբար խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացված 103 հաղորդումից 99-ը ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, 4-ը՝ ՀՀ ԱՆ ՔԿ վարչության աշխատակիցների վերաբերյալ են:

2015թ. ընթացքում քաղաքացիներին ոստիկանության և այլ մարմինների բաժիններում ապօրինի պահելու, նրանց փաստացի ազատությունից զրկելու, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում

քննվել է 106 քրեական գործ, որոնցից 1 քրեական գործ՝ 1 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 68 քրեական գործի վարույթը կարճվել է, որոնցից 2-ը՝ հանցագործության դեպքի, իսկ մնացած 66-ը՝ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Հանցագործության դեպքի բացակայության հիմքով վարույթը կարճված քրեական գործերով սուտ մատնություն կատարելու դեպքերի առիթով հարուցվել է 2 քրեական գործ:

2015թ. ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ենթադրաբար խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացվել է 108 բողոք, որոնցից 97-ը ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, 3-ը՝ քննչական կոմիտեի, 8-ը՝ ՔԿ վարչության աշխատակիցների վերաբերյալ են եղել:

2016թ. ընթացքում ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է խոշտանգումների վերաբերյալ 104 քրեական գործ:

Ձեկուցողի կողմից մանրամասն վերլուծությամբ ներկայացվել են Եվրոպական դատարանի կողմից Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտմանը վերաբերող ՀՀ-ի դեմ կայացված որոշումները, դրանցում արձանագրված խախտումների նկարագրությունը:

Խոշտանգումների արգելման համատեքստում Եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների, ԵԽ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի, ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի առաջադրված պահանջների լույսի ներքո հստակեցվել են այն անհրաժեշտ քայլերը և կազմակերպական-իրավական մեխանիզմների մշակումն ու ներդրումը, որոնք կապահովեն ՀՀ միջազգային պարտավորությունների լիարժեք կատարումը և կապահովեն մեր երկրում ինչպես խոշտանգումների պատշաճ կանխարգելումը, այնպես էլ այդ փաստերով արդյունավետ քննությունը:

Անդրադառնալով անկախ մարմնի կողմից քննությունն իրականացնելու չափանիշը խստագույնս պահապանելու անհրաժեշտությանը՝ զե-

կուցողը նշել է, որ անհրաժեշտ է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներից և ՀՀ արդարադատության նախարարության ՔԿ-ներից այդ հիմնարկներ մարմնական վնասվածքներով անձանց ընդունվելու վերաբերյալ իրազեկումներ ստացած վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ հսկող դատախազներին, որ եթե ձերբակալված կամ կալանավորված անձը վնասվածքներն ստանալու հանգամանքների շուրջ հայտարարել է խոշտանգման պատճառով ստանալու մասին, ապա անհապաղ իրազեկումն ուղարկվի ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանձնարարել է նյութերը ՀԲԾ ուղարկել նաև այն դեպքում, երբ անձի մարմնական վնասվածքներն ակնհայտորեն կապված չեն կարող լինել այն դեպքի հետ, որի կասկածանքով նա ձերբակալվել է, և անձն առերևույթ անարժանահավատ տեղեկություններ է հայտնում վնասվածքներն ստանալու հանգամանքների կապակցությամբ: Վերջին փաստը, ըստ Գլխավոր դատախազի, առերևույթ խոշտանգման հարցով քննարկման առարկա պետք է դառնա:

Կարևորվել է այն հանգամանքը, որ ենթադրաբար խոշտանգումից տուժած անձի մարմնի դատաբժշկական հետազոտումն իրականացվի քննության մարմնի և իրավապահ մարմինների աշխատակիցների լսողական վերահսկողությունը բացառող պայմաններում:

Անդրադառնալով ենթադրյալ խոշտանգման ենթարկված անձանց բուժզննում իրականացնող աշխատակիցներին՝ գլխավոր դատախազը շեշտել է այն մեխանիզմները, որոնք կբացառեն այդ անձանց որևէ վարչական կամ ծառայողական կապվածությունն այն հիմնարկի հետ, որտեղ պահվում է անձը:

Վ.Մուրադյանի դիտարկմամբ՝ հաշվետու ժամանակաշրջանում պահպանվել են խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի քննության անհապաղության, ամբողջականության և քննության մարմնի իրավասության չափանիշները: Քննության ամբողջականության չափանիշի խախտման դեպքերում կիրառվել են դատախազական ներգործության միջոցներ՝ նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների

կողմից տրվել են համապատասխան ցուցումներ՝ ապահովելու համար գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը:

Անդրադառնալով խոշտանգումների վերաբերյալ գործերով քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերի փոքրաթիվ լինելու պատճառներին՝ Վ. Մուրադյանը, ի թիվս դրանց, նշել է նման դեպքերի մասին բավականին ուշ հայտները, քննչական գործողությունների կատարման, մասնավորապես՝ կասկածյալների և մեղադրյալների հարցաքննության, ինչպես նաև նրանց մասնակցությամբ առերեսումների, ճանաչման ներկայացնելու, քննման, քննչական փորձարարության, հետազոտման համար նմուշներ ստանալու ընթացքում տեսաձայնագրման հնարավորությունների սակավ կիրառությունը և այլն:

ՀԿԳ վարչության պետը ներկայացրել է նաև ձերբակալված անձանց պահելու վայրերում ձերբակալվածների նկատմամբ հնարավոր վատ վերաբերմունքի կանխարգելման, արդյունավետ քննության ապահովմանն ուղղված, իրավակիրառ պրակտիկային վերաբերող, օրենսդրական բնույթի առաջարկներ:

ՀՀ գլխավոր դատախազը, առանձնացնելով քննարկվող ոլորտում իրականացված աշխատանքներում առկա բացթողումները, քննված քրեական գործերի արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծությունը, նշել է, որ վերջին տարիներին ոլորտում իրականացված զգալի աշխատանքը լուրջ նախադրյալներ է ստեղծել մեր երկրում խոշտանգումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործում, սակայն ինչպես իրավակարգավորումների, այնպես էլ անհրաժեշտ մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտություն կա: Ընդ որում՝ գլխավոր դատախազը կարևորել է երկու ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը. 1-ը՝ կանխարգելիչ մեխանիզմների կատարելագործումը, որպիսիք գերծկապահեն իրավասու մարմնի աշխատակցին՝ քրեական վարույթի շրջանակներում քաղաքացու նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մտքից, իսկ այդպիսի վարքագծի առկայության դեպքում դրանք անխուսափելիորեն կֆիքսվեն, և 2-րդ՝ խոշտանգումների փաստերով քննության արդյունավետության բարձրա-

ցումը՝ անհետաձգելի քննչական դատավարական գործողությունների օպերատիվ պլանավորմամբ, որակյալ և հետևողական իրականացմամբ:

Շեշտելով դատախազության առանձնակի շահագրգռվածությունը վերոնշյալ խնդիրների լուծման գործում՝ դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթի իրականացմամբ պայմանավորված, դատախազության կոլեգիայի որոշմամբ սահմանվել են հանձնարարականներ՝ խոշտանգումների փաստով քննվող քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Մասնավորապես՝ որոշվել է ձևավորել բացառապես այդ գործերով դատախազական հսկողություն իրականացնող մասնագիտացված դատախազների խումբ, պարտադիր կազմակերպել ընդունելություն՝ այդ գործերով դատախազին ներկայացված միջնորդությունների, բողոքների քննարկման փուլում հետևողականորեն կիրառել դատախազական ներգործության միջոցներ՝ նախաքննության լրիվությունը, բազմակողմանիությունը, օբյեկտիվությունն ապահովելու նպատակով:

Քննարկվել և լուծումներ են առաջադրվել նաև հետաքննության, նախաքննության մարմիններում դատավարության մասնակիցների իրավունքների իրացման երաշխիքների վերաբերյալ, որոնք կապահովեն անհրաժեշտ կանխարգելումը՝ ապահովելով վարույթի ընթացքում հանրային և մասնավոր շահերի համաչափությունը:

Դատախազության կոլեգիայի որոշմամբ արձանագրվել է պարտադիր պահանջ՝ ՀՀ-ի դեմ Եվրոպական դատարանի կողմից կայացվող յուրաքանչյուր որոշման դեպքում ծառայողական քննություն իրականացնելու, մեղավոր աշխատակիցների պատասխանատվության հարցը լուծելու վերաբերյալ:

Կոլեգիայի նիստին ներկա պետական այլ մարմինների ներկայացուցիչները ևս իրենց մոտեցումներն ու դիրքորոշումներն են ներկայացրել քննարկվող հարցերի վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է զեկուցողներին կատարված ուսումնասիրությունների, կայացված որոշումների մասով ապահովել պատշաճ իրազեկում՝ շահագրգիռ

ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների հետ հարցի վերաբերյալ նաև համատեղ կլոր սեղան քննարկումներ կազմակերպելու եղանակով:

Զեկուցող հանդես է եկել նաև ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Տ. Ամբարյանը՝ ներկայացնելով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման ու քննչական վարչություններում, ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման, ինչպես նաև նույն հոդվածով հարուցված քրեական գործերի նախաքննության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

Ըստ Տ. Ամբարյանի՝ 2016թ. հանրապետության հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի հատկանիշներով նախապատրաստվել է 419 նյութ, որից 338-ը, այսինքն՝ 80,7 տոկոսը, ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման և քննչական վարչություններում: 2015թ. հանրապետությունում խնդրո առարկա դեպքերով նախապատրաստվել է 626 նյութ, որից 592 կամ 94,5 տոկոսը՝ ՊԵԿ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից: Զեկուցողը, ներկայացնելով վիճակագրական տվյալներ, փաստել է, որ 2016 թվականին 207 դեպքով նվազում արձանագրվելու պայմաններում 116-ով աճել է քրեական գործերի հարուցման թիվը. 2015 թվականին հարուցվել է 100, իսկ 2016 թվականին՝ 216 քրեական գործ, որից 205-ը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման և քննչական վարչություններում:

Ներկայացվել է, որ ՊԵԿ վարույթում նախապատրաստված նյութերով և քննված քրեական գործերով 2015թ. ընթացքում վերականգնվել է 4 մլրդ 655 մլն 676 հզ. դրամի, 2016թ.՝ 4 մլրդ 585 մլն 963 հզ. դրամի, 2017թ. 5-ամսյակի ընթացքում՝ 4 մլրդ 637 մլն 805 հզ. դրամի վնաս, որը հիմնավորվել է հարկային պարտավորու-

թյուններից խուսափելու փաստերով կատարված քննությամբ:

Ըստ Տ. Ամբարյանի՝ քննվող քրեական գործերը քննվել են 6 ամիս և ավելի ժամանակով: Դատավարական ժամկետների ձգձգումների պատճառներ են հանդիսացել ինչպես քննիչների ծանրաբեռնվածությունը, այնպես էլ գործերով նշանակված փորձաքննությունները, ստուգումներն ու վերստուգումները տևական ժամկետներով կատարելը: Նմանօրինակ դեպքերը բացառելու, քրեական գործերի նախաքննությունը ողջամիտ ժամկետներում իրականացնելու նպատակով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազներին հանձնարարվել է խիստ հսկողություն սահմանել քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման ժամկետների պահպանման նկատմամբ՝ վարույթն իրականացնող քննիչին տալ ցուցումներ, ինչպես նաև փորձաքննությունների կամ ստուգումների իրականացման պատճառով ժամկետներ երկարացնելու դեպքում համապատասխան հիշեցումներ ուղարկել փորձագիտական հիմնարկի կամ ստուգում իրականացնող մարմնի ղեկավարին: Ձեռնարկված միջոցառումները գործնականում տվել են իրենց դրական արդյունքը:

Քննարկման առարկա են դարձել նաև ոլորտում առկա իրավակարգավորումների անհամապատասխանությունները, գործնականում տարամեկնաբանվող հարցերով միասնական մոտեցումների ապահովումը, դրանց լուծման ուղղությամբ հստակ քայլեր են ձեռնարկվել:

Մասնավորապես՝ որոշվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ պատկան մարմինների ներկայացուցիչների հետ կազմակերպել քննարկումներ՝ հարկային մարմինների կողմից ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների չափի վերաբերյալ նախնական հաշվարկ կազմելուց և նրանց ծանուցելուց հետո վերջիններիս կողմից հաշվետվություններ ներկայացնելը բացառելու օրենսդրական կառուցակարգեր սահմանելու վերաբերյալ նախաձեռնությամբ հանդես գալու մասին, ինչպես նաև հստակ չափանիշներ՝ մեկ

օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի անգամ անձի սեփականություն կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման պատճառով հարկերը չվճարելու դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործերով անձանց արարքներին իրավաբանական գնահատական տալիս:

Նշված հանցատեսակով քննության խնդիրներին անդրադառնալիս գլխավոր դատախազը շեշտադրել է հարկեր վճարելուց խուսափելու չարամտության հանգամանքի պատշաճ ստուգման անհրաժեշտությունը՝ կարևորելով ինչպես այդ, այնպես էլ կանխարգելման առումով համապատասխան սուբյեկտներին հարկային ոլորտի որոշակի իրավակարգավորումների վերաբերյալ պաշտոնական իրազեկումների կիրառման ընդլայնումը, հատկապես՝ երբ խոսքը վերաբերում է ֆիզիկական անձանց կողմից հարկման ենթակա գործարքներ կնքելուն:

Այս ուղղությամբ գլխավոր դատախազը տվել է կոնկրետ հանձնարարականներ:

Գլխավոր դատախազը, անդրադառնալով հարկային պարտավորությունների լիարժեք կատարման խնդրին, ևս մեկ անգամ նշել է, որ յուրաքանչյուր բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտ երբեք չպետք է անհանգստանա ՊԵԿ ոչ համաչափ գործողություններից, առավել ևս՝ կոմիտեի կազմում գտնվող քրեական հետապնդում իրականացնելու լիազորություն ունեցող մարմինների գործողություններից, իսկ նշված պահանջները չբավարարող դատավարական որոշումները հսկող դատախազների կողմից ենթակա են վերացման, վարույթի մասնակիցների խախտված իրավունքները՝ վերականգնման, ուստի ինչպես նյութերի նախապատրաստումը, այնպես էլ նախաքննությունը պետք է իրականացվեն օրենքի տառին համապատասխան:

Նիստի ավարտին տեղի է ունեցել նորանշանակ դատախազների երդման արարողությունը:

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական,
Հայ-ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Ինչպես ցանկացած երևույթի, այնպես էլ պատժի և դրա նպատակների պատմական զարգացման ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի իրականացնելու տվյալ երևույթների համապարփակ հետազոտություն, ինչպես նաև հիմնավորված դատողություններ կատարելու դրանց էության և ապագա զարգացումների վերաբերյալ: Ժամանակակից պետություններում պատժի տեսությունն անցել է զարգացման պատմական երկար ճանապարհ՝ բազմաթիվ փուլերով, որոնցից յուրաքանչյուրն առանձնանում է իր տեսական գաղափարախոսությամբ՝ իրեն բնորոշ նպատակներով և առանձնահատկություններով:

Բազմիցս նշվել է, որ քրեական պատիժը և դրա նպատակները քրեական իրավունքի գիտության կարևոր և առանցքային, ինչպես նաև սկզբունքային ու խնդրահարույց երևույթներ են, որոնց տեսական և գործնական հարցերը դեռևս վաղ ժամանակներից ուսումնասիրվել են բազմաթիվ իրավաբան-գիտնականների, ինչպես նաև փիլիսոփաների կողմից: Այս առումով համամիտ ենք այն կարծիքին, որ պատժի նպատակների հիմնախնդիրները ոչ միայն և ոչ այնքան իրավաբանական, որքան փիլիսոփայական են, որոնք դարերի ընթացքում (հնագույն ժամանակներից մինչև անգլիական և ֆրանսիական հեղափոխությունները) զբաղեցրել են ժամանակի խոշորագույն փիլիսոփաների միտքը: Դեռևս XIX դարում այս խնդիրն նվիրվել են քսանչորս ինքնուրույն փիլիսոփա-

յական համակարգեր և ավելի քան հարյուր իրավաբանական հայեցակետեր¹:

Պատիժը, լայն առումով՝ որպես հարկադրանք, ծագել և զարգացել է հասարակության հետ միաժամանակ: Հասարակությունն առանց պատժի երբեք գոյություն չի ունեցել. «Եվ մինչ մարդու մեջ փայլեց բանականության առաջին կայծը, ինչու և ինչի համար գոյություն ունի պատիժը, դա արդեն իսկ վաղուց գոյություն ուներ և գործում էր»²: Իսկ պատժի՝ որպես սոցիալ-իրավական ինստիտուտի ծագումը պայմանավորված է առաջին քաղաքակրթությունների և պետական կազմավորումների ծագմամբ՝ մ.թ.ա. IV-III հազարամյակներում:

Առաջնակարգ հասարակության ձևավորման ընթացքում ծագել են տաբուի համակարգը և համայնատիրական իրավունքը, որոնք, ինչպես նշում է Ս.Ս. Ալեքսեևը, միջանկյալ կազմավորումներ էին առաջնակարգ համայնատիրական կառուցակարգի նորմերի և իրավունքի միջև³: Տաբուի համակարգը կարգավորում էր առաջնակարգ մարդու ինչպես անձնական, այնպես էլ հասարակական կյանքի բոլոր հարցերը և որոշակի սանկցիա էր՝ այս կամ այն նորմը խախտելու համար:

Իրավունքի ծագման ոլորտն ուսումնասիրող հետազոտողներից ոմանք անգամ համարում են, թե իրավունքը ծագել է պատժից և իր ձևավորման պահին պատժողական նորմերի համակցություն էր, որի հիմնական նպատակն ահաբեկումն էր⁴:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

¹ Տե՛ս Խաչիկյան Հ.Մ. Պատժի նպատակների հիմնախնդիրները քրեական իրավունքում. «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (102), Երևան, 2000, էջ 56:
² Տե՛ս Шервуд Е.А. Законы лангобардов. М., 1992, էջ 55:
³ Տե՛ս Алексеев С.С. Проблемы теории права. Курс лекций. В 2-х т. Т. 1. Свердловск, 1972, էջ 18-19:
⁴ Տե՛ս Нырков В.В. Поощрение и наказание как парные юридические категории: Дисс. канд. юрид. наук: Саратов, 2003 էջ 112:

Հին ժամանակներում գոյություն ուներ խիստ և դաժան իրավական պատիժների միասնական համակարգ, որը կիրառվում էր սահմանված նորմերի ցանկացած խախտման դեպքում՝ ծանրության աստիճանից անկախ:

Պատժի նկատմամբ նոր, ավելի մարդասիրական մոտեցման ձևավորման գործընթացը արևմտաեվրոպական իրավական մտածողությունում սկսվել է XVIII հարյուրամյակում: Այդ մոտեցումը հանգում էր այն եզրակացությանը, որ պատիժը նախատեսվի կատարված հանցագործությանը համապատասխան, մահապատիժը կիրառվի միայն սպանության համար, իսկ խոշտանգումները՝ վերացվեն: Վերածննդի դարաշրջանում մարդասիրության թեման արտացոլում էր պատժողական իրավունքի իրավական սահմաններ նախատեսելու ձգտում⁵: Այս շրջանում մարդը հակադրվում էր առաջին հերթին հանրային պատիժների դաժանությանը՝ որպես պատժելու իրավական իշխանության սահմանի: Այլ խոսքով՝ գիտակցվում էր դաժան պատիժների բացասական ազդեցությունը հասարակության գիտակցության վրա: Նման պատիժների իրավական և փաստացի կիրառումը հանգեցնում էր հասարակության մեջ անձի անարգմանը, ավելին՝ դաժանության սովորության ձևավորման:

Վերածննդի դարաշրջանի հայտնի մտածողներ Մոնտեսքյոյի և Բեկարիայի մարդասիրական գաղափարներն առաջին պլան մղեցին հանցագործությունների կանխման գաղափարը: Նրանց կարծիքով՝ այդ նպատակը կարող է իրացվել ինչպես հանցանք կատարելու հնարավորության ֆիզիկապես ոչնչացման, այնպես էլ հանցավորի իրավական ուղղման միջոցով, որի հիմքում ընկած է հանցավորի ահաբեկումը:

Պատժի տեսության վերաբերյալ Չեզարե Բեկարիայի գաղափարախոսությունը, ըստ էության, ամփոփված է 1764 թվականի «Հանցագործությունների և պատիժների մասին» աշխատությունում, որը քիչ ուշ բավականին լայն տարածում ստացավ: Իտալացի իրավագետը պատժի՝ որպես իրավական ինստիտուտի ծագումը տեսնում էր մարդկանց՝ հասարակությու-

նում համախմբվելու մեջ: Հասարակություն մուտք գործելով՝ յուրաքանչյուր անձ զոհում էր իր ազատության մի մասը, որպեսզի համատեղ և անվտանգ օգտվի դրանից: Ազատության այդ հատվածների համակցությունը կազմավորում էր ժողովրդի բարձրագույն իշխանությունը, որի ներկայացուցիչը դառնում էր իշխանության պահապանը և տիրապետողը: Միննույն ժամանակ՝ պահանջվում էր այդ իրավունքների և ազատությունների պաշտպանություն այն անձանց ոտնձգություններից, ովքեր ձգտում էին ոչ միայն վերադարձնել ազատության իրենց հատվածը, այլ նաև տիրանալ մյուսների բաժնին: Այդպիսի միջոց հանդիսացավ պատիժը, որը կիրառվում էր օրինախախտի նկատմամբ⁶: Չ.Բեկարիան ներգործության միջոցը պատիժ էր համարում այն դեպքում, երբ դրա կիրառումը պայմանավորված էր ծայրահեղ անհրաժեշտությամբ: Հակառակ դեպքում դա կլիներ բռնակալի կողմից բռնության ակտի դրսևորում:

Պատժի վերոնշյալ նպատակի իրացման հնարավորություններից են հանցավորի բարոյական ուղղումը և վերադաստիարակումը: Հեզելն իր «Իրավունքի փիլիսոփայության հիմունքներում» նշում էր, որ պատժի ոլորտում քրեական քաղաքականության զարգացումն ընդհանուր կանխումից (ահաբեկումից) և պատժի խիստ միջոցներից անցում է կատարում դեպի վերջիններիս մեղմացում, որն ավելի բնորոշ է հատուկ կանխմանը (ուղղմանը): Նրա կարծիքով՝ պատժի դաժանության աստիճանը գտնվում է տվյալ ժամանակաշրջանում հասարակության վիճակի հետ որոշակի հարաբերակցության մեջ, այդ պատճառով էլ հասարակության հզորությունը, նրա վստահությունն իր ուժերին և ամրությանը հանգեցնում է պատժի ավելի մեղմացման:

Անգլո-ամերիկյան իրավական ընտանիքը XVIII դարի սկզբում ենթարկվում է մայրցամաքային իրավական ընտանիքի ազդեցությանը, որն արտահայտվել է նաև պատժի գաղափարախոսությունում: Վերածննդի դարաշրջանի անգլիացի մտածողներից Ուիլյամ Պալեյը հայտնի է պատժի և բանտային համակարգի բարե-

⁵ St' u Антология мировой правовой мысли: В 5 т. Т. 2: Европа V-XVII вв. / Отв. ред. Л.Р. Сюкияйнен. Изд. Мысль. М.: 1999, էջ 114:

⁶ St' u Беккариа Ч. О преступлениях и наказаниях. М., 1995, էջ 68:

փոխման վերաբերյալ իր առաջադիմական մարդասիրական պատկերացումներով: Նրա հայտնի՝ «Բարոյական և քաղաքական փիլիսոփայության սկզբունքները» աշխատությունը (1785 թվական) բովանդակում էր գիտնականի իրավական մտքի միջուկը, որը բարոյականության մասին ուտիլիտարիստական ուսմունքն է: Նա պատժի կիրառման մեջ նախ և առաջ տեսնում էր ոչ թե կատարված հանցագործության համար պատիժ, այլ՝ հանցագործության կանխում: Այսպես, խոսելով «մարդասիրական պատժի» մասին՝ Ու.Պալեյը մատնանշում է այն, որ «մարդասիրական պատժին համապատասխանող նպատակն արդարադատության բավարարումը չէ, այլ՝ հանցավորության կանխումը»⁷: «Արդարադատության բավարարում» եզրույթը հեղինակի կողմից օգտագործվում է «հատուցում այնպիսի ցավով, որը համապատասխանում է հանցագործի մեղքին և Աստծու կամքին, հատուցում, որը սովոր ենք ընդունել որպես արդարադատության իրականացում»⁸ նշանակությամբ: Ըստ հեղինակի՝ պետության կողմից հանցագործին պատժելը պայմանավորված է ոչ թե նրա մեղքի աստիճանով կամ այլ պատճառներով, այլ՝ տվյալ հանցագործության կանխման բարդությամբ և անհրաժեշտությամբ: Պատիժը չպետք է լինի դաժան այն դեպքում, երբ տվյալ հանցագործությունը կարող է կանխվել այլ միջոցով: Իրավագետն առանձնացնում է պատժի այնպիսի նպատակներ, ինչպիսիք են ուղղումը և հրապարակայնությունը: Ընդ որում՝ նա նաև հիմնավորում է ուղղման նպատակի իրացման համար դատապարտյալի ֆիզիկական աշխատանքի օգտագործման գաղափարը:

Ու. Պալեյի վերոնշյալ աշխատությունը, որը պարունակում է մարդասիրության, ռացիոնալիզմի և արդարության սկզբունքները, որոշ մտածողների կողմից վկայակոչվում է որպես առաջադիմական աշխատություններից մեկը, որը մեծ ազդեցություն է ունեցել պենիտենցիար ոլորտում հասարակական լիբերալ հայացքների ձևավորման վրա:

Հետաքրքրական են նաև ռուս գիտնական-

ների գաղափարները պատժի զարգացման վերաբերյալ: Այսպես, Մ.Ն. Գերենտի դիրքորոշման համաձայն՝ պատիժն անցել է զարգացման երեք փուլ 1) մասնավոր և հանրային վրեժի, 2) ահաբեկման, 3) անձի ուղղման և կանխման⁹: Պատժի զարգացումն այլ ձևով է ներկայացնում Գ.Յու.Մաննեն, ով առանձնացնում էր հետևյալ փուլերը՝ արյան վրեժի գերակայում և համակցման համակարգի ծագում (մինչև XI դար), վրեժի նահանջ, համակցման գերակայում և ժամանակակից իմաստով քրեական պատժի ծագում (XI-XIII դդ.), համակցման նահանջ և քրեական պատիժների զարգացում (XIV-XV), քրեական պատիժների գերակայում (XVI-XVII դդ.), քրեական պատիժների գերակայում և սոցիալական պաշտպանության միջոցների ծագում (XVIII-XIX դդ.), պատիժների նահանջ և սոցիալական պաշտպանության միջոցների նշանակության բարձրացում (XX դարի սկիզբ)¹⁰:

Իհարկե, Գ.Յու.Մաննեի առաջարկած համակարգն արտահայտում է պատժի նպատակների հաջորդական զարգացումը, սակայն դրա բովանդակությունից հետևում է, որ այդ համակարգը հիմնված է սոցիոլոգիական դպրոցի գաղափարախոսության վրա: Վերջինիս համար քրեական պատիժներն ի վերջո պետք է փոխարինվեն սոցիալական պաշտպանության միջոցներով:

Վերոնշյալի հիման վրա կարող ենք եզրահանգել, որ պատժի նպատակների վերաբերյալ իրականացված թե՛ փիլիսոփայական և թե՛ իրավաբանական ուսումնասիրություններն ունեն խոր արմատներ, որոնք կարևոր նշանակություն ունեն պատժի և դրա նպատակների կայացման հարցում: Ընդ որում՝ կարելի է նկատել, որ պատժի տեսության զարգացման փուլերի տարանջատման հիմք են ծառայում դրա նպատակների վերաբերյալ ձևավորված մոտեցումները: Այսպես՝ պատժի նպատակների վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական ուղղությունների՝ բացարձակ և հարաբերական:

⁷ Ст'ю Тепляшин П.В. Принципы философии наказания и тюрьмоведения Уильяма Палея // Государство и право. №2. 2005, էջ 112:

⁸ Ст'ю նույն տեղում:

⁹ Ст'ю Гернет М.Н. Преступление и наказание. Нижний Новгород, 1923, էջ 2:

¹⁰ Ст'ю Манне Г.Ю. Общее и специальное предупреждение в уголовном праве. Иркутск, 1926, էջ 14:

Պատժի բացարձակ տեսությունները պատժի նպատակը համարում են անցյալին ուղղված բացարձակ գաղափար՝ հատուցում կատարված ոտնձգության և հանցագործի պատճառած չարիքի դիմաց:

Պատժի բացարձակ տեսությունից բխում են նաև հատուցման, նյութական հատուցման, դիալեկտիկական հատուցման և աստվածային հատուցման տեսությունները: Այսպես՝ հատուցման տեսությունը դարեր շարունակ համարվում էր ամենատարածվածը փիլիսոփայության մեջ: Հին Հունաստանում և Հռոմում պատժի հատուցման գաղափարախոսությունը պաշտպանում էին այնպիսի փիլիսոփաներ, ինչպիսիք էին Պլատոնը, Արիստոտելը, Ցիցերոնը և Սենեկան: Միջնադարում այս գաղափարն էր զարգացնում իտալացի ուտոպիստ Թ.Կանապանելան: Նա կողմնակից էր հանցագործության և պատժի համապատասխանության թալիոնի՝ «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքին:

Քննարկվող ուղղության կապակցությամբ Ն.Ս. Տագանցևը նշում է, որ, չնայած այս ուղղության կողմնակիցներն իրենց դոկտրինայի հետքերը որոնում են հունական և հռոմայական մտածողների ստեղծագործություններում, սակայն նրանց ուսմունքները քրեական իրավունքի հարցերի շուրջ ներկայացնում են միայն առանձին մտքեր, դրույթներ: Միայն Հյուգո Գրոտիոսն է առավել հստակ ներկայացրել պատժի հատուցման դոկտրինան: Նա պատժի նպատակները ձևակերպել է հետևյալ ձևով. «[Մ]արդը պետք է ունենա որևէ նպատակ, գործի հանուն որևէ օգուտի: Այս նպատակը կարող է ունենալ եռակի բնույթ՝ ուղղվելու, հաշտության, նեղացածի բավարարման: Հետևաբար՝ պատժի նշանակման ցանկացած դեպքում պետք է նկատի ունենալ՝ 1) հանցագործի օգուտը, 2) նեղացածի շահը, 3) հասարակության շահը»¹¹:

Ցանկալի է նշել, որ պատժի հատուցման տեսությունն առավել խոր զարգացում ապրեց գերմանացի փիլիսոփաներ Կանտի և Հեգելի աշխատություններում:

Նյութական հատուցման տեսությունը նախ և առաջ արտացոլված է Կանտի բարոյական

հատուցման տեսությունում: Կանտը քրեական իրավունքը սահմանում էր որպես պատժի իրավունք և դիտում որպես հանցագործին զրկանքների պատճառում: Նա նույնպես կողմնակից էր թալիոնի սկզբունքին՝ չարիքը պահանջում է հատուցում չարիքով, և միայն հավասարության սկզբունքով հատուցումը կարող է որոշել պատժի տեսակն ու ծավալը: Կանտի բարոյական տեսությունն ուսանում է. «Բարոյական հրամայականը պահանջում է չարիքն ընդ չարիքով հատուցում, և միայն հավասարության սկզբունքով հատուցումը կարող է որոշել պատժի տեսակն ու ծավալը: Չարդարացված չարիքը, որը կարող ես պատճառել որևէ անձի, պատճառում ես ինքդ քեզ, վիրավորելով՝ վիրավորում ես ինքդ քեզ, սպանելով որևէ մեկին՝ սպանում ես ինքդ քեզ, per quod quis peccat, per idem punitur et idem»¹²:

Հեգելը պատիժը հիմնավորում էր որպես հանցագործության համար հատուցում: Միևնույն ժամանակ՝ համարում էր, թե պատիժը կարող է կիրառվել միայն մարդու հանրորեն վտանգավոր գործունեության արտաքին դրսևորման նկատմամբ և չի կարող առնչվել նրա գիտակցությանը: Պատիժը հատուցում է, բայց ոչ համարժեք հանցագործությամբ պատճառված և հանցագործին պատժելով պատճառված վնասների միջև: Փաստորեն, պատժի հատուցման հեգելյան ձևակերպումը տարբերվում է իր նախորդներից այնքանով, որ Հեգելը խոսում էր ոչ թե լիարժեք հատուցման, այլ՝ հանցագործի կողմից խախտված իրավունքների վերականգնման մասին:

Դիալեկտիկական հատուցման տեսությունը պատիժը ուսումնասիրում է որպես նպատակահարմար, գաղափարների զարգացման տրամաբանական և, հետևաբար՝ անհրաժեշտ գործընթաց:

Աստվածային հատուցման տեսության էությունը, ըստ Կիստյակովսկու, այն է, որ. «Հանցագործությունն Աստծո դեմ ուղղված վիրավորանք է, որն Աստծո բարկությունն է հարուցում ոչ միայն հանցագործի դեմ, այլև ողջ ժողովրդի դեմ, որում բնակվում է հանցագործը: Նրան հանդարտեցնելու և բարկությունը մեղմացնե-

¹¹ Ст'ю Таганцев Н.С. Уголовное право (Общая часть). Часть 2. По изданию 1902 года. Allpravo.ru. – 2003.

¹² Ст'ю Кант И. Критика чистого разума. Перевод Н. Лосского.– М.: Мысль, 1994, էջ 68:

լու համար անհրաժեշտ է պատժել հանցագործին: Այդ պատիժը պետք է ուղեկցվի արյուն թափելով, տանջանքներով, մարմնական վնասվածքներով: Արյունը, տանջանքները, տառապանքները մաքրում են հանցագործի մեղքը և հանդարտացնում Աստծուն: Այս տեսությամբ բացատրվում է վաղ շրջանի ազգերի շրջանում գործարկված՝ հանցագործի զոհաբերությունը՝ որպես բնեղենով մաքրագերծում, իսկ ավելի ուշ՝ կենդանիների զոհաբերությունը՝ որպես խորհրդանշական մաքրագերծում:

Վերոգրյալ տեսությունների կապակցությամբ Ն.Ս.Տագանցևը նշում է. «Պետությունը, պատիժը կիրառելով, գործում է մեխանիկորեն. նա հանդիսանում է կամ Աստծո կամքի, կամ խղճի անլռելի ձայնի կատարող: Հանցագործությունը ոչ միայն իրավունք է վերապահում պատժել, այլ նաև պարտադրում է որոշել պատժի տեսակն ու ծավալը»¹³:

Այսպես, բացարձակ տեսության և դրանից բխող տեսությունների ներկայացուցիչների մոտեցումներում նկատվում են պատժի արդի՝ հատկապես սոցիալական արդարության վերականգման նպատակի նախահիմքերը: Ժամանակի ընթացքում դրանք ստուգվելով, հղկվելով և կատարելագործվելով ենթարկվել են որոշակի գաղափարական ձևափոխությունների, սակայն այսօր էլ չեն կորցել իրենց արդիականությունը:

Ինչ վերաբերում է պատժի հարաբերական տեսություններին՝ դրանք ուղղված են ապագային և պատիժն ընդունում են ոչ միայն որպես հանցավոր արարքից բխող, այլև դրանով պայմանավորված պետության կողմից իրականացվող նպատակամղված գործունեություն: Հարաբերական տեսությունները պատժի իրական իմաստին և նպատակներին մոտ են այնքանով, որքանով ուղղված են հատկապես հանցանք կատարած անձին և հիմնավորում են պատժելու իրավունքը հատկապես կատարված հանցանքի համար: Դրանք հեռանում են պատժի իրական իմաստից և նպատակներից այնքանով, որքանով պատիժն արդարացնում են ապագայում հնարավոր իրա-

վախախտումներով, այդ թվում՝ ոչ թե հանցանք կատարած անձի, այլ երրորդ անձանց կողմից կատարված: Պատժի հարաբերական տեսությունից բխում են նաև այլ՝ ընդհանուր կանխման, հատուկ կանխման և խառը տեսությունները:

Պատժի ընդհանուր տեսության համար կարևոր և վճռական նշանակություն են ունեցել իտալացի Չ.Բեկկարիայի հայացքները: Մերժելով հատուցման գաղափարը՝ նա պատժի հետ կապում էր այլ՝ օգտակար և կիրառական նպատակներ: Չ.Բեկկարիան պատժի նպատակն էր համարում «հանցագործի համար խոչընդոտներ ստեղծելը, որպեսզի նա, ինչպես նաև այլ անձինք հասարակությանը նոր վնաս չպատճառեն: Այդ նպատակով պետք է կիրառել այնպիսի պատիժ, որը համապատասխանի հանցագործությանը, հանցավորի համար լինի նվազ տանջալի, բայց նրա վրա ունենա հոգեբանական մեծ ազդեցություն»¹⁴: Չ. Բեկկարիան մշակեց մեծ կարևորություն ներկայացնող մի սկզբունք, որը բավական մեծ ազդեցություն ունեցավ քրեական իրավունքի հետագա զարգացման վրա: Դրա համաձայն՝ «Արդյունավետ է ոչ թե պատժի խստությունը, այլ նրա անխուսափելիությունը»¹⁵ Ցանկալի է ընդգծել, որ քննարկվող սկզբունքը նույնքան արդիական է, որքան շուրջ երկու հարյուր տարի առաջ և հիմք է հանդիսացել բազմաթիվ երկրների պատժի ինստիտուտի ձևավորման համար: Այս առումով բացառություն չէ նաև Հայաստանը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Չ.Բեկկարիայի գաղափարներն առավել հետևողականորեն զարգացրեց գերմանացի քրեագետ Ա.Ֆոյերբախը՝ ստեղծելով ինքնուրույն քրեաիրավական տեսություն: Ա. Ֆոյերբախը պատժի նպատակ էր համարում հանցագործությունների կանխումը, բայց այն կապում էր ահաբեկման հետ՝ նշելով, որ քրեական օրենքում պարունակվող պատժի սպառնալիքը պետք է ազդի պոտենցիալ հանցագործի վրա, ահաբեկի նրան և դրանով իսկ կանխի հանցագործությունը: Նրա կողմից առավել մեծ նշանակություն էր տրվում ոչ թե կոնկրետ անձի նկատմամբ պատժի գործնա-

¹³ Տե՛ս Таганцев Н.С. Уголовное право (Общая часть). Часть 2. По изданию 1902 года. Allpravo.ru. – 2003.

¹⁴ Տե՛ս Ч. Беккария. О преступлениях и наказаниях. М., 1939, էջ 243-244:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 373:

կան կիրառմանը, այլ պատժի սպառնալիքով հանցագործի ահաբեկմանը: Ստացվում է, որ Ա.Ֆոյերբախը որպես պատժի նպատակ առաջնային էր համարում ընդհանուր կանխումը:

Հայկական իրավունքի հին և միջնադարյան հուշարձաններում, այդ թվում՝ Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերում, նույնպես ազդարարվում է, որ կիրառվող քրեական պատիժը հետապնդում է որոշակի նպատակներ: Թե՛ Մխիթար Գոշը և թե՛ Սմբատ Սպարապետը պատժի նպատակը տեսնում էին հանցավոր արարքներից հասարակությանը պաշտպանելու մեջ: Նրանց համոզմամբ՝ պատիժը պետք է հետապնդի ոչ միայն պատիժ-հատուցման նպատակ՝ թալիոնի սկզբունքով, այլ նաև մարդկանց կրոնաբարոյական իմաստով ուղղելու նպատակ: Նրանք համարում էին, որ պատիժները, հատկապես՝ մարմնական, հանցագործին ուղղելու, ահաբեկելու և հատուցելու նպատակ ունեն: Ընդ որում՝ հատուցումը և ահաբեկումը կիրառում է պետությունը, իսկ ուղղումը՝ գլխավորապես եկեղեցին: Հանցագործը պատժվում է այն պատճառով, որ խախտել է օրենքը, իսկ նրա նկատմամբ նշանակված պատիժը պետք է օրինակ ծառայի ուրիշների համար: Նրանք դեմ էին նաև պատիժները կիրառելու դաժան, մարդու արժանապատվությունը վիրավորող մեթոդներին¹⁶:

Ստացվում է, որ հին և միջնադարյան իրավունքում ընդգծվում էր, որ պետության կողմից նշանակված պատիժը հետապնդում է կոնկրետ նպատակներ: Մասնավորապես՝ Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերում, ըստ էության, ամրագրում էին ստացել սոցիալական արդարության (տվյալ ժամանակաշրջանում դրա ընկալմանը համապատասխան) վերականգնման, հանցագործի ուղղման և հանցագործությունների կանխման նպատակները: Ավելին՝ հատկանշական է, որ այդ իրավական փաստաթղթերում տարբերակում էր դրվում պատժի նպատակների իրականացման

սուբյեկտների առումով, ըստ որի՝ հատուցումը և ահաբեկումը կիրառվում է պետության կողմից, իսկ ուղղումը՝ եկեղեցու: Վերջինս, իհարկե, պայմանավորված է քննարկվող ժամանակաշրջանում պետության և եկեղեցու հարաբերությունների մոդելներով, որոնցում եկեղեցին հարաբերականորեն մեծ դերակատարություն ուներ պետության գործունեությունում:

Պատժի նպատակների հարցը տասնամյակներ շարունակ քննարկվել է խորհրդային շրջանի իրավաբանական գրականությունում և գտնվել քրեագետ իրավաբանների ուշադրության կենտրոնում: Այս հարցի կապակցությամբ գիտնականների վեճի առարկան հանգում էր հետևյալին՝ հատուցումը համարել պատժի նպատակ, թե՛ ոչ:

Հատուցումը որպես քրեական պատժի նպատակ հանդիսանալու կողմնակիցները (Ն.Ա. Բելյան, Վ.Գ. Սմիճով, Ի.Ի Կարպեց, Բ.Ս. Ուտևսկի, Պ.Պ. Օսիպով և այլք) պնդում էին, որ պատիժը նշանակվում է ոչ միայն արդեն կատարվածի, այլև հետագա հանցագործությունները կանխելու համար:

Այս մոտեցման հակառակորդները (Ա.Ա. Գերցենզոն, Ա.Ա. Պիոնտկովսկի, Ա.Լ. Ռեմենսոն, Մ.Դ. Շարգորոդսկի և այլք) իրենց հերթին պնդում էին, որ հատուցումը պատժի էությունն է, ոչ երբևէ՝ նպատակը: Պատժի վերջնական նպատակը միայն և բացառապես հանցագործությունների կանխումն է (պրևենցիան)¹⁷:

1961 թվականին ընդունված նախկին՝ ՀԽՍՀ քրեական օրենսգիրքը կարգավորում էր պատժի և դրա նպատակների վերաբերյալ իրավահարաբերությունները: Այսպես՝ նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն. «Պատիժը ոչ միայն մեղքի քավումն է կատարված հանցագործության համար, այլև նպատակ ունի դատապարտվածներին ուղղել և վերադաստիարակել աշխատանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, համակեցության կանոնները հարգե-

¹⁶ Տե՛ս Խաչիկյան Հ.Մ. Պատժի նպատակների հիմնախնդիրները քրեական իրավունքում. «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (102), Երևան 2000, էջ 58:

¹⁷ Տե՛ս Ա.Ա. Пионтковский. Уголовно-правовые воззрения Канта, Фейербаха и Фихте. М., 1940; его же учение Гегеля о государстве и праве и его уголовно-правовая теория. М., 1963; Н.А. Беляев. Цели наказания и средства их достижения. Л., 1963; Ф.М. Решетников. Уголовное право буржуазных стран. Вып. 2. М., 1966; А.А. Пионтковский. Курс советского уголовного права. Т.3. Наказание. М., 1970; М.Д. Шаргородский. Наказание, его цели и эффективность. Л., 1973:

լու ոգով, ինչպես նաև կանխել նոր հանցագործությունների կատարումն ինչպես դատապարտվածների, այնպես էլ այլ անձանց կողմից:

Պատիժը նպատակ չունի ֆիզիկական տանջանքներ պատճառել կամ ստորացնել մարդկային արժանապատվությունը»:

Հիշյալ օրենսդրական կարգավորման վերաբերյալ իր աշխատությունում կարծիք է արտահայտել Հ.Մ.Խաչիկյանը՝ առանձնացնելով անկատարությունները: Մասնավորապես՝ նա մատնանշում է «մեղքի քավում» արտահայտության անորոշությունը՝ դա համարել պատժի նպատակ, ինչպես կարելի է դատել հոդվածի վերնագրից, թե՛ ոչ: Երկրորդ՝ քննադատության են արժանի պատժի քաղաքականացված և բարոյականացված այնպիսի նպատակները, ինչպիսիք են «աշխատանքին ազնվորեն վերաբերվելը», «օրենքները ճշտորեն կատարելը» և այլն: Երրորդ՝ պատժի նպատակների պահանջների ոչ իրատեսական ուղծացումը: Կարելի է պնդել, որ նույնիսկ դրանց տառացիորեն հետևելու դեպքում ոչ մի դատապարտյալի նկատմամբ չէին կարող իրականանալ քրեական օրենքով նախատեսված նպատակները, և այդ պատճառով նա պետք է ցմահ պատիժ կրեր: Չորրորդ՝ «ուղղում» և «վերադաստիարակում» արտահայտությունների տարանջատումը ծնում է վեճեր դրանց բովանդակության վերաբերյալ¹⁸:

Ընդհանուր առմամբ համաձայնելով հեղինակի կողմից առանձնացված օրենսդրական ձևակերպման անկատարությունների հետ՝ ցանկանում ենք նաև ավելացնել, որ նախկին ՀԽՍՀ քրեական օրենսգրքը, այնուամենայնիվ, նախատեսում էր պատժի հիմնական այնպիսի նպատակներ, ինչպիսիք են՝ 1) մեղքի քավումը, 2) դատապարտյալին ուղղելը, 3) դատապարտյալին վերադաստիարակելը, 4) նոր հանցագործությունները կանխելը: Հատկանշական է նաև նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի երկրորդ պարբերության ձևակերպումը, որի համար, մեր կարծիքով, հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ, ի տարբերություն գործող ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ նախկին քրեա-

կան օրենսգրքում մարդասիրությունը որպես սկզբունք նախատեսված չէր: Ավելին՝ կարծում ենք, որ նախկին ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի՝ «Պատիժը նպատակ չունի ֆիզիկական տանջանքներ պատճառել կամ ստորացնել մարդկային արժանապատվությունը» օրենսդրական ձևակերպման նախատեսման նպատակահարմարությունը քրեական օրենսգրքի պատժի գլխում բացակայում է, քանի որ այդ գաղափարը պետք է սահմանվի որպես քրեական օրենսգրքի սկզբունք: Այսինքն՝ դա պետք է հանդիսանա որպես առավել ընդհանրացված քրեաիրավական նորմ, որը պայմանավորում է քրեաիրավական մյուս նորմերի և ինստիտուտների բովանդակությունը, ինչը նախատեսված է գործող ՀՀ քրեական օրենսգրքով:

Բացի այդ՝ խնդրահարույց է նաև նախկին ՀԽՍՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ դատապարտյալին վերադաստիարակելու՝ պատժի նպատակը: «Վերադաստիարակել» հասկացությունը, ըստ բացատրական բառարանի, նշանակում է՝ «Նորից դաստիարակել, նոր ոգով դաստիարակել, նոր սովորույթներ՝ հմտություններ՝ վարքագիծ դաստիարակել յուրացնել տալ: Դաստիարակելով ուղղել՝ կարգի բերել՝ դեպի լավը դարձնել (հանցագործին, օրինազանցին, ծույլին և այլն)»¹⁹:

Համամիտ ենք այն դիրքորոշումը, որ պատժի նպատակները պետք է լինեն գործնականում ողջամտորեն իրագործելի, հակառակ դեպքում՝ պատիժը կդառնա ինքնանպատակ: Այս առումով՝ արդարացված չենք համարում անձի վերադաստիարակումը որպես պատժի նպատակ նախատեսելը, հատկապես՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դաստիարակություն եզրույթը խիստ լայն է, իսկ անձին վերադաստիարակելը՝ անիրագործելի:

Անհրաժեշտ է ընդգծել, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքով պատիժ հասկացության և դրա նպատակների վերաբերյալ նախկին ՀԽՍՀ քրեական օրենսգրքի մոտեցումները ենթարկվեցին կոնցեպտուալ փոփոխությունների: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն.

¹⁸ Տե՛ս Խաչիկյան Հ.Մ. Պատժի նպատակների հիմնախնդիրները քրեական իրավունքում. «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (102), Երևան, 2000, էջ 59:

¹⁹ Տե՛ս Աղայան Է.Դ. Արդի հայերենի բացատրական բառարան. «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 1374:

«1. Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

2. Պատիժը կիրառվում է սոցիալական արդարությունը վերականգնելու, դատապարտյալներին ուղղելու, ինչպես նաև հանցագործությունները կանխելու նպատակով»:

Վերլուծելով հիշյալ նորմի բովանդակությունը՝ անհրաժեշտ է արձանագրել, որ, ի տարբերություն նախորդ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի, գործող քրեական օրենսգրքը 48-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է պատժի առավել բովանդակային հասկացությունը: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակներին՝ անհրաժեշտ է նշել, որ, ի տարբերություն նախորդ ՀՀ քրեական օրենսգրքի, օրենսդիրը նորովի է ներկայացրել և հստակեցրել այդ նպատակները՝ առանձնացնելով պատժի միայն 3 (երեք) նպատակ.

- 1) սոցիալական արդարության վերականգնումը,
- 2) դատապարտյալների ուղղումը,
- 3) հանցագործությունների կանխումը:

«Սոցիալական արդարության վերականգնում» հասկացությունը հայկական իրավունքում, ըստ էության, առաջին անգամ նախատեսվեց գործող օրենսգրքով, սակայն դրա նախահիմքերը, ի դեմս հատուցման գաղափարի, առկա էին դեռևս հին և միջնադարյան իրավաբանական հուշարձաններում: Ինչ վերաբերում է դատապարտյալների ուղղմանը և հանցագործությունների կանխմանը որպես պատժի նպատակների՝ դրանք իրենց արտացոլումն արդեն իսկ ստացել էին նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի շրջանակներում:

Սոցիալական արդարության վերականգնումը՝ որպես պատժի նպատակ, ենթադրում է անձին, հասարակությանը, պետությանը հանցագործությամբ պատճառված վնասի հնարավորինս հատուցում պատժի միջոցով, հանցագործության վտանգավորության և պատժի համաչափություն: Հատկանշական է, որ սոցիալա-

կան արդարության վերականգնումը որպես պատժի նպատակ սահմանելիս օրենսդրի կամքն ուղղված է եղել պատժի նպատակների համակարգում նոր գաղափարախոսություն ներդնելուն: Մասնավորապես՝ պետությունը, պատժելով հանցանք կատարած անձին և վերականգնելով վերջինիս կողմից խախտված սոցիալական արդարությունը, պաշտպանում է միաժամանակ քրեական օրենքի հեղինակությունը և ձևավորում հարգանք դրա նկատմամբ, որն իրականացվում է արդարացի պատիժ կիրառելու միջոցով: Պետության կողմից սոցիալական արդարության վերականգնումն իրականացվում է, առաջին հերթին՝ հասարակության աչքերում, և ապա՝ տուժողի: Պատժի քննարկվող նպատակի իրականացման ապահովման սուբյեկտ է պետությունը՝ ի դեմս դատարանի, որն օժտված է պատիժ նշանակելու բացառիկ մենաշնորհով:

Ընդանրացնելով պատժի նպատակների պատմական զարգացումը Հայաստանում՝ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ պատժի նպատակները որպես որոշակիացված համակարգ իրենց ամրագրումն են ստացել ավելի ուշ ընդունված քրեաիրավական օրենսդրություններում: Այս առումով՝ անհրաժեշտ է նշել, որ դատապարտյալին ուղղելը և հանցագործությունների կանխումը (ընդհանուր և մասնավոր պրևենցիա) որպես պատժի նպատակներ ամրագրվեցին նախկին՝ 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքում: Առաջին անգամ պատիժ հասկացության բովանդակային սահմանումը նախատեսվեց գործող ՀՀ քրեական օրենսգրքում: Նույն օրենսգրքով նաև համալրվեց պատժի նպատակների ցանկը և, որպես արդյունք՝ լրացվեց սոցիալական արդարության վերականգնման նպատակով:

Կարծում ենք, որ պատիժը և դրա նպատակները՝ որպես քրեական իրավունքի կարևոր և առանցքային ինստիտուտ, գենետիկորեն կապված են գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքի հետ, ուստի նման պայմաններում պատժի և դրա նպատակների՝ որպես կենդանի օրգանիզմի համապատասխանեցումն արդի մարտահրավերներին և պահանջներին, օրակարգի խնդիր է:

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՅԱՆ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԳՈՒ ԱԼՈՅԱՆ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՈՐՈՇ ԵԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԻԺ ԾԱՆՐԱՅՆՈՂ ԵՎ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև անձը բնութագրող տվյալները, ըստ էության, համարվում են այնպիսի ելակետային և ուղղորդող ցուցիչներ, որոնք անհրաժեշտ են անձի նկատմամբ արդարացի, կատարված արարքին համարժեք պատիժ նշանակելու համար: Ծանրացնող և մեղմացնող հանգամանքներն ազդում են ոչ միայն պատժի տեսակի ընտրության կամ պատժաչափի վրա, այլև անհրաժեշտ ու կողմնորոշիչ պայմաններ են պատիժը պայմանականորեն չկիրառելու, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու և այլ քրեաիրավական ինստիտուտների համար: Այժմ անդրադարձ կատարենք դատարանների ու քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից այդ հանգամանքների կիրառման վերաբերյալ առավել հաճախ հանդիպող մի շարք դեպքերի՝ ցույց տալու համար պատժողական քաղաքականության վրա դրանց ազդեցության աստիճանը, գործի փաստական տվյալների առանձնահատկություններով պայմանավորված՝ կիրառման պայմանները, նպատակահարմարությունը և այլն:

1. Այսպես՝ շատ հաճախ դատարանների կողմից որպես անձը բնութագրող դրական տվյալ հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ամբաստանյալն առաջին անգամ է հանցագործություն կատարել, նախկինում դատվածություն չունի:

Առաջին անգամ հանցանք կատարելը որպես անձի համար դրական բնութագրիչ դիտարկելու կամ չդիտարկելու հանգամանք իրավաբանական գրականության մեջ բավականին լայն վիճաբանությունների տեղիք է տվել: Ըստ էության՝ նշված հանգամանքը որպես դրական բնութագրիչ դիտարկելու կողմնակիցների կարծիքով՝ երբևէ հանցանք չկատարած անձն

իր հանրային-սոցիալական վտանգավորության, օրինապաշտության և քրեաբանական առումով պետք է որոշակիորեն խրախուսվի, մարդասիրական նորմերի տեսանկյունից որոշակիորեն մեղմ վերաբերմունք պետք է դրսևորվի քրեաիրավական առումով անբասիր վարքագիծ ունեցող անձի նկատմամբ:

Վերոնշյալ խնդրի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել Արամայիս Հովհաննիսյանի վերաբերյալ 2015 թվականի թիվ ԳԴ/0014/01/14 որոշմամբ, որի համաձայն՝ անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը ողջամտորեն նվազեցնող չի կարող գնահատվել այնպիսի հանգամանք, որը բնութագրական է անձանց լայն շրջանակին և բխում է անձի կողմից քաղաքացիական հասարակությունում հաստատված կարգը պահպանելու պարտականությունից: Մասնավորապես՝ իրավահպատակ վարքագիծը բնորոշ է հասարակության լայն շրջանակներին և յուրաքանչյուր քաղաքացու հասարակական պարտքն է: Հետևապես՝ անձի կողմից նախկինում հանցանք կատարած կամ դատապարտված չլինելը, ինչպես նաև նոր հանցանք չկատարելը, չեն կարող դիտարկվել որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Հետևապես՝ պետք է արձանագրել, որ առաջին անգամ հանցագործություն կատարելու հանգամանքը չի կարող համարվել պատիժը մեղմացնող կամ անձը դրական բնութագրող հանգամանք, և դա հաշվի առնել պատիժ նշանակելիս:

2. Մինևույն ժամանակ՝ անհրաժեշտ է քննարկել նաև հակառակ մոտեցումը՝ արդյոք նախկինում հանցանք կատարելը պետք է դիտարկվել որպես պատիժը ծանրացնող կամ ան-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

ծր բացասականորեն բնութագրող հանգամանք:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները»: Պրակտիկայում հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, երբ դատախազները մեղադրական ճառում պատժի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս կամ դատարանները պատիժ նշանակելիս անդրադարձ են կատարում նախկինում անձի կողմից հանցանք կատարելու հանգամանքին՝ նույնիսկ այնպիսի պարագայում, երբ անձի դատվածությունը հանված կամ մարված է լինում՝ հիմքում դնելով այն պատճառաբանությունը, որ թեպետ դա ծանրացնող հանգամանք չէ, սակայն, ըստ էության, համարվում է անձի կենսագրական տվյալ և դատարանի մեջ կարող է ներքին համոզմունք առաջացնել պատժի խստության առումով, քանի որ արդեն իսկ նա նախկինում հանցանք կամ հանցանքներ է կատարել և չի ուղղվել: Այս հարցին ևս անդրադարձ է կատարել ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես *Արտաշ Իլյայի Շաքարյանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշմամբ արձանագրել է*, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված հանցագործության բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող տվյալների՝ նրա սոցիալ-հոգեբանական, քրեաիրավական և մի շարք այլ հատկանիշների համակցության ճիշտ գնահատումը: Պատասխանատվության անհատականացման համար անհրաժեշտ է հիմանալ ոչ միայն այն պայմանները, որոնցում ձևավորվել է հանցավորի անձը, այլև նրա բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերը, որոնք իրենց արտացոլումն են գտել արարքի, մասնավորապես՝ հանցագործության կատարման մեջ: Այս առումով՝ նախկինում հանցանք կատարած լինելը, անշուշտ, հանցավորի անձը բացասաբար բնութագրող հանգամանք է, ինչը, սակայն, չի նշանակում, թե անձի նախկին հանցավոր գործունեությունը յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի նրա նկատմամբ նոր հանցագործության համար պատիժ սահմանելիս: Վերոգրյալի հետ կապված՝ Վճռա-

բեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է հայտնել այն մասին, որ մարված կամ հանված դատվածության պայմաններում անձի կողմից նախկինում հանցանք կատարած լինելը որպես նրա անձը բացասաբար բնութագրող հանգամանք հաշվի առնելն անթույլատրելի է: Նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագիր՝ դատարանը պարտավոր է դա ուղղակիորեն արտացոլել պատիժը և պատասխանատվությունը անհատականացնելիս: Մինչդեռ մարված կամ հանված դատվածության պայմաններում անձը քրեական օրենքի իմաստով համարվում է հանցագործություն չկատարած, և նրա նախկին դատվածությունը քրեաիրավական հետևանք առաջացնել չի կարող, այդ թվում՝ չի կարող անդրադառնալ նոր հանցագործության համար նշանակվելիք պատժի վրա:

Ուստի, մարված կամ հանված դատվածության պայմաններում նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի անձնավորությունը բացասաբար բնութագրող հանգամանք, դատարանը ոչ միայն կիմաստազրկի դատվածությունը հանելու, մարելու քրեաիրավական կառուցակարգերը, այլև կարող է խախտել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

Այնուամենայնիվ, նշված իրավիճակի հետ կապված՝ անհրաժեշտ է քննարկել նաև հետևյալ մոտեցումը. հանցավորի կողմից նախկինում հանցանք կատարելը, այն պայմաններում, երբ դատվածությունը հանված կամ մարված է, ամեն դեպքում չի կարող ամբաստանյալի չուղղվելու վերաբերյալ, առնվազն՝ ներքին համոզման տեսանկյունից, որևէ ազդեցություն չունենալ պատժի նշանակման հարցում: Ամեն դեպքում այն հանգամանքը, որ անձը նախկինում կատարել է հանցագործություն, արդեն իսկ համարվում է անջնջելի փաստ և կենսագրական տվյալ ամբաստանյալի մասին, ինչն անքակտելիորեն կապված է նրա հանրային-իրավական կենսակերպի հետ, անխզելի է վերջինիս անհատականության բնորոշման հարցում: Նշված հանգամանքները, թերևս, ամբաստանյալի անձը լավագույնս բնութագրող տվյալներից են, քանզի ակնհայտորեն վկայում են վերջինիս կողմից հանցանքների կատարման հակվածության,

այլևս հակահրավական քայլերի ու միջոցների չդիմելու ցանկության բացակայության մասին, որոնք բազմիցս արտահայտվել են՝ հանցանքը հանցանքի հետևից կատարելով: Դրանք օբյեկտիվորեն բնության մեջ գոյություն ունեն և, այսպես ասած՝ դրանց նկատմամբ անտարբեր վերաբերմունքը չի բխում նաև արդարության մասին հասարակական պատկերացումների շրջանակից, քանզի անկողմնակալ դիտորդի մեջ ինքնաբերաբար և ողջամտորեն կասկածներ կարող է առաջացնել նշանակված պատժի արդարացիության մասին՝ այն դեպքում, երբ, օրինակ՝ նախկինում գողություն կատարելու համար շուրջ հինգ անգամ դատապարտված անձը, դատվածությունը մարված կամ հանված լինելու պարագայում, կրկին զգալի չափով գողություն կատարելու համար արժանանա տուգանքի ձևով պատժի կամ պայմանական ազատագրվման:

Ամեն դեպքում նախկինում հանցանք կատարած լինելու հանգամանքները բացարձակապես անտեսելը հակասում է պատժի նշանակման սկզբունքների ընդհանուր փիլիսոփայությանը: Նման պայմաններում հանված կամ մարված դատվածության՝ անձի համար անբարենպաստ հետևանքներ չառաջացնելու պահանջի և նախկինում հանցանք կատարած անձի նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման բարոյասոցիալական հարթության միջև անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու նպատակով՝ իրավակիրառ մարմիններն ամեն դեպքում պետք է առաջնորդվեն ներքին համոզմունքներով ու ամբաստանյալի անձի մասին օբյեկտիվ տպավորություններով, իսկ համոզմունքների վրա կարող են ազդել հետևյալ հանգամանքները՝ նախկինում կատարված հանցագործությունների թիվը, դրանց բնույթը, վերջին անգամ կատարված հանցագործության և նոր հանցագործությամբ պատիժ նշանակելու միջև ժամանակահատվածը, այդ ընթացքում հանցավորի կենսագործունեությունը, զբաղմունքը, դաստիարակվելուն, սոցիալական արդարությունը վերականգնելուն ուղղված գործողությունները, տուժողներին հասցված վնասի վերականգնումը և այլն:

3. Հարկ է քննարկել նաև հետևյալը. *Արամայիս Հովհաննիսյանի վերաբերյալ գործով*

Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել էր նաև այն հարցը, թե անձի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չլքելը կարող է գնահատվել որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Նշված գործով Առաջին ատյանի դատարանն Ա.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես մեղմացնող հանգամանք էր հաշվի առել, ի թիվս այլնի, նրա կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չլքելը: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսված տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու համար՝ նույն օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման դեպքում: Այսինքն՝ տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելն արգելված է օրենքով, հետևաբար՝ այդպիսի վարքագիծ չդրսևորելն անձի պարտականությունն է: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ Ա.Հովհաննիսյանի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չլքելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցանք չկատարելը, ինքնին չի կարող գնահատվել որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

4. Հաջորդ հարցը, որին անհրաժեշտ է անդրադարձ կատարել, վերաբերում է այն հանգամանքին, թե արդյոք հատուկ սուբյեկտների դեպքում նրանց աշխատանքային գործունեության բնույթը կարող է դիտարկվել որպես մեղմացնող հանգամանք, թե ոչ: Խոսքը վերաբերում է այնպիսի դեպքերի, երբ, օրինակ՝ ոստիկանության ծառայողին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով (կաշառք ստանալը) դատապարտելու դեպքում արդյոք ճիշտ է ոստիկանության համակարգում զուտ բազմամյա աշխատանքը որպես պատժի վրա ազդող մեղ-

մացուցիչ հանգամանք մատնանշելը, թե՛ ոչ, կամ, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում (բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մանագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) բժշկի կողմից մասնագիտական ստաժը, մասնագիտական առանձնահատուկ բնույթը և այլ տվյալները որպես անձը դրական բնութագրող հանգամանքներ հաշվի առնելը, թե՛ ոչ:

Ասվածն առավել պատկերավոր լինելու համար քննարկենք մեկ օրինակ: Ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ, քանի որ, լինելով հիվանդանոցում տվյալ օրվա հերթապահ մանկաբարձ-գինեկոլոգը, անփոյթ և անբարեխիղճ վերաբերմունք է դրսևորել իր մասնագիտական պարտականությունների նկատմամբ, ոչ պատշաճ է կատարել իր ստանձնած աշխատանքային լիազորությունները, որոնց հետևանքով անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս որպես անձը բնութագրող տվյալ հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ վերջինս աշխատում է որպես մանկաբարձ-գինեկոլոգ, և որպես անձը դրական բնութագրող տվյալ դրել է պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում:

Վերոգրյալի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ, որպես հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ, գնահատվում են նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկությունները՝ վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը և այլն: Հետևաբար աշխատանքը յուրաքանչյուր մարդու համար կարելի է դիտարկել որպես նրա սոցիոլոգիական կարգավիճակը բնութագրող և հասարակական օգտակարության արդյունավետության լավագույն չափանիշներից մեկը, որն անհրաժեշտության դեպքում պետք է ազդի այդ անձի նկատմամբ պատիժ նշանակելիս կողմնորոշիչ տվյալների վրա:

Աշխատանքի հանգամանքն ու բնույթը, աշխատանքի ընթացքում ստացած խրախուսանքները, երկարամյա աշխատանքային

ստաժն անհրաժեշտ պայման են անձի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու կամ իրական պատիժ կրելուց ազատելու համար, բայց ոչ բավարար: Դրանք կարող են հաշվի առնվել իրավակիրառ մարմինների կողմից միայն այն դեպքում, երբ հանցագործություն կատարած անձի աշխատանքի բնույթը չի համընկնում նրան մեղսագրվող արարքի հանգամանքների հետ, կամ, այլ կերպ ասած՝ *նրա աշխատանքը պայմանավորված չէ կատարված հանցանքի բնույթի և էության հետ*: Սակայն վերոգրյալ օրինակի պարագայում պարզ է դառնում, որ ամբաստանյալի կողմից մանկաբարձ-գինեկոլոգ աշխատելու երկարամյա ստաժը չի կարող մեկնաբանվել որպես նրա անձը բնութագրող դրական տվյալ, քանի որ *նրա կատարած հանցագործությունը հենց պայմանավորված է նրա աշխատանքի բնույթով, այլ կերպ ասած՝ նա հենց անփոյթ և անբարեխիղճ վերաբերմունք է ցուցաբերել իր աշխատանքի նկատմամբ*:

Բնականաբար, ասվածը սխալ կլինի մեկնաբանել միայն բացարձակ իմաստով: Նույնիսկ այն դեպքերում, երբ հանցագործությունը պայմանավորված է և կապվում է աշխատանքի բնույթի հետ, անհրաժեշտ է տվյալ իրավիճակում գնահատել ոչ թե անձի աշխատանքային ստաժի տարիները, տևողությունը, այլ՝ մասնագիտական գործունեության ընթացքում ստացած խրախուսանքները, շնորհակալագրերը, աշխատանքի վայրից ստացված ծառայողական բնութագիրը և այլն: Ոստիկանի դեպքում որպես այդպիսի օրինակներ կարելի է համարել առանձնապես վտանգավոր խմբի վնասագերծման ընթացքում ցուցաբերած անբասիր ջանասիրությունը, վիրաբույժ-բժշկի դեպքում՝ առավել ծանր վիրահատություններ կատարելը, որոնք փրկել են մահվան եզրին գտնվող մի շարք մարդկանց, և այլն: Օրինակները կարող են բազմազան լինել, սակայն այստեղ կարևորն այն է, որ հատուկ սուբյեկտի դեպքում պետք է գնահատման ենթարկել մասնագիտական գործունեության ընթացքում ցուցաբերած առավել դրական առանձնահատկություն ունեցող դեպքերը և ոչ թե միայն զուտ աշխատանքի փաստը: Բնականաբար, այն իրավիճակներում, երբ արդեն հանցագործությունը պայմանավորված չէ աշխատանքային բնույթով, միայն այդ հան-

գամանքն ինքնին կարելի է հաշվի առնել որպես մեղմացուցիչ հանգամանք:

5. Պատժի վրա ազդող հաջորդ հանգամանքը, որին անհրաժեշտ է անդրադարձ կատարել, անձի դրական բնութագրվելու հանգամանքն է: Անձի դրական բնութագիրը սովորաբար ստացվում է համայնքի ղեկավարի կամ աշխատավայրի ղեկավարի, համատիրության ղեկավարի, ամբաստանյալի աշխատանքային գործընկերների և այլ անձանց կողմից: Նման բնութագրերը, անշուշտ, անհրաժեշտ և որոշ հանգամանքների ու անձանց դեպքում ինքնին ընդունելի և ցանկալի տվյալներ են անձի հասարակական դիրքի և տեղի վերաբերյալ ընդհանուր սոցիալական պատկերացում կազմելու համար: Խնդիրն այն է, որ երբեմն թե՛ վարույթ իրականացնող մարմինների կողմից, թե՛ դատարանների կողմից նման դրական բնութագրերն արժանանում են մեխանիկական գնահատականի և ընկալման, այնինչ ամեն դեպքում դրանք պետք է գնահատվեն և վերաբերելի ու արժանահավատ լինեն պատժի անհատականացման հարցում և վերլուծվեն ըստ իրավիճակի: Օրինակ՝ դատական պրակտիկայում հայտնի է այնպիսի դեպք, երբ նախկինում 4 անգամ հանցագործություն կատարած անձը, ով արդեն ուրիշ գործով մեղադրվում էր 24 տարբեր դրվագներով գողություն կատարելու համար, իր գյուղի համայնքի ղեկավարի կողմից բնութագրվել է դրականորեն, որպիսի հանգամանքն էլ առանց որևէ վերլուծության և հարցականների հաշվի է առնվել դատարանի կողմից պատիժ նշանակելիս: Հարց է ծագում, թե ինչպե՞ս կարող է նախկինում բազմաթիվ գողություններ կատարած և դատապարտված անձնավորությունը դրականորեն բնութագրվել համայնքի ղեկավարի կողմից, որպիսի հանգամանքն էլ դատարանի կողմից առանց որևէ վերապահման համարվի որպես արժանի և պատշաճ՝ տվյալ անձի նկատմամբ նշանակվող պատժի մեղմացման համար: Անձի դրական բնութագրվելը բավականին լայն և ընդգրկուն իմաստ է արտահայտում: Այսպես՝ անձի դրական բնութագրումը բաղկացած է նրա վերաբերյալ կազմված որոշակի օբյեկտիվ պատկերացումների, հասարակական կյանքում տեղի և դիրքի, օրինապահ վարքագծի, մարդկային բարձր և արժանապատիվ հատկանիշների

ամբողջությունից, որոնք պետք է գնահատվեն դատարանների կողմից՝ ըստ իրենց նշանակության և ազդեցության մակարդակի, ինչն էլ իր հերթին թույլ կտա, ի թիվս այլ հանգամանքների հետ, հասնել այդ անձին մեղմ պատիժ նշանակելու կամ պատիժ կրելուց պայմանական ազատելու եզրահանգմանը: Սակայն գործնականում քիչ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ դատարանները մատնանշեն, թե հատկապես ո՞ր դրական հատկանիշներն են թույլ տվել հանգել այն եզրակացությանը, որ անձի ուղղվելը հնարավոր է առանց իրական ազատագրվման ձևով պատիժ կրելու, ինչպես են այդ դրական հատկանիշներն ազդել նման որոշման կայացման նպատակահարմարության հարցին անդրադառնալիս և այլն: Ամեն դեպքում, յուրաքանչյուր եզրակացության հանգեցիլիս, կայացվող որոշումը պետք է լինի պատճառաբանված, հասկանալի և անկողմնակալ դիտորդի մեջ հստակ և ընկալելի պատկերացում ստեղծի դրա օբյեկտիվության և հիմնավորվածության առումով, այլ ոչ թե պարզապես հանդիսանա մեխանիկական գործընթաց:

6. Ինչ վերաբերում է պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերաբերյալ արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրմանը՝ հարկ է նշել, որ, օրինակ՝ Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգրքում նախատեսված է մեկ մեղմացնող հանգամանք ևս, որը ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում որպես այդպիսին: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ անցել է հանցագործության կատարման և տվյալ հանցագործության համար սահմանված վաղեմության ժամկետի ավարտի միջև ընկած ժամանակահատվածի 2/3-ը, եթե մինչ այդ հանցանք կատարած անձը հայտնի չի եղել, կամ էլ հաշվի է առնվում բավականին երկար, նախաքննության կամ դատական քննության ոչ ողջամիտ կերպով ձգձգված ժամկետը՝ կատարված արարքի՝ սովորաբար քննվող ժամկետների հետ համեմատած, եթե, իհարկե, այդ անհարկի ձգձգման պատճառը չեն հանդիսացել ամբաստանյալի դիտավորյալ գործողությունները: Ըստ էության՝ նշված երկու հանգամանքը որոշակիորեն տրամաբանական են և քննարկման ու ճիշտ պայմանների առկայության դեպքում կիրառության արժանի նաև մեր երկրում: Այսպես՝ եթե վաղեմության ժամ-

կետի անցման դեպքում հնարավոր է անձին ազատել քրեական պատասխանատվությունից, ապա ինչո՞ւ չի կարելի այդ ժամկետի 2/3-ն անցնելը ևս, մարդասիրական դրսևորումներից ելնելով, մեկնաբանել հոգուտ մեղադրյալի՝ իհարկե, մի պայմանով, եթե այդ ժամկետն ընդհատված չի եղել այլ հանցագործությամբ: Ինչ վերաբերում է գործի քննության ժամկետների՝ կատարված հանցագործության հետ անհամապատասխան ձգձգումները մեղադրյալի օգտին մեկնաբանելուն, ինչպես հայտնի է՝ ողջամիտ ժամկետների սահմաններում դատական քննությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության մի մասն է կազմում: Դա առաջին հերթին ունի հոգեբանական ազդեցություն, քանի որ ուղղված է կանխելու մեղադրյալի մեջ պատժի կամ պատասխանատվության ենթարկվելու մշտական մտավախության զգացումը, լարվածությունը, նպաստել նախաքննության և դատական քննության ժամկետների անհարկի և արհեստական ձգձգումները կանխելուն, ողջամիտ դատական քննության ժամանակահատված ապահովելուն և այլն:

Բացի այդ՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում խափանման միջոցի պայմանները չխախտելու հանգամանքը ևս նախատեսված է որպես մեղմացնող դրույթ պատժի և պատասխանատվության անհատականացման համար: Տվյալ դեպքում, բնականաբար, նկատի են առնվում այն խափանման միջոցները, որոնք կապված չեն անձին ազատությունից զրկելու հետ՝ ստորագրություն չիեռանալու մասին, անձնական կամ կազմակերպության երաշխավորություն և այլն: Որպես նշված մեղմացնող հանգամանքի դրական հատկանիշներ կարելի է առանձնացնել այն, որ խափանման միջոցի պայմանները պահպանելը մեղադրյալի օգտին մեկնաբանելը լրացուցիչ երաշխիք կարող է լինել տվյալ մեղադրյալի կողմից գործի քննության ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելուն, գործի ընթացքը խոչընդոտելու գործողություններից զերծ մնալուն և այլն, մեղադրյալին կարող է շահագրգռել ցուցաբերել բարեխիղճ և պարտաճանաչ մոտեցում գործի քննության նկատմամբ՝ մեղա-

վոր ճանաչվելու դեպքում հետագայում իր նկատմամբ դատարանի կողմից առավել բարենպաստ վերաբերմունք և մեղմ պատիժ ստանալու ակնկալիքով:

Միաժամանակ, հատկապես՝ արևմտյան իրավունքում, հայտնի են ծանրացնող և մեղմացնող այլ հանգամանքներ ևս, մասնավորապես՝ ծանրացնող հանգամանքներ են՝

- անձի կողմից հանցանքի կատարմանը բազմաթիվ միջնորդավորված անձանց ներգրավելը, ովքեր չեն հասել քրեական պատասխանատվության տարիքի կամ գործել են անզուշորեն,
- հանցանքի կատարման հետևանքով աննախադեպ քանակով տուժողների առկայությունը,
- հանցանքի կատարման մանրակրկիտ և առավել հանգամանորեն նախապատրաստվելը,
- հանցանք կատարելը՝ այդպիսին չկատարելու վերաբերյալ իշխանությունների կողմից նախապես զգուշացված լինելու դեպքում,
- հանցանք կատարելուն ուղղված գործողությունները շարունակելն այնպիսի պայմաններում, երբ դա կատարվել է հասարակության անդամների ներկայությամբ՝ ի հեճուկս դրանք դադարեցնելու նրանց խնդրանքներին ու հորդորներին,
- նույն տուժողի նկատմամբ բազմաթիվ հանցանքներ կատարելը,
- հանցագործությունը կատարելուց հետո կամ դրա ընթացքում այլ հակաբարոյական գործողություններ կատարելը, օրինակ՝ տուժողին ծեծելու ընթացքում այդ ամենը տեսաձայնագրելը, տեսաձայնագրությունները շրջապատում կամ համացանցում տարածելը, կատարված հանցանքի վերաբերյալ ընկերական շրջապատում կամ մերձավոր ազգականների շրջանում, համացանցում գլուխ գովալը, հանցանքով հպարտանալը և այլն:

Իսկ որպես մեղմացնող հանգամանքներ կարելի է նշել հետևյալները.

- այնպիսի հանցանք կատարելը, որը, օբյեկտիվ պայմաններից ելնելով, իսկա-

պէս չէր կարող հայտնի լինել անձին, ինչը նշանակում է «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից» սկզբունքի նահանջ, բայց միայն պատժի մասով,

- հանցանքի կատարումը պայմանավորված է՝ անձի կախվածություններից ելնելով, օրինակ՝ օգտագործելու նպատակով թմրանյութ ձեռք բերելը դրա խիստ կախվածություն ունեցող անձի կողմից,

եթե հակառակ պարագայում դա նրա համար կարող էր առաջացնել ծանրագույն հետևանքներ, և այլն:

Վերոնշյալ հանգամանքները թեպետ առանձնահատուկ են և բնորոշ կոնկրետ արևմտյան իրավական մշակույթ ունեցող տարբեր երկրների, այնուամենայնիվ, գիտատեսական նկատառումներից ելնելով, բավականին հետաքրքիր են ու քննարկման և ուշադրության արժանի:



ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավոր,
Ռուս-հայկական համալսարանի սահմանադրական և
մունիցիպալ իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
Ռուս-հայկական համալսարանի դոկտորանտ

**ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՄՍՈՒՄ**

Իրավունքի գերակայությունը միաժամանակ և՛ քաղաքական իդեալ է, և՛ սահմանադրական դոկտրինա¹: Անգլիական ընդհանուր իրավունքի մեջ իրավունքի գերակայության սկզբունքն արտացոլում է սահմանադրականության ընդհանուր սկզբունքը, որը կապված է ոչ միայն դատավարական արդարության և իրավական նորմերի արդարացի կիրառման, այլև մարդկային արժանապատվության պաշտպանելու և անձի իրավունքները հարգելու գաղափարների հետ: Չնայած Ա.Վ. Դայսին, ով այս դեկտրինի հիմնադիրներից է, առանձնացրել է անգլիական սահմանադրական իրավունքի երկու հիմնական սկզբունք՝ իրավունքի գերակայությունը և պառլամենտական ինքնիշխանությունը, այդուհանդերձ՝ նշված սկզբունքներից առաջինն ավելի է հավակնում ֆունդամենտալ կարգավիճակի²: Դայսիի առաջարկած՝ իրավունքի գերակայության դոկտրինի նշանակությունն ու դրանից բխող եզրահանգումներն այսօր էլ ընդունելի են, այս սկզբունքն անգլիական ընդհանուր իրավունքի մեջ օրինականություն հասկացությունն ամրապնդելու համար է և իրավունքի փիլիսոփայության մակարդակում սերտ կապեր ունի ազատության և հավասարության հիմնական արժեքների հետ: Իրավունքի գերակայությունը, միևնույն ժամանակ, ինչպես անգլիական սահմանադրական իրավունքի դոկտրին է, այնպես էլ սահմանադրական կառավարման ընդհանուր սկզբունք՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ գոյություն ունի: Չարգացնելով իրավունքի գերակայու-

թյան դրոյթները՝ յուրաքանչյուր առանձին դեպքում անգլիացի դատավորները փորձում են իմաստավորել սահմանադրականության իդեալն անգլիական իրավական և քաղաքական ինստիտուտների պրակտիկայի սահմաններում: Քաղաքական իդեալի և իրավական սկզբունքի միջև գոյություն չունի հստակ սահման: Իրավական դոկտրինը կատարելագործվում է դատական պրակտիկայի մանրազնին ուսումնասիրության և մշակման շնորհիվ՝ ձգտելով միշտ մոտեցնել հասարակական իրավունքն ազատության, հավասարության և օրինականության այն իդեալներին, որոնց օրինակները ցույց են տալիս պատմությունը և փորձը, համենայն դեպս՝ դրանց ճիշտ մեկնաբանության դեպքում:

Դայսիի կարծիքով՝ Անգլիայում իրավունքի գերակայությունը նշանակում է այն, որ գոյություն չունի մեկը, ով վեր է օրենքից և չպիտի ենթարկվի նրա պահանջներին. «Ցանկացած մարդ, նրա կոչումից և դիրքից անկախ, ենթարկվում է պետության սովորական օրենքներին և ենթակա է սովորական դատարանների իրավասությանը»³: Նրա այն պնդման հետ, որ «իրավունքի գերիշխանությունն ու գերակայությունը» բացառում է «պաշտոնատար անձանց կողմից իշխանության լայնածավալ և կամայական իշխանացումը», Դայսիի առաջարկած սկզբունքը հասկացվում է որպես ընդամենը ֆորմալ օրինականության կամ օրենքի առջև ֆորմալ իրավական հավասարության հաստատում: Պետք է լինեն ընդհանուր օրենքներ

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

¹ Մանրամասն տե՛ս Доктрины правового государства и верховенства права в современном мире. Отв. ред. В. Д. Зорькин, П. Д. Баренбойм. М., 2013.
² Տե՛ս A.V. Introduction to the Study of the Law of the Constitution, first published 1885 (10th ed. 1964).
³ Տե՛ս Dicey, см. сноscopy выше 1, at 193.

(ad hoc կարգադրումների փոխարեն), որոնք խստորեն կկիրառվեն յուրաքանչյուր որոշակի իրավիճակի դեպքում: Բավականին տարածված է այն քննադատությունը, որ ֆորմալ հավասարությունն ամբողջովին հարաբերակցվում է օրենքի կողմից անհավասար և անգամ ռեպրեսիվ սահմանափակումների և արգելքների սահմանման հետ՝ մեծ տարբերակումներ ցույց տալով մարդկանց և մարդկանց խմբերի միջև: Դայսիի ներկայացրած քննարկման բովանդակությունը, այնուամենայնիվ, թույլ է տալիս հստակ հասկանալ, որ ֆորմալ (իրավաբանական) հավասարությունը, որն ապահովվում է օրենքի հանդեպ բոլորի հավասարության շարունակական կիրառմամբ, լինի դա մասնավոր կամ պաշտոնատար անձ, դեպի ավելի մասշտաբային և բովանդակալից իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ գործադրումն է: Կարելի է ասել, որ անգլիական Սահմանադրությունը հիմնված է եղել իրավունքի գերակայության վրա այն իմաստով, որ այնպիսի ընդհանուր սկզբունքներ, ինչպիսիք են անձնական ազատության իրավունքը կամ հասարակական հավաքներ անցկացնելու իրավունքը, դատական որոշումների արդյունք են, որոնք սահմանում են մասնավոր անձանց իրավունքներն առանձին և համանման դեպքերում: Իրավունքի ընդհանուր սկզբունքների հաջորդական կիրառումը, ներառյալ նաև այնպիսիները, որոնք հայտնաբերվել և կատարելագործվել են ընդհանուր իրավունքի դրույթների մշակման գործընթացում, ապահովում է ավելի լայն սահմանադրական իրավահավասարություն իրավունքի գործադրումը: Ընդհանուր նորմերն ու սկզբունքները պետք է արդարացի կերպով կիրառվեն ցանկացածի նկատմամբ՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները և տարբերությունները, որոնք առկա են տարբեր մարդկանց և տարբեր իրավիճակների դեպքում, պետք է հիմնավորված լինեն դատավորների կողմից և ուղղված լինեն անձի իրավունքների հանդեպ հարգանքի իդեալներին և մարդկային արժանապատվությունը հարգելու պահանջներին⁴:

Երբ իրավունքի գերակայությունն ընկալ-

վում է որպես պաշտոնական գաղափար, որն ապահովում է միայն ֆորմալ հավասարություն օրենքի առջև, դրա կապն ազատության հետ, առաջին հերթին, չկարգավորվող հայեցողության բացակայության մեջ է: Եթե քաղաքացիներն ու նրանց համապատասխան պաշտոնատար անձինք կապված են օրենքով, որը հայտարարվել է պաշտոնապես, ապա մարդը վստահ կլինի, որ եթե ինքը կատարում է օրենքի պահանջները, ապա կունենա անկախություն և ուրիշների կողմից կամայականությունների չի ենթարկվի: Երբ օրենքն ընդհանուր նորմերից է բաղկացած, որոնք հրապարակված են, որոշակի են, տարածվում են ապագա իրավահարաբերությունների վրա և կիրառելի են իրենց նշանակության խելամիտ մեկնաբանությանը համապատասխան, ապա նման օրենքը հստակ կարգադրություն է ապահովում, թե ինչպես պետք է գործել՝ բացառելով օրենքով օժտված պաշտոնյաների միջամտելու կամ իրենց կողմից իշխանազանցություն դրսևորելու ռիսկը⁵: Իրավունքի գերակայության կիրառման ֆորմալ կամ դատավարական ոլորտը ներառում է այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են արդարադատությունը կամ անկողմնակալությունը, որոնք թույլ են տալիս երաշխավորել, որ օրենքը ճիշտ է կիրառվում: Դատարանը, օրինակ, պետք է բաղկացած լինի անկողմնակալ դատավորներից, ովքեր պարտավոր են լսել յուրաքանչյուրի բացատրությունը, ով մեղադրվում է իրավախախտում կատարելու մեջ: Դատարանը կամ տրիբունալը պետք է կիրառի օրենքը փաստերի նկատմամբ՝ ելնելով ճիշտ հասկացողությունից, և պետք է դիտարկի օրենքի դրույթների մեկնաբանության այլընտրանքային տեսակետների միջև բանավեճը՝ թույլ տալով խելամիտ առարկություններ պաշտոնական իշխանությունների կողմից գոյություն ունեցող իրավական նորմերի ճիշտ նշանակության մասին եզրակացությունների և պնդումների վերաբերյալ:

Ճանաչելով պաշտոնական ընտրություն (դատական հայեցողություն) կատարելիս որոշակի գործողությունների ազատության գոյության անխուսափելիությունը՝ անգլիական ընդ-

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 188:

⁵ Տե՛ս Джеймс Р. Силкенат. Верховенство права и его значение/Доктрины правового государства и верховенства права в современном мире, էջ 15-16:

հանուր իրավունքը փոխակերպել է իրավունքի գերակայության ֆորմալ պահանջներն ավելի բազմակողմանի՝ պատշաճ իրավական գործընթացի դոկտրինով: Այն դեպքերում, երբ իրավական նորմերը պաշտոնատար անձանց իշխանական լիազորություններ են տալիս, գոյություն ունեն օրինականության սկզբունքներ, որոնք հանդես են գալիս որպես չարաշահումների դեմ երաշխիքներ: Օրենքով սահմանված իրավասությունները պետք է իրականացվեն միայն օրինական հանրային և մասնավոր նպատակների համար, որոնք ենթադրվում են՝ ելնելով օրենքի կառուցվածքից, նման լիազորությունները չպետք է օգտագործվեն որպես պարտադրանքի միջոցներ այն մարդկանց նկատմամբ, որոնց գործողություններն ու ձգտումները ընկալվում են որպես պետական քաղաքականության համար խոչընդոտ՝, չնայած որ դրանք օրինական են: Անգամ եթե իշխանության մարմիններն իրենց հայեցողական լիազորություններն իրականացնելիս կարող են օրինական կարգով սահմանափակումներ սահմանել քաղաքացիների իրավունքների և ազատությունների նկատմամբ՝ վնասը, որը հասցվում է անհատների իրավունքներին և օրինական շահերին, պետք է համամասնական լինի հասարակական պահանջմունքներին, անհատների իրավունքների և օրինական շահերին ոչ համամասնական վնաս հասցնելը, անգամ երբ նման միջամտությունն ունի օրինական հիմք, արհամարհանք է անհատների արժանապատվության և բարեկեցության նկատմամբ:

Օրենքի առջև հավասարության հիմնական գաղափարը չի կարող ներմուծվել միայն ընդհանուր իրավունքներն արդար կիրառելու համար: Դա պետք է տարածվի իշխանության գործադիր (վարչական) մարմինների վրա՝ տալով անկախ դատարաններին իրավունք՝ գնահատելու այն գործողությունների հիմնավորվածությունը, որոնք պաշտոնատար անձինք կատարում են մարդկանց մեջ իրենց հայեցողական լիազորություններն իրականացնելիս: Այս առումով՝ վարչական մարմինների հայեցողությունը պետք է համապատասխանի օրինականության չափորոշիչներին՝ նման այնպիսիների,

որոնք կիրառվում են դատավարության մեջ և բնորոշ են օրենքի գերակայությանը: Երբ դատարանները վերահսկողություն են իրականացնում վարչարարության նկատմամբ՝ իրավունքի գերակայության և ֆորմալ հավասարության տեսանկյունից, հետագայում նման գործերը պետք է նմանօրինակ կերպով լուծվեն: Այս ընդհանուր սկզբունքը, իհարկե, ինքնին հանդես չի գալիս որպես նմանության և նույնականության չափանիշ: Դատարաններն ավելի կոնկրետ իրավական սկզբունքներ պետք է կիրառեն, որպեսզի հիմնավորեն տարբերությունները, որոնք առաջանում են կոնկրետ դատական գործերի մեջ: Այնուամենայնիվ, այս սկզբունքները դիտարկում ենք որպես բարոյապես արդարացված՝ դրանք պետք է դառնան կառավարման սահմանադրական ձևի կազմակերպման տրամաբանորեն հիմնավորված մոտեցման խորհրդանիշ, որը կարտացոլի ազատության և արդարության բարձրագույն արժեքները: Անգամ եթե վարչարարության լուծումները, դրան հակառակ, սովորաբար հիմնվում են պետական քաղաքականության դատողությունների վրա, այս քաղաքականությունը պետք է արդար կերպով իրականացվի՝ չպիտի այնպիսի տարբերակումներ լինեն մարդկանց և մարդկանց խմբերի միջև, որոնք արդարացված չեն հասարակական շահերը հաշվի առնելու հավասարակշռության և թույլատրելիության տեսանկյունից: Պետական քաղաքականությունը պետք է իրականացվի այն սահմանափակումների սահմաններում, որոնք հաստատված են իրավունքի և վարույթի միջև: Կոնկրետ որոշումների օրինականությունը, անկախ այն հանգամանքից հանդիսանում են դրանք դատարանների թե պաշտոնատար անձանց որոշումներ, վերջին հաշվով հիմնվում է օրինական իշխանության անվերապահ կանխավարկածի և իրավունքի գերակայության սկզբունքի պահպանման վրա⁶:

Մարդը, ով գտնվում է իրավունքի գերակայության պաշտպանության ներքո, իրավունք ունի ապրելու՝ ազնվաբարո կյանքի մասին իր պատկերացումների համաձայն, ինչը սահմանափակվում է միայն այլ անձանց երաշխավոր-

⁶ Stijn Venters Ф. Верховенство права как глобальная мера конституционализма//Доктрины правового государства и верховенства права в современном мире, էջ 76-77:

ված ազատության սահմաներով: Նա կարող է կառուցել ու իրականացնել սեփական ծրագրերը և նախագծերը՝ հետևելով իր սեփական ձգտումներին, նա օգտվում է պաշտոնավոր անձանց, նաև այլ անձանց կամայական միջամտության անձեռնմխելիությունից հարկադրանքի ընդհանուր իրավական նորմերի սահմաններում կամ սամաններից դուրս: Իրավունքի գերակայությունն ազատության բաստիոնն է, որը հասկացվում է որպես անկախություն, ոչ ոք չի գտնվում ad hoc իշխանության կամ ad hominem միջամտության տակ, բայց կարող է օգտվել անվտանգությունից, որն ապահովվում է օրենքի անկողմնակալ իրականացման շնորհիվ՝ դրա հրապարակված պահանջների համաձայն⁷: Կարևոր չէ, թե ազդեցիկ պաշտոնատար անձինք վատ են վերաբերվում կամ դատապարտում են քաղաքացու համոզմունքները, մտահղացումները, գործողությունները, նրանք իրավունք չունեն միջամտել այն դեպքում, երբ դա նախատեսված է օրենքով, պարզ հրապարակված է և վիճահարույց դեպքերում ապահովվում է անկողմնակալ դատարանների գործունեությամբ, որոնք անկախ են պառլամենտից կամ գործադիր մարմնից: Այս դեպքում կա բանական համոզվածություն, որ յուրաքանչյուր վտանգ կամ ուժի կիրառում, որը վնասել է քաղաքացու շահերը, որը միաժամանակ գտնվում է օրինական լիազորությունների շրջանակներից դուրս, կհանդիպի դատական ընդդիմադրությանը, դատարանները կսահմանափակեն պաշտոնական հարկադրանքը սահմանված իրավական ու սահմանադրական սահմանների շրջանակներում:

Իրավունքի գերակայության հիմնական գաղափարը՝ որպես ազատության երաշխիքի, անկախության իմաստով գտնվում է Ջոն Լոքի կողմից առաջադրված սահմանադրական կառավարման նկարագրության պարզ արտացոլման մեջ: Ազատությունը ոչ թե իրավաբանական սահմանափակումներից ազատման մեջ է, այլ որ ապրեն՝ մշտական օրենքի համաձայն, որն ընդհանուր է բոլորի համար:

«Սա բոլոր դեպքերում իմ սեփական ցան-

կությանը հետևելու ազատությունն է, երբ դա չի առաջադրում օրենքը, և այլ անձի ոչ մշտական, անորոշ, անհայտ ինքնիշխան կամքից անկախ լինելը, այն դեպքում, երբ բանական ազատությունն այն է, որ ոչ մի բանով կապված չլինենք՝ բացի բնության օրենքից»⁸:

Ազատությունն իրավունքի հիման վրա ազատության կիրառման անտիթեզ է պաշտոնական որոշման ընդունման դեպքում, որը մարդուն դարձնում է խոցելի այլոց կամքով կամ ցանկությամբ միջամտության համար՝ պաշտոնատար անձինք, պետական մարմիններ, որոնք ազատ են ըստ իրենց ընտրության մարդկանց մեջ խտրականություն անցկացնելու մեջ: Եթե անգամ այսպիսի դիսկրիմինացիան կանխամտածված չէ կոնկրետ անձանց հանդեպ, բայց դա էլ կարող է կասկածի տակ դնել վիճահարույց կարծիքները հասարակական շահերի հանդեպ՝ կարծիքներ, որոնք չեն ստացել հանրային գնահատական ու պաշտպանություն քննարկման արդյունքով, որը նախորդում է այս կանոնների ընդունմանը: Կառավարումն իրավունքի հիման վրա ստանում է հեղինակություն (լեգիտիտություն) և լեգալացված է հասարակության կողմից:

«Ազատության համապատասխան կոնցեպցիան, որը սահմանվել է օրենքի համաձայն... հիմնվում է այն հաստատման վրա, որ երբ մենք ենթարկվում ենք օրենքին, որը հասկացվում է որպես ընդհանուր վերացական կանոններ, որոնք սահմանվում են՝ մեր հանդեպ կիրառումից անկախ, մենք չենք ենթարկվում այլ մարդու, ինչի համար էլ ազատ ենք: Դա տեղի է ունենում, որովհետև օրենսդիրը չի սահմանում կոնկրետ դեպքեր, որոնց հանդեպ կիրառվեն նշված նորմերը, և դա տեղի է ունենում դատավորի կողմից, ով կիրառում է դրանք, ազատ հայեցողության հիման վրա հանգում է եզրակացությունների, որոնք բխում են կանոնների առկա ցանկից ու գործի կոնկրետ հանգամանքներից, ինչը թույլ է տալիս ասել, թե կառավարում են օրենքները, ոչ թե մարդիկ»⁹:

Այս հայտնի դրույթը հատուկ ուշադրության կարիք ունի, քանի որ օրենսդրի ընդհա-

⁷ Տե՛ս Раянов Ф. М. Правовое государство и современный мир. СПб, 2012, էջ 34-35:

⁸ Տե՛ս Locke J. Two Treatises of Government, originally published 1690 (1924), II, էջ 22:

⁹ Տե՛ս Hayek F.A. The Constitution of Liberty (1960), at 153.

նուր նորմերին տրվում են կոնկրետ մեկնաբանություններ, որոնցով լուծվում են սոցիալ-իրավական վեճերը:

Իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ գործողությունների տրամադրված ազատության ծավալը պաշտոնական լուծում ընդունելիս ավելին չլինի, քան անհրաժեշտ է դրված նպատակների ձեռքբերման համար, լիազորությունների ծավալը պետք է սահմանափակվի նպատակների սահմանման միջոցով, քանի որ այս նպատակները սահմանվում են լիազորող օրենքի մեկնաբանության միջոցով¹⁰: Վեճի առաջացման դեպքում համապատասխան որոշում կարող է սահմանվել անկախ դատարանի կողմից, որի դեպքում օրենքի մեկնաբանությունը պարտադիր կլինի գործադիր իշխանության համար: Իրավական սահմանափակումները չեն կարող քննարկել կիրառման ոլորտը, բայց պետք է տարածվեն հայեցողական լիազորությունների իրականացման կարգի վրա: Ազատությունը որպես անկախություն թելադրում է ոչ միայն կառավարում պարզ ու հանրայնացված կանոնների հիման վրա, որոնք սահմանափակում են գործողությունների ազատությունը կոնկրետ դեպքերում պաշտոնական որոշում ընդունելիս, այլև անհրաժեշտ իրավական ընթացակարգի խիստ չափորոշիչների՝ պատշաճ ընթացակարգի կիրառում: Պատշաճ իրավական ընթացակարգի սկզբունքն ընկած է իրավունքի գերակայության հիմքում և պահանջում է, որ յուրաքանչյուր ուղղվածություն պետության հարկադիր իշխանության տեսանկյունից արդարացվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի հանդեպ ընդհանուր կանոնների կիրառության ճշտության ու հիմնավորվածության տեսանկյունից: Դատավարական բնական ու անկողմնակալ արդարադատության սկզբունքները պետք է լրացվեն բանականության դատողություններով, և դիտարկվող լիազորությունները պետք է օգտվեն միայն օրենքով նախատեսված նպատակների ձեռքբերումից: Չնայած պաշտոնատար անձը կամ պետական մարմինը կարող է ունենալ վերջնական որոշում ընդունելու իրավունք, բայց դատարանները կարևոր սահմանադրական գոր-

ծառայթ են կատարում նրանց ընտրության օրինական շրջանակների սահմանման մեջ, հետևաբար՝ որոշումը պետք է հիմնվի միայն գործով հանգամանքների վրա՝ անտեսելով յուրաքանչյուր հարց, որը կողմնակի է կամ կապված չէ օրենքով սահմանված գործառայթի հետ:

Տեսությունում և պրակտիկայում տարբերակվում են ֆորմալ և բովանդակային դատական վերահսկողություն:

Հանրային վարչակազմի ակտերի ֆորմալ դատական վերահսկողությունը վարչական ակտի իրավական տարրերի ստուգումն է, որոնք սահմանում են դրա արտաքին չափումները: Ֆորմալ վերահսկողության դեպքում ստուգվում է՝

ա) հեղինակ-մարմնի ակտի ընդունման հանդեպ իրավասությունը: Մարմնի լիազորությունների մասին հարցի լուծումը, որն ընդունել է վիճարկելի ակտը, համարվում է ֆորմալ դատական վերահսկողության առաջին ու կարևորագույն սկզբունքը: Վերջինս ենթադրում է հետևյալ հարցերի պարզաբանումը. արդյոք մարմինն ունի այսպիսի ակտի ընդունման իրավասություն, արդյոք դա ընդունված է մարմնին տրամադրված իրավասությունների շրջանակներում, այս ակտով խախտված չէ օրենքը, արդյոք չի հակասում նպատակներին, հանուն որոնց այս մարմինն ստացել է իր լիազորությունները: Այս հարցերին բացասական պատասխանն առաջացնում է ակտի անօրինականության ճանաչում: Մարմնի՝ ակտի ընդունման իրավասությունն ստուգվում է դրա իրավասության բոլոր չորս տեսակների շրջանակներում. առարկայական՝ *ratione materiae*, սուբյեկտիվ՝ *ratione personae*, տարածքային՝ *ratione loci*, ժամանակային՝ *ratione temporis*.

բ) ակտի հրապարակման ընթացակարգի կամ իշխանական ազդեցության կատարման ընթացակարգի՝ օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխանությունը.

գ) ակտի ձևի համապատասխանությունն օրենքով սահմանված ձևաչափին:

Ստուգվում են նաև ակտի հեղինակի ստորագրության առկայությունը, ակտի ընդունման ժամկետի առկայությունը և այլ ֆորմալ տար-

¹⁰ Տե՛ս Павликов С. Г. Идеалы правового государства: о некоторых исторических, юридических и экономических аспектах концепции /Государство и право. 2014. № 1. էջ 85-86:

րեր, որոնք վկայում են օրենքին ակտի իրավականության (հսկության) մասին:

Բովանդակային վերահսկողությունը վարչական ակտի նյութական տարրերի ստուգումն է, որոնք արտահայտում են այդտեղ ամփոփված որոշման բնույթը: Բովանդակային վերահսկողության ընթացքում կարող են ստուգվել՝

ա) վարչական ակտի առարկայի համապատասխանությունն իրավունքի նորմի բովանդակությանը, որի իրականացման համար ակտն ընդունվում է,

բ) ակտի հիմնավորվածությունը, այսինքն՝ պարզաբանվում է.

- չկամ արդյոք փաստացի սխալ ակտի հիմնավորման մեջ, արդյոք ակտն ընդունված է իրական կամ աղճատված փաստերի հիման վա: Փաստացի սխալը տեղի ունի, եթե ակտն ընդունվել է ոչ ճշգրիտ շարադրված փաստերի ու տվյալ

որոշմանը չհամապատասխանող որոշման փաստերի հիման վրա,

- չկամ արդյոք իրավական սխալ ակտի հիմնավորման մեջ, արդյոք ճիշտ է ընտրված ու մեկնաբանված իրավական նորմը: Որպես իրավական սխալ դիտարկվում է իրավիճակը, երբ փաստերը գնահատվում են ճիշտ, բայց ակտն ընդունված է սխալ շարադրված, սխալ ընտրված ու սխալ մեկնաբանված իրավական նորմի հիման վրա,

գ) չկամ արդյոք իրավասությունների չարաշահում, այսինքն՝ համապատասխանում է ակտի նպատակն այն նպատակին, որի իրականացման համար ակտն ընդունվել է: Ստուգվում է նաև, թե արդյոք տրամադրված իրավասություններն անձնական կամ խմբային շահերի համար չեն օգտագործվում:



ԱՐՄԵՆՈՒՎԻ ՉԻՖԼԻԿՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՉԻՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐԻ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զրպարտությունն անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Զրպարտության դեպքում անձի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը ոտնձգելու նպատակը տվյալ անձի հետ համագործակցելու՝ այլ անձանց պատրաստակամությունը նվազեցնելն է, նրա հետ շփումը մշտապես կամ ժամանակավորապես շրջապատող հասարակական միջավայրում բացառելը:¹ Անձի պատվի կամ հեղինակության նկատմամբ ոտնձգության կատարումը նշանակում է, որ հայցվորն զգում է իր մասին հասարակական կարծիքի փոփոխություն կամ հավանական է համարում այդպիսի փոփոխությունը:²

Ինչպես հայտնի է՝ անձի պատվի և արժանապատվության բովանդակությունը փոփոխվում է ժամանակի ընթացքում:³ Սակայն միայն այն դեպքում, երբ ոտնձգություն է կատարվում հիշյալ ոչ նյութական բարիքների նկատմամբ, կարիք է լինում հստակեցնել կոնկրետ անձի պատվի և արժանապատվության բովանդակու-

թյունը:⁴ Միջազգային իրավական հարթության մեջ արատավորող տեղեկությունների տարածումը հայտնի է «դիֆամացիա» անվանմամբ: Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ «դիֆամացիա» տերմինի բացակայությունը չի նշանակում դրա՝ որպես երևույթի բացակայություն: Դիֆամացիան այն իրավական ինստիտուտն է, որի միջոցով, մի կողմից, իրականացվում է պատվի, արժանապատվության և գործարար համբավի իրավունքների, իսկ մյուս կողմից՝ խոսքի ազատության պաշտպանություն:⁵

«Դիֆամացիա» եզրն ունի լատինական ծագում՝ լատիներեն «diffamatio» (թերությունների մասին հրապարակում, տարածում, պատվազրկում)⁶ բառից: ՌԴ Բարձրագույն դատարանի պլենումի 2005 թվականի փետրվարի 24-ին կայացված որոշման համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում կիրառվող «դիֆամացիա» հասկացությունը նույնական է «իրականությանը չհամապատասխանող արատավորող տեղեկությունների տարածման» հետ: Ցանկացած դիֆամացիոն վեճի էությունը մեկն է. լուծում տալ հեղինակության իրավունքի և խոսքի ազատության միջև առաջացած բախմանը:⁷

Մայրցամաքային իրավունքի երկրներում դիֆամացիան կարող է դիտարկվել Ա որպես

¹ Stú Bower G.S., «A Code of the Law of Actionable Defamation with a continuous Commentary and Appendices», Sweet and Maxwell, L., 2010թ., էջ 289:

² Stú Симонов А.К. и Горбаневский М.В., «Понятия чести, достоинства и деловой репутации: спорные тексты СМИ и проблемы их анализа и оценки юристами и лингвистами», Изд. 2-е, перераб. и доп., Медя, М., 2004թ., էջ 12:

³ Stú Черепихин Б.Б., «Охрана личных прав граждан, не связанных с имущественными правами» // «Антология уральской цивилистики. 1925-1989: Сборник статей», «Статут», М., 2001թ., էջ 290:

⁴ Stú Соловьев В., «Ценны наряду с жизнью» // «Понятия чести, достоинства и деловой репутации: спорные тексты СМИ и проблемы их анализа и оценки юристами и лингвистами», изд. 2-е, перераб. и доп., под ред. А.К. Симонова и М.В. Горбаневского, М., Медя, 2004թ., էջ 262:

⁵ Stú Свинцова М., «Противодействие диффамации по российскому гражданскому законодательству», ЗАО «Юстицинформ», 2013թ., էջ 11:

⁶ Stú Тышкевич С., «Краткий латинско-русский богословский словарь», Russian center, Fordham university, N.Y., 1954թ., էջ 37:

⁷ Stú Потапенко С.В., «Диффамация и российская судебная практика в контексте опыта Европейского суда по правам человека», <http://archive.is/xDUZP#selection-319.47-319.48> (20.05.2017թ. դրությամբ):

քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործություն, և որպես քաղաքացիական իրավախախտում: Մասնավորապես՝ Գերմանիայում և Ֆրանսիայում արատավորող տեղեկությունների տարածումն առաջին հերթին քրեական իրավանորմների կիրառման հիմք է: Չնայած դրան՝ նշված հանցագործության համար ազատագրվումը՝ որպես պատիժ, գրեթե չի նշանակվում: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության տվյալների համաձայն՝ ազատագրվումը «խոսքի միջոցով կատարված հանցագործությունների» նկատմամբ կիրառվում է հիմնականում Արևելյան Եվրոպայի և Բալկանյան երկրներում, ինչպես նաև ԽՍՀՄ նախկին հանրապետություններում:⁸ Իսկ ընդհանուր իրավունքի երկրներում դիֆամացիան հիմնականում հանդես է գալիս որպես քաղաքացիական իրավախախտում:⁹

Իրավաբանական գրականության մեջ սովորաբար առանձնացվում են դիֆամացիայի հետևյալ երեք հատկանիշը՝ տեղեկությունների տարածման փաստը, դրանց արատավորող բնույթը և անհամապատասխանությունն իրականությանը: Ա. Գուսալովան մատնանշում է դիֆամացիայի համար վրա հասնող պատասխանատվության ևս մեկ պայման՝ տեղեկությունների տարածման՝ հանրային շահով պայմանավորված չլինելու հանգամանքը:¹⁰ Կարծում ենք՝ դիֆամացիայի հատկանիշների վերաբերյալ առավել ամբողջական նկարագիր տրվել է Ե. Գավրիլովի կողմից: Նա առանձնացնում է դիֆամացիայի՝ որպես արարքի հետևյալ տարրերը՝ տեղեկությունների տարածման փաստը, արատավորող բնույթը, իրականությանը չհամապատասխանելը, տեղեկությունների վերաբերելիությունը կոնկրետ անձին, տեղեկությունների՝ փաստի հաստատում հանդի-

սանալը և այն հանգամանքների բացակայությունը, որոնց ուժով անձը ենթակա չէ պատասխանատվության դիֆամացիայի համար:¹¹

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանը՝ Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին, թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով 2012 թվականի ապրիլի 27-ի իր որոշմամբ արձանագրել է, որ՝ 1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, 2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային, 3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի, 4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Փաստացի տվյալներ ասելով՝ պետք է հասկանալ այնպիսիք, որոնք պարունակում են կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ. տեղեկատվությունը չպետք է լինի վերացական:

Ինչ վերաբերում է հրապարակայնությանը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի հստակեցնում այդ հասկացությունը: Ըստ Գ. Բեքմեյանի՝ այդ ասելով պետք է հասկանալ տեղեկատվության տարածման այն եղանակը, երբ դա հասանելի է դառնում անորոշ թվով անձանց:¹² Ինչպես բխում է ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումից՝ հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ ներկայացված փաստերը:¹³

⁸ Տե՛ս Дикман С.С., «Проблемы ответственности за диффамацию: зарубежный опыт и международные стандарты» // Пределы правового пространства свободы прессы (российские споры с участием СМИ в контексте мировой практики). РИО «Новая юстиция», М., 2002թ., էջ 39-40:

⁹ Տե՛ս Дикман С.С., նշված աշխատությունը, նույն տեղում:

¹⁰ Տե՛ս Каменева З.В., «Диффамация и ее признаки», <http://lexandbusiness.ru/view-article.php?id=3297> (20.05.2017թ. դրությամբ):

¹¹ Տե՛ս Гаврилов Е.В., «Гражданско-правовая диффамация как гражданско-правовое нарушение»// «Налого», 2010թ., N29, <https://www.lawmix.ru/bux/7001> (20.05.2017թ. դրությամբ):

¹² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Տ.Կ. Բարսեղյանի և Գ.Հ. Ղարախանյանի խմբ., Երրորդ մաս, 4-րդ հրատարակություն, ԵՊՀ հրատարակչություն, 2011թ., էջ 61:

¹³ Տե՛ս «Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի»՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին, թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը:

Այժմ անդրադառնանք տեղեկությունների արատավորող բնույթին: Այս առումով պետք է նշել, որ միևնույն տեղեկությունը մեկ անձի կողմից կարող է ընկալվել որպես արատավորող, նրան պատվազրկող, իսկ մեկ այլ անձի կողմից՝ որպես չեզոք կամ նույնիսկ պատիվ բերող: Այս առումով նպատակահարմար է ելնել «ողջամիտ միջին մարդու» գաղափարից, որի համաձայն՝ համեմատելի հանգամանքներում ողջամիտ մարդն իրեն կհամարեր արատավորված՝ ունենալով որոշակի բացասական ապրումներ:¹⁴ Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ դիֆամացիայի վերաբերյալ գործեր քննելիս դատարանները պետք է ելնեն արատավորում համարվելու մասին տվյալ հասարակությունում տվյալ ժամանակաշրջանում իշխող պատկերացումներից:

Տեղեկատվության արատավորող բնույթի հետ կապված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի» վերաբերյալ գործով ընդգծել է, որ խոսքի ազատությունը տարածվում է ոչ միայն այնպիսի տեղեկատվության և գաղափարների վրա, որոնք ընդունվում են որպես բարիդրացիական կամ չեզոք, այլև այնպիսիների վրա, որոնք անհանգստություն են պատճառում:¹⁵ Յուրաքանչյուր գործով դատարանն ինքը պետք է որոշի՝ արդյոք կոնկրետ տվյալն ունի արատավորող բնույթ, թե՛ ոչ: Ինչպես նշել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԿԴ/2293/20/10 քաղաքացիական գործով կայացված վճռով՝ դատարանն է որոշում տարածված տեղեկությունների արատավորող բնույթը՝ ելնելով ձևավորված բարոյական նորմերից, գործարար սովորույթներից, տարածված տեղեկությունների արժևորման հասարակական պատկերացումներից, ուստի եթե տարած-

ված տեղեկությունները հանրության կողմից դատապարտելի կամ պարսավելի են, ապա այդպիսիք համարվում են արատավորող:

Ըստ էության՝ արատավորող կարող են համարվել անձի կենսագործունեության տարբեր բնագավառներին վերաբերող տեղեկությունները, մասնավորապես՝ մասնագիտական և աշխատանքային պարտականությունների կատարման, հանցավոր գործունեությամբ զբաղվելու, ծնողական պարտականությունների կատարման, բարոյապես դատապարտելի արարքների, սանձարձակության և այլ բնույթի տեղեկությունները:¹⁶

Այն դեպքում, երբ տարածվում են հավաստի արատավորող տեղեկություններ, որոնք, սակայն, համապատասխանում են իրականությանը, զրպարտությունը բացակայում է: Սակայն անգլիական իրավունքին հայտնի է մեկ բացառություն. խոսքն անձի դատվածության մասին է: Անգլիական իրավական դոկտրինի և դատական պրակտիկայի համաձայն՝ մարված դատվածությունը ցանկացած հարաբերությունում պետք է դիտարկվի որպես երբևիցե գոյություն չունեցած փաստ:¹⁷ Այս առնչությամբ քաղաքական գործիչների դատվածության վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ «Շվաբեն ընդդեմ Ավստրիայի» գործով նշելով, որ քաղաքական գործիչների նախկին դատվածությունն իրենց հանրային վարքագծի հետ կարող է ծանրակշիռ գործոն դառնալ նրանց քաղաքական գործառույթների իրականացման գնահատման համար, ուստի քաղաքական գործիչի դատվածության մասին հայտնելը հրապարակողին պատասխանատվության ենթարկելու հիմք չէ:¹⁸

Գործնականում անհնարին է օրենքում արատավորող տեղեկությունների ցանկ սահմա-

¹⁴ Տե՛ս Будякова Т.П., «Индивидуальность потерпевшего и моральный вред», Юридический центр Пресс, Санкт-Петербург, 2005թ., էջ 20:

¹⁵ Տե՛ս «Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1991 թվականի մարտի 23-ի վճիռը, http://mmdc.ru/praktika_evropejskogo_suda/praktika_po_st10_evropejskoj_konvencii/europ_practice67/ (20.05.2017թ. դրությամբ):

¹⁶ Տե՛ս Բարսեղյան Ս.Կ., «Անձնական ոչ գույքային իրավունքները և դրանց պաշտպանությունը», ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետ, Երևան, 2000թ., էջ 16:

¹⁷ Տե՛ս Эрделевский А.М., «Компенсация морального вреда», Р. Валент, М., 2007թ., էջ 162:

¹⁸ Տե՛ս «Շվաբեն ընդդեմ Ավստրիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 1992 թվականի օգոստոսի 28-ին կայացված վճիռը, http://mmdc.ru/praktika_evropejskogo_suda/praktika_po_st10_evropejskoj_konvencii/eu-rop_practice82/ (20.05.2017թ. դրությամբ):

ները ոչ միայն այդպիսի տեղեկությունների մեծաքանակության, այլև այն պատճառով, որ միևնույն տեղեկությունը մի իրավիճակում կարող է լինել արատավորող, իսկ մեկ այլ իրավիճակում՝ ոչ: Այսպես, սեռից, մասնագիտությունից, ընտանեկան դրությունից, տարիքից կախված՝ միևնույն տեղեկությունը կարող է համարվել կամ չհամարվել արատավորող, քանի որ տարբեր են նաև հասարակության պահանջները թվարկված խմբերին պատկանող անձանց նկատմամբ, օրինակ՝ իրավաբանական գիտելիքների չիմացության համար քննադատությունը՝ ուղղված մասնագիտությամբ իրավաբանին և մասնագիտությամբ քիմիկոսին:¹⁹

Ինչպես նշում են Ա. Բելյավսկին և Ն. Պրիդվորովը՝ անձին հնարավոր է արատավորել նաև որոշ փաստերի մասին լռելով, օրինակ՝ հրապարակել, որ անձը «անխիղճ մարդասպան» է, սակայն չնշել, որ նա գործել էր անհրաժեշտ պաշտպանության վիճակում:²⁰

Գրականության մեջ հարց է բարձրացված՝ արդյոք կարող են արատավորող համարվել անձին իրավախախտման կատարման փաստ վերագրող տեղեկությունները, և արդյոք իրավունքի ցանկացած նորմի խախտման մասին տեղեկատվությունն է արատավորող, թե՛, օրինակ՝ միայն հանցագործությունների՝ որպես հանրային առավել բարձր վտանգավորություն ունեցող արարքների կատարման մասին տեղեկությունները: Մենք համակարծիք ենք այն տեսակետին, ըստ որի՝ ցանկացած իրավախախտում, նույնիսկ այնպիսին, որը, ըստ էության, մեծ առնչություն չունի բարոյականության հետ, օրինակ՝ դատավարական ժամկետների խախտումը, գույքի նկատմամբ իրավունքների գրանցման կարգի խախտումը և այլն, անհրաժեշտ է դիտարկել որպես ոչ միայն իրավական, այլև բարոյական պարտականության խախտում, հետևաբար՝ տեղեկությունն այդ մասին կարող է դիտարկվել որպես անձին արատավորող:²¹

Հետաքրքիր է այն հարցի պարզաբանու-

մը, թե արդյոք քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթակամ է այն անձը, ով իրավապահ մարմիններին հաղորդում է ներկայացրել կոնկրետ անձի կողմից հանցագործության կատարման մասին, որը, սակայն, հետագայում չի հաստատվել: Այս առումով Ս. Պոտապենկոն երկու հարցադրում է անում՝ կարող է արդյոք պատասխանատվության ենթարկվել բարեխիղճ մոլորության մեջ ընկած անձը, և արդյոք նման մոլորությունը հիմք է հայցի մերժման համար:²² Ըստ նշված հեղինակի՝ անհրաժեշտ է, որ հաղորդումն ուղղված լինի բացառապես իրավապահ մարմիններին, որոնց վրա օրենքով դրված է հաղորդումների քննարկման և լուծման պարտականություն: Այդ իսկ պատճառով, եթե օրինապահ քաղաքացին հանցագործության կատարման մասին հայտնում է իրավապահ մարմիններին, ապա միայն այդ փաստն ինքնին չի կարող հանգեցնել նրա քաղաքացիաիրավական պատասխանատվությանը, քանի որ դիֆամացիան չի ենթադրում հանցագործության մասին հայտնում իրավապահ մարմնին:

«Զրպարտության» հատկանիշների վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի նոյեմբերի 15-ին կայացված 997-րդ որոշմամբ, որով ընդգծել է, որ զրպարտությունը, ինչպես և վիրավորանքը, անհրաժեշտ է դիտարկել դիտավորության, անձին անվանարկելու մտադրության համատեքստում:

Մեր կարծիքով՝ միայն դիտավորությամբ կատարված լինելու դեպքում արարքը զրպարտություն համարելը էապես նեղացնում է զրպարտությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանությունը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ զրպարտությունը կատարվել է անզգուշությամբ, այսինքն՝ երբ զրպարտողը անձի հեղինակությունն արատավորելու նպատակ չի հետապնդել, բայց, միևնույն ժամանակ, չի ցուցաբերել անհրաժեշտ շրջահայացություն և հոգածություն՝ պար-

¹⁹ Տե՛ս Белявский А., Придворов С., «Охрана чести и достоинства граждан СССР», Юридическая литература, М., 1976թ., էջ 64:

²⁰ Տե՛ս Белявский А., Придворов С., նշված աշխատությունը, էջ 63:

²¹ Տե՛ս Белявский А., Придворов С., նշված աշխատությունը, էջ 67:

²² Տե՛ս Потапенко В., «Диффамация и российская судебная практика в контексте опыта Европейского суда по правам человека», <http://archive.is/xDUZP#selection-319.47-319.48> (20.05.2017թ. դրությամբ):

գելու համար իր կողմից տարածված տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանությունը: Հարկ է նշել, որ ամերիկյան իրավունքում նման խիստ մոտեցում նախատեսված է միայն հանրային անձանց մասին արատավորող տեղեկությունների տարածման վերաբերյալ գործերով: Այսինքն՝ իրավախախտի դիտավորությունն անհրաժեշտ է ապացուցել միայն այն դեպքում, երբ որպես տուժող հանդես է գալիս հասարակական ճանաչում ունեցող անձը, իսկ եթե տուժողը մասնավոր անձ է, ապա բավարար է ցույց տալ իրավախախտի անզգուշությունը:

Եվ, ի վերջո՝ անզգուշությունը հաշվի առնելը նպաստում է հասարակության անդամների միջև ընդհանուր քաղաքավարության կանոնների ամրապնդմանը:²³

Կարծում ենք՝ այն հանգամանքը, որ ՀՀ ներկա իրավակարգավորման պայմաններում էլ անզգուշությամբ կատարվելու դեպքում արարքը կհամարվի զրպարտություն, վկայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը, որի համաձայն՝ արարքը չի համարվում զրպարտություն, եթե տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

Ինչպես մեկնաբանել է վերոնշյալ դրույթը ՀՀ Վճռաբեկ դատարանը²⁴՝ «դա նշանակում է, որ անձը պետք է ապացուցի, որ մինչ տվյալներ հրապարակելն ինքը ձեռնարկել է միջոցներ, որոնք հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին համապատասխանել իրականությանը: Անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարե-

խիղճ և հավասարակշռված. բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք, իսկ «հավասարակշռված» եզրույթը նշանակում է, որ պետք է լինի հավասարակշռվածություն ներկայացվող փաստացի տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով»:

ՀՀ Սահմանադրական դատարանն էլ իր 997-րդ որոշմամբ ընդձեռնել է, որ նշված դրույթն արտացոլում է միջազգային պրակտիկայում ձևավորված «ողջամիտ հրապարակումների» պաշտպանության սկզբունքը, որի համաձայն՝ անձն ազատվում է զրպարտություն համարվող տեղեկություն տարածելու համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխղճորեն՝ առանց տուժողի հեղինակությանը վնաս պատճառելու դիտավորության:

Ինչպես ցույց է տալիս անգլիական իրավունքից փոխառված և որոշակի փոփոխությունների ենթարկված՝ վերոնշյալ դրույթի ուսումնասիրությունը՝ խոսքը, ըստ էության, տեղեկատվությունն անզգուշաբար տարածելու մասին է: Այստեղից էլ հետևում է, որ մեղքի առկայության դեպքում օրենքն արատավորող տեղեկությունների հրապարակային ներկայացումը համարվում է զրպարտությունից բացառություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասով նախատեսված բացառությունների համատեքստում: Ուստի կարող ենք եզրակացնել, որ մնացած բոլոր դեպքերում, երբ արատավորող տեղեկությունների տարածումը կատարվում է անզգուշորեն, օրենքը չի ազատում իրավախախտին պատասխանատվությունից՝ նրա կատարած արարքը համարելով պատասխանատվության հանգեցնող:

Պետք է նշել, որ անզգուշությունը ևս զրպարտություն կազմող իրավախախտման կազմում ներառելն ունի մի շարք առավելություններ: Նախ՝ դա թույլ կտա արդյունավետորեն պաշտպանել անձանց պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը՝

²³ Տե՛ս Milo D., «Defamation and freedom of speech», Oxford University Press, New York, 2008թ, էջ 211:

²⁴ Տե՛ս «Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի»՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին, թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը:

միևնույն ժամանակ թույլ չտալով իրավախախտներին խուսափել պատասխանատվությունից:²⁵ Բացի այդ՝ անզգուշության՝ որպես մեղքի ձևի կիրառումը նշված կատոգորիայի գործերով անհրաժեշտ է՝ հաշվի առնելով հասարակության տեղեկացված, այլ ոչ թե ապատեղեկացված լինելու շահը:²⁶

Փաստորեն, արարքը զրպարտություն դիտելու համար անհրաժեշտ է, որ փաստացի տվյալները չհամապատասխանեն իրականությանը, լինեն արատավորող և ներկայացվեն հրապարակային: Բայց հնարավոր են դեպքեր, երբ հրապարակայնորեն հաղորդվեն իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալներ, որոնք, սակայն, իրենց բնույթով արատավորող չեն: Չէ՞ որ նման արարքները պակաս վտանգավոր չեն, քանի որ կարող են զգալի վնաս պատճառել տուժողին, չնայած ուղղված չեն նրա պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի դեմ: Օրինակ՝ տարածվում է տեղեկատվություն այն մասին, որ որոշակի բնագավառում աշխատող անձը կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ այնս չի աշխատում, ինչի պատճառով նրա պոտենցիալ հաճախորդները պայմանագրային հարաբերություններ չեն հաստատում նրա հետ: Ուստի նշված և նմանատիպ այլ դեպքերում անձը կարող է կրել մեծածավալ գույքային վնասներ:

Պետք է նշել, որ անգլոամերիկյան իրավունքին հայտնի է իրավախախտման այս տեսակը՝ «չարամիտ սուտը», որի կարգավորումներն ուղղված են գլխավորապես անձանց տնտեսական շահերի պաշտպանությանը:²⁷

Փաստորեն, նկարագրված իրավիճակից պաշտպանվելու հնարավորություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չէ:

Իսկ ինչպե՞ս կարող է անձն իր իրավունքները պաշտպանել այն դեպքում, երբ հաղորդված տեղեկությունները թեև արատավորող են, սակայն համապատասխանում են իրականությանը: Տվյալ դեպքում, փաստորեն, ներխուժում է կատարվում անձի մասնավոր կյանք, և

իրավախախտը կարող է ենթարկվել նույնիսկ քրեական պատասխանատվության՝ անձի անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի տարածելու համար:

Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ քրեական պատասխանատվություն նախատեսված է ոչ միայն վերը նշված, այլև այն դեպքերի համար, երբ զրպարտության են ենթարկվում դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննություն կատարող անձը և դատական ակտերի հարկադիր կատարողը: Փաստորեն, ստացվում է, որ այն դեպքում, երբ տուժողը վերը թվարկված հատուկ սուբյեկտներն են, իրավախախտը կարող է ենթարկվել ինչպես քաղաքացիաիրավական, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար քրեական պատասխանատվության:

Կարծում ենք, որ նման մոտեցումը չի համապատասխանում արատավորող տեղեկությունների տարածումից անձի իրավական պաշտպանության արդի զարգացումներին: Այսպես՝ Եվրոպայի խորհրդարանական վեհաժողովի կողմից 2007 թվականին ընդունվել է զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ բանաձևը՝ ընդգծելով այն հանգամանքը, որ զրպարտության համար քրեական պատասխանատվության նախատեսումը լրջորեն վտանգում է արտահայտվելու ազատությունը:

Ճիշտ է՝ քրեական և քաղաքացիական պատասխանատվությունները չեն բացառում միմյանց, սակայն, հաշվի առնելով միջազգային հանրության կողմից զրպարտության ապաքրեականացման միտումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ որպես փոխհատուցման միջոց բավականին մեծ գումար է (մինչև նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկը) նախատեսված զրպարտության համար, կարծում ենք, որ նպատակահամար չէ որոշ սուբյեկտների զրպարտության համար սահմանել քրեական պատասխանատվություն:

²⁵ Տե՛ս Milo D., նշված աշխատությունը, էջ 210:

²⁶ Տե՛ս Milo D., նշված աշխատությունը, նույն տեղում:

²⁷ Տե՛ս <http://www.out-law.com/en/topics/tmt—sourcing/media-law/malicious-falsehood/> (20.05.2017թ. դրությամբ):

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Ջրպարտությունը չի կարող դիտարկվել միայն իրավախախտ անձի դիտավորության համատեքստում, և բոլոր այն դեպքերը, երբ իրավախախտն արատավորող և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները տարածել է անզգուշությամբ, ևս պետք է դիտարկվեն որպես զրպարտություն:
2. ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորված չէ իրավախախտման այնպիսի տեսակ, երբ տարածվում են իրականությանը չհամապատասխանող, սակայն ոչ արատավորող տեղեկություն-

ներ, ինչի պատճառով անձը վնաս է կրում: Կարծում ենք՝ նշված բացը պետք է լրացվի:

3. Ջրպարտության ապաքրեականացման պայմաններում դեռևս քրեական օրենքով արգելված արարք է դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին և դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը: Նշված մոտեցումը մեր կարծիքով, արդարացի համարվել չի կարող, քանի որ խախտում է զրպարտության ապաքրեականացման համատեքստում տուժողների իրավահավասարությունը:



ՏԻԳՐԱՆ ՆԱԴԴԱԼՅԱՆ

ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐԸ

Հանրահայտ է, որ պառլամենտը խորհրդարանական վերահսկողություն իրականացնում է ոչ միայն անմիջականորեն, այլև իր մարմինների միջոցով, ինչը նախ և առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիր և այլ գործառույթների իրականացումը խորհրդարանից բավականին մեծ ժամանակ և ռեսուրսներ է պահանջում: Բացի այդ՝ խորհրդարանական վերահսկողությունն ընդգրկում է գործադիր իշխանության գործունեության չափազանց լայն շրջանակներ, հետևաբար՝ վերահսկողության արդյունավետ համակարգ ձևավորելու գործում պառլամենտն անհրաժեշտաբար պետք է դիմի նաև իր մարմինների օժանդակությանը, որոնց շարքում էլ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում մշտական հանձնաժողովները¹: Վերջիններիս կազմում ընդգրկվում են համապատասխան մասնագիտություն կամ ոլորտների նկատմամբ հետաքրքրություն ունեցող պատգամավորներ, ովքեր հանձնաժողովներում հնարավորություն են ստանում ավելի հանգամանորեն ծանոթանալու ոլորտային խնդիրների էությանը և մասնագիտանալու տվյալ բնագավառի հարցերում:

Բացի այդ՝ մշտական հանձնաժողովներում համապատասխան մասնագետների և փորձագետների մասնակցությամբ տեղի է ունենում հարցերի առավել խոր, համակողմանի և բովանդակային քննարկում: Ընդ որում՝ հանձնաժողովում քննարկումները, որպես կանոն, անցնում են ավելի ոչ պաշտոնական ընթացակարգով, քան տեղի է ունենում խորհրդարանի

լիազումար նիստերին: Նշված հանգամանքները բարենպաստ միջավայր են ստեղծում գործադիր իշխանության գործունեության նկատմամբ մշտական հանձնաժողովների միջոցով արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար:

Հենց նշված տրամաբանությամբ էլ 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխություններով² Ազգային ժողովի կողմից մշտական հանձնաժողովներ ստեղծելու նպատակների շարքում առաջին անգամ նախատեսվեց նաև խորհրդարանական վերահսկողության իրականացումը: Այսպես, ըստ Սահմանադրության 106-րդ հոդվածի (1-ին մաս)³ Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ ներառվող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ:

Ինչպես տեսնում ենք՝ վկայակոչված սահմանադրական իրավանորմը բավարարվել է միայն մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու իրավասության ամրագրմամբ և որևէ կանոնակարգում չի նախատեսել, թե այդ վերահսկողությունն ինչ շրջանակներ պետք է ընդգրկի: Նկատենք, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 10-րդ հոդվածը (1-ին մաս)³ նույնությամբ վերարտադրում է Սահմանադրու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

¹ Գործադիր իշխանության նկատմամբ պառլամենտի վերահսկողական լիազորությունները հանձնաժողովների միջոցով իրականացնելու պրակտիկան լայնորեն կիրառվում է բազմաթիվ պետություններում (ԱՄՆ, ՌԴ, Իտալիա, Գերմանիա, Իսպանիա, Պորտուգալիա, Ավստրիա, Չեխիա, Խորվաթիա, Լեհաստան, Հունգարիա և այլն), տե՛ս, օրինակ՝ Коврякова Е.В. Парламентский контроль в зарубежных странах (Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук). М., 2002, էջ 60 (https://new-disser.ru/product_info.php?products_id=956189):

² Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118:

³ Ընդունվել է 16.12.2016թ., ուժի մեջ է մտել 14.01.2017թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2017.01.25/5(1280):

թյան հիշյալ նորմի բովանդակությունը, և դրանով նույնպես անուշադրության են մատնվել մշտական հանձնաժողովների կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներին վերաբերող հարցերը:

Քննարկվող խնդրի պարզաբանման նպատակով հարկ է ուշադրություն դարձնել Կանոնակարգի մի շարք իրավադրույթների, որոնց համակարգային վերլուծության շնորհիվ հնարավոր է դառնում որոշակի պատկերացում կազմելու մշտական հանձնաժողովների կողմից իրականացվող խորհրդարանական վերահսկողության շրջանակների մասին: Մասնավորապես՝ Կանոնակարգի 10-րդ հոդվածի (2-րդ մաս) համաձայն՝ մշտական հանձնաժողովներն ստեղծվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանում՝ Ազգային ժողովի որոշմամբ, ինչի վերաբերյալ նախագիծ ներկայացնելու իրավունք ունեն խմբակցությունները: Ըստ Կանոնակարգի 112-րդ հոդվածի (1-ին մաս)՝ մշտական հանձնաժողովների ստեղծման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծով, ի թիվս այլ տեղեկությունների, սահմանվում է նաև հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության շրջանակը: Այս առումով ուշագրավ է «մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողությունը» վերտառությամբ Կանոնակարգի 122-րդ հոդվածում (1-ին մաս) ամրագրված իրավակարգավորումն առ այն, որ մշտական հանձնաժողովները Կանոնակարգի 112-րդ հոդվածով (1-ին մասի 5-րդ կետ) սահմանված իրենց իրավասությունների շրջանակում խորհրդարանական վերահսկողություն են իրականացնում օրենքների կատարման ընթացքի նկատմամբ: Ավելին՝ նույն հոդվածում (7-րդ մաս) մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության շրջանակներում է նախատեսված նաև պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ Կանոնակարգի 112-րդ և 122-րդ հոդվածների միջև առկա է հակասություն այն առումով, որ, ըստ 112-

րդ հոդվածի՝ հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության շրջանակը սահմանվում է Ազգային ժողովի որոշմամբ, մինչդեռ 122-րդ հոդվածով արդեն իսկ սահմանված են մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության որոշակի շրջանակներ, այն է՝ օրենքների և պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը: Ստացվում է, որ Կանոնակարգի 112-րդ հոդվածի (1-ին մասի 5-րդ կետ) ուժով՝ մշտական հանձնաժողովների ստեղծման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեցող խմբակցությունները պարտավոր են այդ նախագիծում սահմանել նաև հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության շրջանակը, ինչը կարող է բովանդակային առումով լինել առավել լայն կամ նեղ, քան նախատեսված է 122-րդ հոդվածում:

Բացի այդ՝ Կանոնակարգի 112-րդ հոդվածում (1-ին մասի 5-րդ կետ) խոսվում է մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության շրջանակի մասին՝ այն դեպքում, երբ 122-րդ հոդվածը, հղում անելով Կանոնակարգի հիշյալ իրավադրույթին, օգտագործում է մշտական հանձնաժողովների իրավասությունների շրջանակ արտահայտությունը: Ակներև է, որ օրենսդիրը միևնույն միտքն արտահայտելիս կիրառել է տարբեր բառեր՝ խախտելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի (4-րդ մաս)⁴ պահանջները: Որպես արդյունք, ստեղծվել է իրավական շփոթ, որը հարթելու համար, կարծում ենք, նպատակահարմար է հենց Սահմանադրության մակարդակով ընդհանրական ձևով սահմանել մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության շրջանակները, ինչը կստեղծի անհրաժեշտ իրավական նախադրյալներ Կանոնակարգում դրանց հետագա մանրամասն կարգավորման համար:

Միաժամանակ՝ հարկ է նշել, որ Կանոնակարգի 122-րդ հոդվածում բավականին սահմանափակ կերպով են ամրագրվել մշտական հանձնաժողովների վերահսկողական լիազո-

⁴ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 03.04.2002թ., ուժի մեջ է մտել 31.05.2002թ., տես ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ.344) 36-րդ հոդվածի (4-րդ մաս) համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:

րությունները: Խնդիրն այն է, որ օրենքների և պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունից զատ՝ կան գործադիր իշխանության գործունեության այլ բաղադրիչներ ևս, որոնց նկատմամբ նույնպես հարկ է մշտական հանձնաժողովների միջոցով իրականացնել խորհրդարանական վերահսկողություն: Խոսքն այն մասին է, որ, բացի պետական բյուջեով նախատեսված միջոցներից՝ համապատասխան ոլորտի առջև դրված խնդիրների և առաջնահերթությունների իրագործման համար գործադիր իշխանության մարմինները որոշ դեպքերում օգտագործում են օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառություններ և վարկեր: Օրինակ՝ 2015 թվականի հունիսի 26-ին Երևանում ստորագրված «ՀՀ կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրով Ռուսաստանի Դաշնության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրել է 200 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով պետական արտահանման վարկ՝ ՀՀ պաշտպանունակության ամրապնդման նպատակով ռուսական արտադրության ռազմական նշանակություն ունեցող սպառազինության մատակարարումների ֆինանսավորման համար: Նշված համաձայնագրով նախատեսված գումարը կազմում է ՀՀ պետական բյուջեով պաշտպանության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների գրեթե կեսը, ինչի արդյունավետ և նպատակային օգտագործման մասին Ազգային ժողովի համապատասխան իրավասու մշտական հանձնաժողովը, մեր համոզմամբ, պետք է պարբերաբար ստանա անհրաժեշտ բոլոր տեղեկությունները և տարբեր գործիքների կիրառմամբ հնարավորություն ունենա իրականացնելու արդյունավետ վերահսկողություն:

Ավելին՝ միայն օրենքների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելով՝ շատ դեպքերում հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել ոլորտում

առկա իրական վիճակի և խնդիրների մասին: Պատճառն այն է, որ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ այս կամ այն բնագավառում իրականացվող բարեփոխումների և առանձին ծրագրերի կատարումը սահմանվում է ենթաօրենսդրական իրավական ակտերով, որոնք ընդունվել են ոչ ի կատարումն օրենքի: Մասնավորապես՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2015-2017 թվականների բարեփոխումների ծրագիրը սահմանված է կառավարության որոշմամբ⁵ (ընդունվել է ի կատարումն ՀՀ Նախագահի 2014 թվականի ապրիլի 23-ի ՆԿ-53-Ա կարգադրության), որում տարբեր ուղղություններով նախատեսված են ոստիկանական համակարգի զարգացման բազմաթիվ միջոցառումներ: Այս և նմանատիպ ծրագրերի կատարման գործընթացն ու արդյունքները, մեր համոզմամբ, չեն կարող խորհրդարանի համապատասխան մշտական հանձնաժողովի վերահսկողական տիրույթից դուրս գտնվել:

Վերոգրյալի առումով արտասահմանյան երկրների օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողությունն ընդգրկում է ոչ միայն օրենքների և պետական բյուջեի կատարման, այլև գործադիր իշխանության համապատասխան ոլորտի ողջ քաղաքականության նկատմամբ վերահսկողությունը⁶: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում պառլամենտի մշտական հանձնաժողովները վերահսկողություն են իրականացնում գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվող քաղաքականության, ֆինանսական ծախսերի և կառավարչական գործունեության նկատմամբ: Ընդ որում՝ վերահսկողության տիրույթում են գտնվում ոչ միայն գործադիր իշխանության բարձրագույն մարմինները, այլև դրանց ենթակայության ներքո գործող բոլոր գերատեսչություններն ու հիմնարկները⁷:

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ առաջարկում ենք Սահմանադրության 106-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

⁵ Ընդունվել է 30.07.2015թ., ուժի մեջ է մտել 13.08.2015թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2015.08.12/50(1139) Հոդ.735:
⁶ Տե՛ս, օրինակ՝ Yamamoto H. Tools for parliamentary oversight a comparative analysis 88 national parliaments, 2007, էջ 42 (<http://www.ipu.org/PDF/publications/oversight08-e.pdf>):
⁷ Տե՛ս Соломатина Е.А. Теоретико-правовые основы контроля законодательной власти за деятельностью правоохранительных органов (Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук). М., 2004, էջ 135 (<https://new-disser.ru>):

րդ հողվածում (1-ին մաս) ամրագրել իրավադրույթ առ այն, որ մշտական հանձնաժողովներն իրենց իրավասության շրջանակներում վերահսկողություն են իրականացնում գործադիր իշխանության համապատասխան մարմինների քաղաքականության, օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ու ֆինանսական ծախսերի կատարման նկատմամբ:

Գործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցի պարզաբանումը, թե մշտական հանձնաժողովն ինչ կառուցակարգերով և մեթոդներով պետք է իրականացնի գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական լիազորությունները: Այս առումով Կանոնակարգի 12-րդ հոդվածում (1-ին մաս) ամրագրված է, որ մշտական հանձնաժողովն իր իրավասության շրջանակում կարող է ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր: Նույն հոդվածում (3-րդ մաս) սահմանված է, որ մշտական հանձնաժողովը կարող է իր իրավասությանը վերապահված հարցերի նախնական քննարկման և դրա արդյունքները հանձնաժողով ներկայացնելու նպատակով իր որոշմամբ ստեղծել ենթահանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: Հարկ է, սակայն, նկատել, որ հինգերորդ գումարման (2012-2017թթ.) Ազգային ժողովի գործունեության ողջ ժամանակահատվածում չի ստեղծվել որևէ ենթահանձնաժողով⁸, թեև տվյալ ժամանակահատվածում գործող «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի⁹ 23-րդ հոդվածի (1-ին մաս) ուժով՝ մշտական հանձնաժողովները կարող էին իրենց կազմից ստեղծել ենթահանձնաժողովներ՝ սահմանելով դրանց խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը:

Ինչպես տեսնում ենք՝ Ազգային ժողովի

մշտական հանձնաժողովներն իրենց վերահսկողական լիազորությունների իրականացման նպատակով չեն օգտվել ենթահանձնաժողովներ ստեղծելու իրավական հնարավորությունից: Այս առումով մտահոգիչ է այն հանգամանքը, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում, ըստ էության, որդեգրվել է նախկին մոտեցումը, և ենթահանձնաժողովների ինստիտուտի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ չեն ներդրվել հայեցակարգային նոր մոտեցումներ:

Հարկ է նշել, որ մշտական հանձնաժողովների կազմում նման աշխատանքային մարմինների կազմավորումը նախատեսված է բազմաթիվ պետությունների պառլամենտական պրակտիկայում¹⁰: Այսպես՝ ենթահանձնաժողովների միջոցով խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից ուշադրության է արժանի հատկապես ԱՄՆ Կոնգրեսի կոմիտեների կողմից ձևավորվող ենթահանձնաժողովների գործունեությունը: Կոնգրեսը դեռևս 1973 թվականին ընդունել է «Ենթահանձնաժողովների իրավունքի մասին» բիլլը, որը մանրամասն կարգավորում է այս մարմինների գործունեությանը վերաբերող հարաբերությունները: Մասնավորապես՝ հիշյալ բիլլը սահմանում է, որ ենթահանձնաժողովները պետք է ունենան հստակ սահմանված իրավասություն, անմիջապես իրենց ենթակա աշխատակազմ և սեփական բյուջե¹¹: Նշված հանգամանքները նկատի ունենալով՝ որոշ գիտնականներ արտահայտել են դիրքորոշում առ այն, որ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում ենթահանձնաժողովներն իրենց գործունեության բնույթով գալիս են փոխարինելու հանձնաժողովներին՝ որպես կառավարման առավել արդյունավետ ձև¹²:

⁸ Տե՛ս <http://www.parliament.am/committees.php?lang=arm>:

⁹ Ընդունվել է 20.02.2002թ., ուժի մեջ է մտել 12.04.2002թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2002.04.12/12(187), հոդ. 230:

¹⁰ Օրինակ՝ Իտալիայի Պատգամավորների պալատում մշտական հանձնաժողովն իր անդամների կազմից ձևավորում է ենթահանձնաժողովներ, որոնք զբաղվում են տվյալ հանձնաժողովի իրավասության մեջ ներառվող կոնկրետ հարցերի ուսումնասիրությամբ, ինչի վերաբերյալ զեկույց են ներկայացնում վերջինիս (տե՛ս Rules of procedure of the Chamber of Deputies of Republic of Italy, Text approved by the Chamber of Deputies on 18 February 1971 (http://en.camera.it/4?scheda_informazioni=31):

¹¹ Տե՛ս Rendall B. Ripley Congress Process and Policy. The Ohio State University, 4-th ed., W.W. Norton & Company, New York, 1988, էջ 161 (<https://www.abebooks.com/9780393092509/Congress-Process-policy-Ripley-Randall-039309250X/plp>):

¹² Տե՛ս, օրինակ՝ Roger H. Davidson, “Subcommittee Government: New Channels for Policy Making” in The New Congress, ed. Thomas E. Mann and Norman J. Ornstein (Washington, D.C.: American Enterprise Institute, 1981), էջ 99-133, Steven Haeberle, “The Institutionalization of Subcommittees in the U.S. House of Representatives,” Journal of Politics 40 (1978), էջ 1054-1065, Christopher J. Deering and Steven S. Smith, “Subcommittees in Congress,” in Congress Reconsidered, 3d ed., ed. Lawrence C. Dodd and Bruce I. Oppenheimer (Washington, D.C.: CQ Press, 1985), էջ 189-210:

Նկատենք, որ մի շարք երկրների խորհրդարաններում գործում է նաև միացյալ ենթահանձնաժողովների ինստիտուտը: Մշտական հանձնաժողովներին այսպիսի ենթահանձնաժողովներ ձևավորելու իրավունք է վերապահվում այն դեպքում, երբ ենթահանձնաժողովի քննության առարկա կազմող հարցը վերաբերում է մի քանի հանձնաժողովի գործունեության ոլորտներին: Միացյալ ենթահանձնաժողովների ձևավորման պրակտիկան գործում է Գերմանիայում¹³, Շվեյցարիայում¹⁴ և այլ պետություններում:

Ինչ վերաբերում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքին՝ դա միացյալ ենթահանձնաժողովների ձևավորման վերաբերյալ որևէ դրույթ չի պարունակում: Մեր կարծիքով՝ մշտական հանձնաժողովների միջև համագործակցության ամրապնդման ու ընդլայնման, ինչպես նաև մշտական հանձնա-

ժողովների կողմից իրականացվող խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով Կանոնակարգով նպատակահարմար է նախատեսել միացյալ ենթահանձնաժողովների ստեղծման իրավական հնարավորությունը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ Կանոնակարգում առաջարկվող հիշյալ փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև հակասությունների վերացման շնորհիվ՝ գործադիր իշխանության գործունեության նկատմամբ մշտական հանձնաժողովների կողմից իրականացվող վերահսկողությունը կդրվի առավել պատշաճ իրավական հիմքերի վրա, կհստակեցվեն դրա շրջանակները, և կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ գործուն և արդյունավետ խորհրդարանական վերահսկողության համակարգ ձևավորելու համար:



¹³ Säu Rules of procedure of the German Bundestag, 30 April 2003 (<https://www.btg-bestellservice.de/pdf/80060000.pdf>):

¹⁴ Säu Federal Act of the Federal Assembly of the Swiss Confederation, 13 December 2002 (<https://www.admin.ch/opc/en/classified-compilation/20010664/index.html>):

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

«Հ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի տեսական և գործնական հիմնահարցերն, ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական իրավագիտության մեջ դարձել են հետազոտման առարկա բազմաթիվ անգամ: Եվրոպական իրավագիտությունում հանրաքվեի հետազոտությունն արդիական էր՝ պատմության նոր և նորագույն շրջանից սկսած, իսկ խորհրդային իրավագիտությունը միայն 1936 թ. Սահմանադրության ընդունումից հետո սկսեց քննարկման առարկա դարձնել հանրաքվեի՝ որպես ինստիտուտի տեսական հիմնահարցերը¹: Խորհրդային սահմանադրական պրակտիկան, սակայն, չունեց հանրաքվեի անցկացման փորձ: Հիմնահարցն արդիականացվեց միայն խորհրդային հանրապետությունների անկախացման շրջանում, երբ, բացի սահմանադրական ու օրենսդրական ամրագրու-

մից՝ հետխորհրդային տարածքում առաջ եկավ հանրաքվեների նշանակման և անցկացման փորձը: Հանրաքվեի ինստիտուտի գործնական կիրառումը խթանեց գիտական-տեսական հետաքրքրությունը դրա նկատմամբ:

Այսպիսով, հետխորհրդային շրջանում պրակտիկայի ուղղակի ազդեցության շնորհիվ արդիականացվեց նաև հանրաքվեի տեսությունը: Այդ պահից մինչև մեր օրերն իրականացվել են բազմաթիվ քաղաքագիտական և իրավագիտական հետազոտություններ՝ հանրաքվեի ինստիտուտին նվիրված, ինչպես ատենախոսական հետազոտությունների մակարդակով, այնպես էլ՝ մենագրական²: Այդ հետազոտություններում հանրաքվեի դիտարկվում է որպես նոր և նորագույն շրջանի սահմանադրական իրավական ինստիտուտ³: Գիտական հետազոտությունների ընդհանրացման միջոցով

¹ Տե՛ս, օրինակ՝ Օ непосредственном народном законодательстве в капиталистических странах. // Советское государство. 1937. № 1-2; Коток В.Ф. Проблемы развития непосредственной демократии в Советском государстве. М., 1965; Коток В.Ф. Референдум в системе социалистической демократии.– М., 1964; Маклаков В.В. Референдум в буржуазном государстве. // Правоведение. 1975. № 3; Маклаков В.В. Референдум во Французской Пятой республике. М., 1985.

² Տե՛ս Բաглай М.В., Туманов В.А. Референдум: малая энциклопедия конституционного права. М., 1998; Васильев В.И. Прямая демократия: опыт Калифорнии / Государство и право. 1994. № 1; Васильев В.И. Прямое голосование: опыт Калифорнии / Российская Федерация. 1993. № 2; Дмитриев Ю.А., Комарова В.В. Референдум в системе народовластия. М., 1994; Колибаб С.К. Законодательство зарубежных стран. Обзорная информация. Референдум в европейских странах (законодательная регламентация). М., 1991. Вып. 1; Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995; Комарова В.В. Референдумный процесс в Российской Федерации. М., 2004; Комарова В.В. Формы непосредственной демократии в России: Учебное пособие. М., 1998; Кривошеева Т.А. Модели референдума в России и Швейцарии: есть ли еще резервы для совершенствования? // Право: история, теория, практика. Сборник статей и материалов. Брянск. 2007. Вып. 11; Маклаков В.В. Референдум в странах – членах Европейского союза. М., 1997; Мальцев Г.В. Институт референдума в системе народовластия. // Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. М., 1999; Мамичев В.Н. Референдум в законодательстве зарубежных стран и России: историко-правовое исследование: дисс... канд. юрид. наук.– Ставрополь, 2000; Марченко М.Н. Референдум как форма непосредственной демократии. // Вестн. Моск. ун-та. Сер. 11. Право. 1991. № 6; Методология и методика подготовки и проведения референдумов. Научно-практическая конференция. Стенографический отчет. М., 1993; Пылин В.В. Избирательное и референдумное право Российской Федерации. Учебник. СПб., 2001; Референдум в европейских странах. Обзорная информация. М., 1991; Руденко В.Н. Прямая демократия: модели правления, конституционно-правовые институты. Екатеринбург, 2003; Троицкий С.В. Институт референдума в освободившихся странах в Южной Азии. М., 1990; Филиппова И.А. Конституционно-правовое регулирование референдума в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. Н. Новгород, 2000.

³ Տե՛ս Կомарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995; Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009.

հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի հետազոտողները մշակել են «հանրաքվեի ընդհանուր տեսություն» հասկացությունը, ինչպես նաև առաջ քաշել դրա գիտական հիմնախնդիրներն ու բանավեճային հարցերը: Այսպես՝ Վ.Վ. Կոմարովան ատենախոսության հետազոտման առարկա է դարձրել հանրաքվեի ինստիտուտի տեղը և դերը ժողովրդաիշխանության համակարգում և կենսագործման կառուցակարգում՝ ՌԴ-ի օրինակով: Այս գլխավոր ուղղությանը համահունչ՝ նա հետազոտության առարկայի շրջանակի մեջ ներառել է նաև հանրաքվեի կազմակերպման, անցկացման, դրա որոշումների կատարման նորմատիվ-իրավական կարգավորման կառուցակարգը⁴: Գ.Վ. Սինցովն իր դոկտորական ատենախոսության հետազոտման առարկայի շրջանակում ներառել է աշխարհի երկրների օրենսդրության մեջ հանրաքվեի ինստիտուտի ամրագրման և կենսագործման տեսական հարցերը, արդի վիճակը և զարգացման միտումները: Այդ հետազոտման առարկայով պայմանավորված՝ նա որոշել է իր ատենախոսության հիմնական խնդիրները, որոնք հանգում են հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի, դրա պատմության, կայացման պայմանների ու զարգացման, ընդհանուր տեսական դրույթների հետազոտմանը⁵: Հանրաքվեի տեսաբաններից միայն այս հեղինակն է փորձում ամփոփ ներկայացնել հանրաքվեի ինստիտուտի պատմությունը՝ համաշխարհային մասշտաբով⁶: Հայրենական իրավագիտության մեջ Ռ. Մարդանյանը քննարկման առարկա է դարձրել միայն հանրաքվեի՝ որպես սահմանադրական իրավական ինստիտուտի արդիական հիմնահարցերը՝ ընդհանրապես չշոշափելով հանրաքվեի՝ որպես ինստիտուտի պատմությունը⁷:

Այս և մնացած բոլոր հետազոտություններն աչքի են ընկնում որոշակի ընդհանրու-

թյուններով, մասնավորապես՝ դրանցում հանրաքվեն որպես հետազոտման օբյեկտ և առարկա դիտարկվել է նոր դարաշրջանի անմիջական ժողովրդաիշխանության ձև, ինչպես նաև սահմանադրական իրավական ինստիտուտ: Այս հիմքով հեղինակները քննարկման առարկա են դարձրել հանրաքվեի ընդհանուր տեսության հիմնահարցերը, մասնավորապես՝ հանրաքվեի ինստիտուտի էությունը և իրավաբանական բնույթը կամ հանրաքվե հասկացությունը և որպես ինստիտուտի տեսական հիմքերը: Հեղինակներից ոմանք, ընդհանրացնելով հանրաքվեի տեսաբանների մոտեցումները, հանրաքվեի ընդհանուր տեսության մեջ առանձնացնում են գիտական-բանավեճային հիմնախնդիրները հանրաքվեի հասկացության բնորոշման, իրավական բնույթի, նշանակության, գործառույթների, հանրաքվեների դասակարգման, հանրաքվեի, պլեբիսցիտի ու ժողովրդական հարցման հարաբերակցության, հանրաքվեի կենսագործման կառուցակարգերի ու պրակտիկայում կիրառման վերաբերյալ⁸:

Այսպիսով՝ հանրաքվեի տեսաբանների աշխատությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում հանրաքվեն դիտարկվում է որպես սահմանադրական իրավական ինստիտուտ և, որպես արդյուն համարվում է, որ սահմանադրական իրավունքի գիտության շատ հայեցակարգեր տարածվում են այդ ինստիտուտի վրա: Իրականում, անշուշտ, հանրաքվեն, լինելով իրավական ինստիտուտ, իրավունքի համակարգում տեղակայված է սահմանադրական իրավունքի ճյուղային տիրույթում: Սահմանադրական իրավունքը և դրա հիմնական աղբյուրը՝ Սահմանադրությունը, պատմության նոր և նորագույն շրջանի երևույթներ են: Ուստի հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի ծագումը և պատմությունը սահմանափակվում է հենց

⁴ St'u Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995.

⁵ St'u Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009.

⁶ St'u Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 9-10, 20-42:

⁷ St'u Մարդանյան Ռ. Հանրաքվեն որպես ժողովրդաիշխանության իրացման ձև Հայաստանի Հանրապետությունում, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 2017:

⁸ St'u Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 42:

այդ դարաշրջանով: Օրինակ՝ հանրաքվեի տեսաբաններից Գ.Վ. Սինցովը, հատուկ հետազոտության առարկա դարձնելով հանրաքվեի ինստիտուտի կայացման պատմությունը, հանգել է եզրակացության, որ. «Հանրաքվեն որպես ներպետական և միջպետական հիմնախնդիրների լուծմանը բնակչության անմիջական մասնակցության ձև հայտնի է վաղուց: Ընդունված է համարել, որ հանրաքվեի հայրենիքը համարվում է Շվեյցարիան»⁹: Նույն տեսակետին է նաև Վ.Ն. Մամիչևը, ըստ որի՝ Շվեյցարիայում «ժողովրդական օրենսդրությունը գոյություն ուներ մինչև միության առաջացումը»¹⁰: Գերմանացի հեղինակներից մեկը՝ Ֆ. Կուրտին, հիմնավորում է, որ արդեն XIII-XIV դդ. շվեյցարական հողերում «կարևորագույն հարցերի լուծումն աշխարհիկ ժողովները վերապահել էին իրենց, իսկ ոչ կարևորները՝ թողել խորհուրդներին»¹¹: Եվրոպայի մնացած պետություններում հանրաքվեի իրավական ինստիտուտը սահմանադրորեն ամրագրվեց բավականին ուշ՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ եվրոպական որոշ երկրների Սահմանադրությունները նախատեսեցին հանրաքվեին դիմելու հնարավորությունը՝ ներքին և արտաքին գործերը լուծելու հարցում¹²: XX դարի վերջին և XXI դարասկզբին աշխարհի երկրների օրենսդրորեն ամրագրված անմիջական ժողովրդավարության ինստիտուտների համակարգում հանրաքվեն ներկայացված է բավականին լայն կերպով: Որոշ երկրներում դրա անցկացումը սովորական և անընդհատ երևույթ է, մյուսներում, չնայած սահմանադրական ամրագրմանը, գործնականում երբեք չի կիրառվում¹³:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրաքվեն որպես ուսումնասիրության օբյեկտ մինչ այժմ դիտարկվել է որ-

պես սահմանադրական իրավունքի իրավական ինստիտուտ, և այդ մեկնակետով են ընտրվել նաև հանրաքվեի տեսության հետազոտական մյուս ուղղությունները, մասնավորապես՝ հանրաքվեն արդի ժողովրդափառության համակարգում (ընդհանրապես կամ որևէ երկրի օրինակով), հանրաքվեի մոդելներն արդի աշխարհում, տեղական հանրաքվեները որպես ժողովրդափառության ձև, ինչպես նաև այդ բոլոր ուղղություններով հանրաքվեի սահմանադրական-օրենսդրական կարգավորման հիմնահարցերը, թերությունները, զարգացման միտումները, հանրաքվեի կատարելագործման ուղղությունները: Հետազոտական ուղղությունների այս համատեքստում հանրաքվեի՝ որպես քաղաքական գործընթացի, կառավարման կամ ընդհանուր գործերի լուծման ձևի պատմությունն ինքնաբերաբար նեղացվել է՝ դրա սկիզբը տեսնելով նոր և նորագույն շրջանից: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս հասարակական կառավարման համակարգերի ավելի խորքային և լայն պատմագրական հետազոտությունները, հանրաքվեն որպես անմիջական կառավարման ձև ունի ժամանակագրական առումով շատ ավելի հարուստ պատմություն, քան նույնանուն սահմանադրական ինստիտուտը: Դա հաստատում է, որ իրական պատմության փաստերի և հանրաքվեի տեսության մեջ առկա է հակասություն: Հետևաբար՝ անհրաժեշտ է գտնել այդ հակասության լուծման գիտամեթոդական բանալին կամ կողմնորոշիչները: Առաջարկում ենք լուծման հետևյալ տեսամեթոդական ուղղությունը՝ իր կողմնորոշիչներով. հանրաքվե հասկացությունը, հանրաքվեի՝ որպես սոցիալական ինստիտուտի հասկացությունը և հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի հասկացությունը: Կարծում ենք՝ այդ երեք հասկացության կառուցումը և համադրու-

⁹ Sին Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 30: Գ.Վ. Սինցովն այս հարցում հետևել է եվրոպական իրավագիտության ավանդույթներին, հատկապես՝ գերմանացի Վ.Ֆ. Կուրտիի մեթոդաբանությանը՝ հանրաքվեի նախահայրենիք համարելով Շվեյցարիան:

¹⁰ Sին Мамичев В.Н. Референдум в законодательстве зарубежных стран и России: историко-правовое исследование. Ставрополь, 2000, էջ 37:

¹¹ Sին Курти В.Ф. История народного законодательства и демократии в Швейцарии: Пер. с. нем. Львовича Г.Ф., СПб., 1900, էջ 19:

¹² Sին Коток В.Ф. Референдум в системе социалистической демократии. М., 1964, էջ 20-22:

¹³ Sին Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 40:

մը հիմք կտան լուծելու վերը նշված հակասությունը, հանրաքվեի պատմությունը դարձնելու պատմական իրողություններին համահունչ:

Ներկայումս հանրաքվեի տեսության մեջ գոյություն ունեն հանրաքվեի լայնածավալ, գիտական մեթոդաբանությանը համապատասխան կառուցված բնորոշումներ¹⁴: Սակայն հետազոտության այս փուլում մեր խնդիրը հանրաքվեի տեսական հասկացության բնորոշման ճշգրտության հարցը չէ (դա հետազոտման առանձին հիմնահարց է), այլ ընդամենը՝ պարզ պատասխան, թե ինչ է հանրաքվեն որպես հասարակական-քաղաքական երևույթ: Այսինքն՝ այս դեպքում հանրաքվե հասկացությունն ունի օպերացիոնալ նշանակություն՝ գիտամարտավարական որոշակի խնդիրներ լուծելու համար: Այդպիսի հասկացությունը կառուցելու համար կարելի է հիմք վերցնել հանրաքվեի որևէ գիտական բնորոշում և պարզեցնելու միջոցով կառուցել հանրաքվեի՝ որպես հասարակական երևույթի բնութագիրը: Այսպես՝ հանրաքվեի տեսաբաններից մեկը կառուցել է դրա հետևյալ բնորոշումը. հանրաքվեն անմիջական ժողովրդավարության ձևերից մեկն է, որի բովանդակությունը համարվում է օրենքով սահմանված քանակով քաղաքացիների, օրենքով նախանշած տարածքում ուղղակի կամահայտնությունը հասարակական նշանակալի հարցերով՝ բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով չեն կարող դրվել հանրաքվեի, որը սահմանված է օրենքով նախատեսված դեպքերով կամ նշանակվում է համապատասխան սուբյեկտի նախաձեռնությամբ, ունի բարձրագույն իրավաբանական ուժ, պարտադիր է կատարման մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների համար կամ ունի խորհրդատվական բնույթ¹⁵: Այս բնորոշումն արտացոլում է հանրաքվեի սահմանադրական իրավական արդի բոլոր հատկանիշները և թույլ է տալիս բնութագրել հանրաքվեի ցանկացած հնարավոր տեսական տարբերակը, ընդ որում՝ ցանկացած երկրում: Սակայն սահմանադրական-իրավական այդ հատկանիշները վեր են հանված

հանրաքվեի՝ որպես արդեն կայացած, հասուն վիճակից ելնելով: Մեզ այս բնորոշման մեջ հետաքրքրում է հանրաքվեի բուն էությունը, այլ ոչ թե երկրորդական, թեկուզ և էական համարվող հատկանիշները, որոնք հերթականորեն դուրս գրելուց հետո կստանանք հանրաքվեի հետևյալ պարզ բնորոշումը. հանրաքվեն անմիջական ժողովրդաիշխանության կամ անմիջական (ոչ պետական) կառավարման ձևերից մեկն է, որի միջոցով իրավասուբյեկտ քաղաքացիների կորպուսը լուծում է հանրորեն նշանակալի կոնկրետ հարցերը: Այս պարզագույն բնորոշումը մեզ անհրաժեշտ է՝ հասկանալու, թե այդ իմաստով հանրաքվեն որպես երևույթ պատմության դր պահից է բնորոշ մարդկային հասարակությանը:

Սոցիալական կարգավորման (հատկապես՝ իրավական) և կառավարման համակարգերում ցանկացած երևույթ, ձև, կառուցակարգ գոյություն ունի նախ և առաջ որպես հասարակական հարաբերություն: Հասարակական կյանքը հասարակական հարաբերությունների ամբողջություն է: Հարաբերությունների հիմնական մասը, որպես կանոն, գոյություն է ունեցել և գոյություն ունի որպես նյութական, օբյեկտիվ իրողություններ՝ նորմատիվային կարգավորումից անկախ: Այսպիսով, հասարակական երևույթը՝ որպես առկա, գոյություն ունեցող հասարակական հարաբերություն, իրողություն, ինստիտուտ, կառույց և դա նորմատիվ (նաև իրավական) կարգավորման իդեալական մոդելն իրարից տարբերվող երևույթներ են: Հասարակական հարաբերությունները՝ որպես հասարակական ինստիտուտներ, կարող են գոյություն ունենալ հազարամյակներ, մինչդեռ դրանց նորմատիվ (հատկապես՝ իրավական) կարգավորումը կարող է ձևավորվել միայն որոշակի պահից կամ էլ ընդհանրապես ձեռք չբերել նորմատիվ կարգավորման ձև: Այսինքն՝ հասարակական կյանքի փորձը և իրական պրակտիկան ունեն շատ ավելի հարուստ և ժամանակագրական առումով երկար պատմություն, քան դրանք կարգավորող իրավական նորմերը, ո-

¹⁴ Տե՛ս, օրինակ՝ Մարդանյան Ռ. Հանրաքվեն որպես ժողովրդաիշխանության իրացման ձև Հայաստանի Հանրապետությունում, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2017, էջ 8; Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, էջ 14-42:

¹⁵ Տե՛ս Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 70:

րոնք սահմանվում են հասարակության գոյության որոշակի պահից միայն: Այդ իսկ պատճառով հասարակական ինստիտուտի և իրավական ինստիտուտի պատմագրությունները կարող են նաև չհամընկնել: Եթե իրավահարաբերությունների տեսության այս մոտեցումը տեղայնացնենք հանրաքվեի նկատմամբ, ապա կստացվի, որ հանրաքվեն՝ որպես իրավասուբյեկտ քաղաքացիների կողմից հանրային նշանակության հարցերի լուծման ձև, գոյություն ունի հազարամյակներ շարունակ, մինչդեռ հանրաքվեի սահմանադրական իրավական ինստիտուտն ունի ընդամենը երկդարյա պատմություն՝ որոշ բացառություններով հանդերձ: Այս հանգամանքը հաստատվում է նաև իրավահարաբերությունների ընդհանուր տեսության, ինչպես նաև սահմանադրական իրավահարաբերությունների տեսության դրույթներով. «Սահմանադրական իրավահարաբերությունն իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություն է... Ոչ բոլոր հասարակական հարաբերություններն են, որ կարգավորվում են իրավական նորմերի օգնությամբ... Իրավունքի օգնությանը դիմում են միայն այն դեպքում, եթե կարգավորվող հասարակական հարաբերություններն ունենում են մեծ հասարակական նշանակություն կամ չկարգավորման դեպքում ունակ են ծնելու բախումներ այդ հարաբերությունների մասնակիցների միջև»¹⁶: Սահմանադրական իրավունքի տեսության այս դրույթներից բխում է, որ իրական, կայացած հասարակական հարաբերությունները միայն որոշակի պահից են ձեռք բերում նորմատիվ-իրավական կարգավորման ձև: Այդ ձևի առկայությամբ իրավունքի համակարգում հայտնվում է համապատասխան իրավական ինստիտուտը¹⁷: Սահմանադրական իրավական ինստիտուտում կարող են միավորված լինել զանազան տեսակի իրավական նորմեր,

դրա մեջ կարող են ներառված լինել Սահմանադրության, ընթացիկ օրենսդրության, ինչպես նաև տարածքային գործողությամբ տարբերվող նորմեր¹⁸:

Այսպիսով՝ իրավունքի ինստիտուտը որպես երևույթ գոյություն ունի իրավական ձևում նորմատիվ իրավական կարգավորման առկայության դեպքում, որի միջոցը նորմատիվ իրավական ակտն է: Կարգավորիչ նորմատիվ ակտի բացակայությունը բացառում է համապատասխան իրավական ինստիտուտի առկայությունը, սակայն ոչ իրականում գոյություն ունեցող, կենսական հասարակական հարաբերությունը, որը կարող է չունենալ սահմանադրական կամ այլ ճյուղային իրավական կարգավորում: Տեսամեթոդաբանական այս կողմնորոշիչներից ելնելով՝ կարող ենք կայացնել հետևյալ եզրակացությունները:

Հանրաքվեն՝ որպես հասարակական նշանակություն ունեցող հարցերի լուծում իրավասուբյեկտ քաղաքացիների կողմից, գոյություն է ունեցել և ունի մի քանի մակարդակում՝ որպես հասարակական ինստիտուտ, որպես սահմանադրական իրավական ինստիտուտ: Որպես սահմանադրական իրավական ինստիտուտ՝ հանրաքվեի պատմությունը սկիզբ է առնում սահմանադրական-օրենսդրական նորմատիվ կարգավորման պահից: Այդ պահը դարաշրջանային կտրվածքով համընկնում է պատմության նոր շրջանին, երբ հանրաքվեի իրավական ամրագրումը, հատկապես՝ նորագույն ժամանակաշրջանում, ծավալվում ու զարգանում է: Սակայն կոնկրետ պետության և հասարակության դեպքում հանրաքվեի իրավական ինստիտուտի պատմությունն ունի ժամանակագրական սկզբի առանձնահատկություններ՝ այդ երկրի պատմաքաղաքական զարգացման առանձնահատկություններով պայմանավորված: Եթե Շվեյցարիայի դեպքում այդ իրավական ինստի-

¹⁶ Տե՛ս Авдеенкова М.П., Дмитриев Ю.А., Основы теории конституционного права. М., 2005, էջ 56:

¹⁷ Իրավական ինստիտուտն իրավական նորմերի համեմատաբար ոչ մեծ, կայուն խումբ է, որն ունի ներքին միասնություն և կարգավորում է հասարակական հարաբերությունների որոշակի տեսակի (իրավունքի ճյուղի) որևէ կողմ, տարատեսակ (տե՛ս Теория государства и права. Курс лекций. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., 1999, էջ 298): Իրավունքի ինստիտուտի մեկ այլ հասկացության համաձայն՝ դա իրավունքի մեկ կամ մի քանի ճյուղում օբյեկտիվորեն առանձնացված, փոխկապված իրավական նորմերի ամբողջություն է, որը կարգավորում է տեսակային հասարակական հարաբերությունների ոչ մեծ խումբ (տե՛ս Общая теория государства и права, Академический курс в трех томах, под ред. М.Н. Марченко, М., 2007, էջ 575):

¹⁸ Տե՛ս Авдеенкова М.П., Дмитриев Ю.А., Основы теории конституционного права. М., 2005, էջ 107:

տուտն ունի հարյուրամյակների պատմություն, ապա Հայաստանում դրա պատմությունը հաշվում է ընդամենը երկու և կես տասնամյակ:

Այսպիսի եզրակացությունն ուղղորդիչ նշանակություն ունի հանրաքվեի տեսական և պատմական հետազա հետազոտության համար: Այսինքն, թոթափելով հանրաքվեի՝ որպես իրավունքի ինստիտուտի տեսությանը և պատմության բնորոշ սահմանափակվածությունը, անհրաժեշտ է հանրաքվեի պատմության հետազոտությունն սկսել ոչ թե հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի կայացման պահից, այլ՝ մարդկության վաղընջական պատմության շրջանից, երբ լոկալ հասարակություններն անմիջական (պոտեստար) կառավարման համակարգից անցում կատարեցին զուտ պետական-բյուրոկրատական կամ խառը կառավարման

համակարգերին: Նման հայեցակարգային մոտեցումը ենթադրում է հիմնահարցի պատմության ուսումնասիրությունն սկսել կառավարման և հանրային գործերի լուծման անմիջական համակարգից՝ դեռևս պետականության առաջացման պատմական դարաշրջանից, իսկ այնուհետև հետևել անմիջական կառավարումից խառը կամ միջնորդավորված-պետական կառավարման անցման պատմական գործընթացներին՝ նաև Հայաստանի օրինակով՝ պետականության առաջացման պահից սկսած, մինչև քրիստոնեության ընդունումը: Հետազոտական խնդիր է դառնում նաև հայ եկեղեցու և կանոնական իրավունքի ձևավորման ու զարգացման գործընթացում հարցերի լուծման անմիջական ձևերի կիրառման պատմության ուսումնասիրությունը:



ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական, Հայ-ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Սույն գիտական հոդվածում հեղինակը մանրամասն ուսումնասիրության է ենթարկել պատժի նպատակների տեսությունները, ինչպես նաև դրանց պատմական զարգացման փուլերը: Հեղինակը նշել է, որ միայն պատժի նպատակների պատմական զարգացման ուսումնասիրությամբ կարելի է կատարել հիմնավորված դատողություններ պատժի էության և ապագա զարգացման փուլերի վերաբերյալ: Նա նշել է, որ պատիժը, ինչպես նաև դրա նպատակները, քրեական իրավունքի հիմնարար և առանցքային հարցերից են, որոնց տեսական և գործնական հիմնախնդիրներն ուսումնասիրվել են ինչպես բազմաթիվ իրավաբան-գիտնականների, այնպես էլ փիլիսոփաների կողմից:

Հեղինակը փաստում է, որ պատժի նպատակների վերաբերյալ իրականացված թե՛ փիլիսոփայական և թե՛ իրավաբանական ուսումնասիրություններն ունեն խոր արմատներ, որոնք կարևոր նշանակություն ունեն պատժի և դրա նպատակների կայացման հարցում: Ընդ որում, ըստ հեղինակի՝ պատժի տեսության զարգացման փուլերի տարանջատման հիմք են ծառայում պատժի նպատակների վերաբերյալ ձևավորված մոտեցումները: Որպես արդյունք՝ պատժի նպատակների վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունները պայմանականորեն բաժանվել են երկու հիմնական ուղղությունների՝ բացարձակ և հարաբերական, որոնք մանրամասն քննարկվել են հեղինակի կողմից:

Հոդվածի շրջանակում հեղինակն ուսումնասիրել է նաև պատժի նպատակների զարգացման գործընթացը Հայաստանի Հայաստանում:

Բանալի բառեր. քրեական պատիժ, պատժի նպատակներ, սոցիալական արդարության վերականգնում, հանցագործությունների կանխում, հանցանք կատարած անձի ուղղում:

ПЕТРОС МАРТИРОСЯН

Заместитель прокурора административных регионов Аван и Нор Норк, советник юстиции третьего класса, соискатель кафедры уголовного права и уголовного судопроизводства Российско-армянского университета

ОСНОВНЫЕ ТЕОРИИ ЦЕЛЕЙ УГОЛОВНОГО НАКАЗАНИЯ (ИСТОРИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

Автор этой статьи подробно исследует теории целей наказания, а также их исторические этапы развития. Автор отмечает, что только изучением исторического развития целей наказания можно рассуждать об их сущности и этапах последующего развития. Он считает, что наказание, а также его цели являются основополагающими и главными вопросами уголовного права, теоретические и практические проблемы которых были рассмотрены как многими правоведами-учеными, так и философами.

Автор утверждает, что и философские, и правовые исследования целей наказания имеют глубокие корни, которые играют важную роль в развитии наказания и осуществления его целей. При этом, по мнению автора, основой разделения этапов развития теории наказания являются сформированные подходы к этим целям. В результате, существующие теории целей наказания условно разделены на две основные области – абсолютные и относительные, которые подробно обсуждаются автором.

В статье автор изучил также процесс развития целей наказания в Республике Армения.

Ключевые слова: уголовное наказание, цели наказания, восстановление социальной справедливости, предупреждение преступлений, исправление человека, совершившего преступление.

PETROS MARTIROSYAN

Deputy Public prosecutor of Administrative Regions
 Avan and Nor Nork, Judicial Counsellor 3rd Class,
 Applicant of a Science Degree of Criminal Law and
 Criminal Proceedings Department of Russian-Armenian University

**THE BASIC THEORIES OF CRIMINAL PUNISHMENT PURPOSES
 (HISTORICAL AND LEGAL ANALYSIS)**

The author of this article circumstantially explores the theory of punishment purposes, as well as their historical stages of development. The author notes that only by studying the historical development of punishment purposes one can talk about their nature and the stages of subsequent development. He believes that the punishment, as well as its goals, are the fundamental and main issues of criminal law, the theoretical and practical problems of which have been considered by many legal scholars and philosophers.

The author claims that both philosophical and legal studies of punishment purposes have deep roots, which play an important role in the development of punishment and the fulfillment of its goals. At the same time, according to the author, the basis for the stage separation in the development of punishment theory are the formed approaches to these goals. As a result, existing theories of punishment purposes are conditionally divided into two main areas-absolute and relative, which are discussed circumstantially by the author.

In the article the author also studies the process of development of punishment purposes in the Republic of Armenia.

Keywords: criminal punishment, the purposes of punishment, restoration of social justice, prevention of crimes, correction of the person who has committed the crime.

* * *

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՅԱՆ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների
 դատախազության դատախազ,
 ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
 իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԳՈՌ ԱԼՈՅԱՆ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական
 շրջանների դատախազության դատախազ,
 իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՈՐՈՇ ԵՎ ԱՍՏՈՒՄՆԵՐ ՊԱՏԻՃ ԾԱՆՐԱՑՆՈՂ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ
 ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սույն հոդվածը վերաբերում է պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներին, ինչպես նաև անձը բնութագրող տվյալներին, որոնք, ըստ էության, համարվում են այնպիսի ելակետային և ուղղորդող ցուցիչներ, որոնք անհրաժեշտ են անձի նկատմամբ արդարացի, կատարված արարքին համարժեք պատիժ նշանակելու համար: Ծանրացնող և մեղմացնող հանգամանքներն ազդում են ոչ միայն պատժի տեսակի ընտրության կամ պատժաչափի վրա, այլև անհրաժեշտ ու կողմնորոշիչ պայմաններ են պատիժը պայմանականորեն չկիրառելու, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու և այլ քրեաիրավական ինստիտուտների վրա: Քննարկվող հոդվածում անդրադարձ է կատարվել դատարանների ու քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից այդ հանգամանքների կիրառման վերաբերյալ առավել հաճախ հանդիպող մի շարք դեպքերի՝ ցույց տալու համար պատժողական քաղաքականության վրա դրանց ազդեցության աստիճանը, գործի փաստական տվյալների առանձնահատկություններով պայմանավորված՝ կիրառման պայմանները, նպատակահարմարությունը և այլն: Հոդվածում մատնանշվել ու վերլուծության են ենթարկվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված մի շարք նախադեպային որոշումներ, որոնք վերաբերում են պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներին, անձը բնութագրող տվյալներին, ելնելով գործի փաստական հանգամանքներից՝ տարբեր իրավիճակներում դրանց կիրառման նպատակահարմարությանը և նախապայմաններին:

Հոդվածում անդրադարձ է կատարվել նաև պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրմանը, որպիսի հանգամանքները թեպետ առանձնահատուկ են և բնորոշ կոնկրետ իրավական մշակույթ ունեցող տարբեր երկրների, այնուամենայնիվ, գիտա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 100 2017

տեսական նկատառումներից ելնելով՝ բավականին հետաքրքիր են և քննարկման ու ուշադրության արժանի:

Բանալի բառեր. պատիժ, մեղմացնող հանգամանք, ծանրացնող հանգամանք, բնութագրող տվյալներ, դատվածություն, առաջին անգամ հանցանք կատարել:

ГРИГОР АМИРЯН

Прокурор административных округов
Арабкира и Канакер-Зейтуна,
аспирант Института философии,
социологии и права НАН РА

ГОР АЛОЯН

Прокурор административных округов
Арабкира и Канакер-Зейтуна,
кандидат юридических наук

**НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ОТНОСИТЕЛЬНО ПРИМЕНЕНИЯ ОБСТОЯТЕЛЬСТВ,
ОТЯГЧАЮЩИХ И СМЯГЧАЮЩИХ НАКАЗАНИЕ**

В данной статье рассматриваются обстоятельства, смягчающие и отягчающие уголовную ответственность и наказание, а также данные, характеризующие личность, которые, в сущности, считаются основными и ведущими факторами, необходимыми для назначения в отношении личности адекватной меры наказания, соразмерного содеянному. Отягчающие и смягчающие обстоятельства не только влияют на избрание меры и срока наказания, но также являются необходимыми условиями, принимаемыми во внимание при неприменении условного осуждения, назначении более мягкого наказания, чем предусмотрено законом, а также в других институтах системы уголовного правосудия. В настоящей статье рассматривается ряд наиболее часто встречающихся случаев применения названных обстоятельств со стороны суда и органов уголовного преследования, с целью выявить степень их влияния на политику в сфере назначения наказания, а также целесообразность и условия их применения, в зависимости от особенностей фактических данных по делу. В статье был выделен и подвергнут анализу ряд прецедентных решений Кассационного суда РА относительно смягчающих и отягчающих обстоятельств, характеризующих личность данных, а также предпосылок и целесообразности их применения в различных ситуациях, обусловленных фактическими обстоятельствами по делу.

В статье также обобщается международный опыт по обстоятельствам, смягчающим и отягчающим наказание. И несмотря на то, что такие обстоятельства имеют свои характерные особенности и присущи разным странам со своей конкретной правовой культурой, они достойны внимания и представляют особый интерес с научно-теоретической точки зрения.

Ключевые слова: наказание, смягчающие обстоятельства, отягчающие обстоятельства, характеризующие данные, судимость, впервые совершенное преступление.

GRIGOR AMIRYAN

Prosecutor of Arabkir and Kanaker-Zeytun administrative districts,
PhD student at the Institut of Philosophy,
Sociology and Law of the RA National Academy of Sciences

GOR ALOYAN

Prosecutor of Arabkir and
Kanakaner-Zeytun administrative districts,
PHD (law)

**SOME CONSIDERATIONS REGARDING THE APPLICATION OF THE AGGRAVATING AND
MITIGATING CIRCUMSTANCES OF PUNISHMENT**

This article is dedicated to the circumstances mitigating or aggravating liability and punishment, as well as the data characterizing the individual, which are, in fact, considered to be primordial and leading factors, necessary for imposing an adequate punishment, proportionate to the crime committed. Aggravating and mitigating circumstances do not only affect the form and duration of the punishment, but are also the necessary conditions, taken into consideration in case of non-application of conditional sentence, imposition of a more lenient sentence than prescribed by law as well as in other criminal justice institutions. The given article also refers to the study of a number of most frequent cases of application of mentioned circumstances by courts and criminal prosecution authorities, aimed at revealing the extent of their impact on the punitive policy, as well as the conditions and appropriateness of their application depending on the factual particularities of the case. The article included the identification and analysis of a number of case decisions of the RA Court of Cassation regarding the mitigating and aggravating circumstances, the data characterizing the individual, as well as the preconditions and appropriateness of their application in certain situations, based on the factual circumstances of given cases.

The article also summarizes the international experience on circumstances mitigating and aggravating the punishment. In spite of the fact that such circumstances have their own peculiarities and are typical of various countries with their specific legal culture, they are worthy of attention and are of particular interest from the scientific and theoretical point of view.

Keywords: punishment, mitigating circumstances, aggravating circumstances, characterizing data, conviction, first offense.

* * *

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՂԱԴԻՂՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հանրաքվեի ընդհանուր տեսության ու պատմության վերլուծության հիման վրա հեղինակը հանրաքվեի դիտարկում է որպես ոչ միայն սահմանադրական իրավական, այլ նաև հասարակական ինստիտուտ: Այդ հիմքով առաջ է քաշվում գիտական թեզ այն մասին, որ հանրաքվեի ունի ավելի հին պատմություն, քան համանուն սահմանադրական իրավական ինստիտուտը: Այդ թեզն առաջադրում է նոր հետազոտական խնդիր՝ ուսումնասիրել և վեր հանել հանրաքվեի իրական պատմությունը:

Բանալի բառեր. հանրաքվե, հասարակական ինստիտուտ, իրավական ինստիտուտ, հանրաքվեի տեսություն, հանրաքվեի պատմություն, ժողովրդաիշխանություն, օպերացիոնալ հասկացություն:

ЛИЛИТ МЕЛИКСЕТЯН

Аспирант академии государственного управления РА

СОЦИАЛЬНЫЕ И КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ СОСТАВЛЯЮЩИЕ РЕФЕРЕНДУМА В КОНТЕКСТЕ ИСТОРИИ ПРАВОВОЙ КУЛЬТУРЫ

На основе анализа проблем общей теории и истории референдума, автор рассматривает референдум не только как конституционно-правовой, а прежде всего как социальный институт. На этой основе выдвигается научный тезис о том, что у референдума более древняя история, чем у данного конституционно-правового института. Данный тезис позволяет выдвигать новую исследовательскую задачу: изучение не только реальной, но и нормативно-правовой истории референдума.

Ключевые слова: референдум, общественный институт, правовой институт, теория референдума, история референдума, народовластие, операциональное понятие.

LILIT MELIKSETYAN

Phd student.

Legal Administration Academy of the Republic of Armenia

SOCIAL AND CONSTITUTIONAL COMPONENTS OF REFERENDUM IN THE CONTEXT OF HISTORY OF LEGAL CULTURE

By analysing general theory and history of referendum the author observes it not only as a constitutional institution, but also as a social institution. A scientific thesis is originated basing on the fact that the referendum has older history than the same as a constitutional institution. This thesis interposes a new exploratory research for studying not only real but also normative legal history of referendums.

Keywords: referendum, social institution, legal institution, theory of referendum, history of referendum, democracy, operational concept.

ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավոր,
Ռուս-հայկական համալսարանի սահմանադրական և
մունիցիպալ իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
Ռուս-հայկական համալսարանի դոկտորանտ

ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածում հանգամանորեն վերլուծության են ենթարկվել դատական վերահսկողության էությունը և անհրաժեշտությունը՝ իրավունքի գերակայության սկզբունքի համտեքստում: Այնուհետև հեղինակը բացահայտել է իրավունքի գերակայության սկզբունքի էությունը և բովանդակությունը, ծագման ու զարգացման հիմնական ուղենիշները և այս համատեքստում դատական վերահսկողության անհրաժեշտությունը՝ որպես իրավական պետության կայացման նախադրյալներից մեկը:

Բանալի բառեր. իրավունքի վերահսկողություն, դատական վերահսկողություն, վարչական արդարադատություն, սահմանադրականություն, իրավական դոկտրին, ֆորմալ հավասարություն:

РАФИК ХАНДАНЯН

Судья Административного суда Республики Армения,
старший преподаватель кафедры конституционного и муниципального права
Российско-Армянского университета,
кандидат юридических наук,
докторант Российско-Армянского университета

СУДЕБНЫЙ НАДЗОР В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ВЕРХОВЕНСТВА ПРАВА

В статье подвергнуты подробному анализу суть и необходимость судебного надзора в контексте верховенства права. Далее автор раскрыл суть и содержание принципа верховенства права, основные вехи его возникновения и развития и необходимость в этом контексте судебного контроля, как одной из предпосылок в становлении правового государства,

Ключевые слова: правовой контроль, судебный надзор, административное правосудие, конституционность, правовая доктрина, формальное равенство.

RAFIK KHANDANYAN

Judge of Administrative Court of Republic of Armenia,
Senior lecturer in the Department of Constitutional and Municipal Law
in Russian-Armenian University,
PhD of Law,
Doctoral Candidate of Russian-Armenian University

JUDICIAL CONTROL IN THE CONTEXT OF RULE OF LAW

The article analyzed in detail the essence and necessity of judicial control in the context of Rule of Law. Then the author explained the essence and content of Rule of Law, milestones of origin and development of the latter, and the necessity of judicial control in this context as one of the prerequisites in the establishment of legal system of the state.

Keywords: control over the law, judicial control, administrative justice, constitutionality, legal doctorate, formal equality.

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՉԻՖԼԻԿՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ**

Տվյալ հոդվածը նվիրված է զրպարտության էության բացահայտմանը: Դրա շրջանակներում հեղինակի կողմից ուսումնասիրվել են զրպարտության քաղաքացիաիրավական կարգավորման առանձնահատկությունները, ինչի շնորհիվ հեղինակը հանգել է այն եզրակացության, որ զրպարտությունը չի կարող դիտարկվել միայն իրավախախտի դիտավորության տեսանկյունից: Բացի այդ՝ առաջարկվել է օրենսդրորեն նախատեսել այնպիսի իրավախախտում, ինչպիսին է իրականությանը չհամաատասխանող տեղեկությունների տարածումը: Հեղինակի կողմից ընգծվել է նաև որոշ սուբյեկտների զրպարտության համար նախատեսված քրեական պատասխանատվության անպատակահարմարությունը:

Բանալի բառեր. զրպարտություն, մեղք, դիտավորություն, անզուշտություն, արատավորող, քրեական պատասխանատվություն, իրավախախտում:

АРМЕНИИ ЧИФЛИКЯН

Аспирант кафедры гражданского права ЕГУ

КЛЕВЕТА ПО ГРАЖДАНСКОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Данная статья посвящена выявлению сути клеветы. В рамках данной статьи были исследованы особенности гражданско-правового регулирования клеветы, в результате чего автор пришел к выводу, что клевета не может рассматриваться только с точки зрения умысла правонарушителя. Кроме того, было предложено законодательно предусмотреть правонарушение, которое выражается в распространении сведений, не соответствующих действительности. Автором была подчеркнута также нецелесообразность уголовной ответственности за клевету некоторых субъектов.

Ключевые слова: клевета, вина, умысел, неосторожность, порочащий, уголовная ответственность, правонарушение.

ARMENIHI CHIFLIKYAN

PhD student of the Yerevan State University Department of Civil Law

LIBEL ACCORDING TO THE CIVIL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

This article is dedicated to exposing the essence of the libel. In the article the research on the subtleties of the civil-law regulation of libel was carried out, resulting in the author's conclusion that libel cannot be considered only from the point of view of delinquent's intent. Besides it was proposed to stipulate legislatively the delict, which manifests itself in the dissemination of the false statements. The author emphasized the inappropriateness of criminal liability for defamation of certain subjects.

Keywords: libel, guilt, intent, negligence, defaming, criminal liability, delict.

ՏԻԳՐԱՆ ՆԱԴԴԱԼՅԱՆ

ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում միջազգային փորձի ուսումնասիրության լույսի ներքո ներկայացվում են մշտական հանձնաժողովների կողմից իրականացվող խորհրդարանական վերահսկողությանն առնչվող մի շարք արդիական հիմնահարցեր: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվում մշտական հանձնաժողովների կողմից իրականացվող խորհրդարանական վերահսկողության շրջանակներին, ենթահանձնաժողովների ինստիտուտի զարգացման հեռանկարներին, ինչպես նաև նշված մարմինների վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացման իրավական երաշխիքներին ու կառուցակարգերին:

Իրականացված վերլուծության հիման վրա հիմնավորվում է վերոնշյալ հարցերի վերաբերյալ ինչպես ՀՀ Սահմանադրությունում, այնպես էլ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. մշտական հանձնաժողովներ, խորհրդարանական վերահսկողության շրջանակներ, օրենքների և պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն, ենթահանձնաժողովներ, միացյալ ենթահանձնաժողովներ:

ТИГРАН НАГДАЛЯН

Аспирант кафедры Конституционного права ЕГУ

ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ КОНТРОЛЬНЫХ ПОЛНОМОЧИЙ ПОСТОЯННЫХ КОМИССИЙ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РА

В статье, в свете исследования международного опыта, представлен ряд актуальных вопросов, касающихся парламентского контроля постоянных комиссий. В частности, внимание уделено рамкам парламентского контроля постоянных комиссий, перспективам развития института подкомиссий, а также правовым гарантиям и механизмам эффективной реализации полномочий контроля этих органов.

На основе анализа данных вопросов, обосновывается необходимость внесения ряда изменений и дополнений как в Конституцию РА, так и в конституционный закон РА “Регламент Национального Собрания”.

Ключевые слова: постоянные комиссии, рамки парламентского контроля, контроль над имплементацией законов и государственного бюджета, подкомиссии, совместные подкомиссии.

TIGRAN NAGHDALYAN

Post-graduate student of the YSU Chair of Constitutional Law

ISSUES ON IMPROVING OVERSIGHT POWERS OF THE RA NATIONAL ASSEMBLY STANDING COMMITTEES

In the context of international best practices, the article presents some of the topical issues related to the parliamentary oversight of standing committees. In particular, reference is made to the scope of parliamentary oversight of standing committees, to the prospects of developing the institute of subcommittees, as well as to the legal guarantees and mechanisms of effective exercise of oversight powers by the mentioned bodies.

Based on the implemented analysis and in connection to the issues presented above, legal reasoning is provided over necessity of making a number of changes and amendments in the RA Constitution, as well as in the RA Constitutional law on the “Rules of Procedure of the National Assembly”.

Keywords: standing committees, scope of parliamentary oversight, oversight over implementation of laws and state budget, subcommittees, joint subcommittees.

ՀՀ ՂԱՏԱՆԻՍՏՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: